



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
77-17

1906/p.

13 APR 2011

ՍԱՍՈՒՆՑԻ

ՅՈՎՆԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՊԻԿ

Ա Ա Գ Ա Բ Ե Գ

Ք Ե Ր Ե Լ Ե Ե Ց Ա .

891.99

Հ-17

ԹԻՖԼԻՍ 1906
ՀԵՂՄԱՆ Մազարեան փող. 15.

(142)

831.89

Բ-17

9

ՊԱՍՈՒՆՑԻ

ՅՈՎՆԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԻ

Կ ա զ մ ե ց

Ք Ա Մ Ե Ց Ա Յ Ա

ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թիֆլիս 1906
Տպարան „ՀԵՐՄԵՆԻՎ“ Մադարեան փող. 15.
(142)



29.08.2013

60363

ՇԻՇՄԱՆԵԱՆՑ-ԾԵՐԵՆՑԻ ՎԱՂԱՄԵՌԻԿ ԴՍՏԵՐ,
ՄԵԼԻՔ ԱԶԱՐԵԱՆՑ ՏԻԿ. ԹԱԳՈՒՀՅՈՒ
ՑԻՇԱՏԱԿԻՆ

Զեզ, որ մանուկ օրից ձեր հօր միակ ու-
րախութիւնն ու մխիթարութիւնը լինելով ոգես-
ուել էք նրան Վոսփորի ափին «Թորոս Լեւնին»
գրելու, վերջն էլ նշենու պէս ծաղկած նրա ա-
լմոր զլուխը գուրզուրելով յորդորեցիք Թիֆլի-
զում «Թ. դարու Երկրութիւն» գրելու, որ մեր տա-
ռապեալ ազգի մէջ Սասունցի Յովինանի նմաններ
շատ առաջ գան, ձեզ, ձեր լուսաւոր յիշատակին
եմ նուիրում այս փոքր աշխատանքը:

Քամալեանց Ա.



6241

39

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայ վիալագիրների մէջ հանդ. Ծերենցը իբրև տաղանդաւոր գրող իւր պատկառելի տեղն ունի: Շըստով պատմական վէպ գրելը նրանով սկսուց մեր գրականութեան մէջ, եթէ չը յիշենք նրանից առաջ եղած մի քանի աննշան փորձերը:

Բայց ինչու նրա ընտիր երկերը հեշտութեամբ չեն տարածում ժողովրդի մէջ, օրինակ ինչու, 1879 թ. լոյս տեսած նրա վերջին վէպը մինչև օրս երկրորդ ապագրութիւն չունի: Ինչի՞ն վերագրել այդ անուշաղը ուղիւնը, արդեօք նիւթին: Ո՞չ, նիւթը հայ ժողովրդի ապատամբական երկունքն է ճնշող արարների ու յոյների դէմ, որը Ծերենցի լեզուով կոչւում է «հայրենի հառաջանքի ձայն»: Երեկի ասող կըլինի. «հերոսները անհետաքրքիր են»: Ո՞չ, ընդհակառակ՝ նրա վէպի գըլխաւոր հերոս Յովսանը այնքան յեղափոխիչ անձնաւուրութիւն է, որին ներկայ հրատապ օրերին ոչ միայն պէտք է ճանաչել ու հետը ազգային ցաւերի վրայ երկար զրոյց անել, այլ և պաշտել իբրև իդէալական հայի: Եւ իրօք—միթէ կարելի՞ է այդ ժողովրդական ըմբռուտ հոգուն, այդ ազնիւ Սասունցուն չը հաւանել, չը սիրել:

Ծերենցի գրքերի չը տարածուելու գլխաւոր պատճառը, ըստ իս, արևմտեան բարբառն է, որին կովկասահայերը գեռ այնքան ընտելացած չեն: Իբրև Ծերենցի ջերմ համակրողներից մէկը տարիներ առաջ փափել եմ, որ հայ ժողովրդից շատ կարդացուի ու ար-

ժանապէս գնահատուի այդ ազգային հոգով ու շնչով գրողը: Դրա համար հարկաւոր էր, որ նրա երկերը մատչելի, դիւրըմբունելի դառնային ժողովրդի համար: Իբրև փորձ ընտրեցի նրա երեք նշանաւոր երկերից «Երկունք թ. դարու» 468 երեսանոց վէպը, ամեն խընամք գործ գրի լեզուն հարթելու և բովանդակութիւնից այն քաղելու, ինչ որ աւելի կարևոր էր: Այդպիսով հիւսեցի ներկայ «Սասունցի Յովսանը», և տալիս եմ հայ ժողովրդի ընթերցասէրներին. թող կարգան ու ողորմի ասեն Շիշմանեանց — Ծերենցին, որ հառաչելու փոխանակ հասկացաւ Յովսանի բերանով աղգային ինքնապաշտպանութեան կոչ անել:

1905 թ. նոյ. Թիֆլիդ

Ք. Ս.

ոմանք զէնք ունէին, ոմանք անդէն էին։ Դրանք դաշտեցի մարդիկ էին։ շղթայից, գերութիւնից ազատուած։ ապաստանել էին լեառը։ Ահա տէրտէրը գուրս եկաւ եկեղեցուց այլ քահանայի հետ ու դարձաւ իւր լեռական ժողովրդին։ — Տղէք, շտապեցէք հիւրատանը կրակ վառեցէք, այս եղբայրներին ուտելիք հասցրէք։ Սրանք դաշտեցին, մեր ցրտերին չեն դիմանալ:

Միւս քահանան կանգնած, լուռ ակնարկ ձգեց գևպի բուքի ու մշուշի մէջ կորած դաշտը ու դառնալով տխուր երիտասարդներին ասեց.

— Մեծ է լուսաւորչի Աստուածը, միք յուսահատուիլ, այսօրուայ յաղթողը կարող է վաղը դերի ընկնել։ սրտով կացէք։ Յանցանքը մեր իշխաններինն է, որ անհաւատի խօսքին ու երդումին հաւատում են, անխելքի պէս զնում նրա ճանկն ընկնում։ Ժողովրդին էլ աւարի մատնում։ Միք յուսահատուիլ, Աստուած մեծ է։

Ամենքը լեռնցի տէրտէրին հետևելով մտան հիւրատունը։ Սա կիսով չափ հողի մէջ թաղուած չէնք էր, բաւական ընդարձակ, մի դուռ միայն ունէր և մի կրակարան, ուր մի քանի կոճղ բոցավառուած տաքութիւն էին տարածում և մօտիկ նստող ցրտահար երիտասարդներին միմիթարում։ Հիւրատէր սասունցիք իրանց դաշտեցի եղբայրների առաջ տուատօրէն դարսեցին գարէ, կորեկի հացեր, տաք թանապուր, չոր աղի պանրի հետ լեռան մեղք ու մի կողմից էլ իրանք ուտելով

ԱԱՍՈՒՑՑԻ ՅՈՎՆԱՆ

Ա

851 թ. էր։ Սաստիկ ձմեռը պատել էր Տարոն գաւառը, դաշտերը ձնի տակ թաղուել, ճերմակել էին, իսկ Սասունի լեռները կարծես ձնի ու սասցի ահարկու զանգուածներ լինէին։ Դաշտավայրի վրայ՝ Մուշ քաղաքում մահ ու լուսութիւն էր տիրում, իսկ վերև, Տորոսի Խութ լեռան վրայ կեանքը եռ էր գալիս։ Այդ բուքի ու սառնամանիքի մէջ միայն լեռնաբնակ ժողովուրդը կարող էր շարժուել, որ ցրտին թէ տաքին մի բրդէ զգեստ ունէր և այծի մորթուց կոշկանման բան։ թէպէտ գարի ու կորեկ էր նրա ուտելիքը, բայց ինչ կանես, որ անբաժան էր իւր նիզակից, որով պաշտպանում էր գաղաններից ու թշնամիներից։

Երկի պատճառ կար, որ այդ մըրըկոտ միջոցին Խութ լեառը շարժուում էր։ Մթնաղէմին բոլոր սասունցիք շտապում էին լեռան հիւրիսակողմը։ Այնտեղ եկեղեցու առաջ կանգնած էին երիտասարդ մարդիկ ու տխուր գէպի դաշտն էին նայում։ շատերի աշքերը արտասուքով լիքն էին.

քաջալերեցին. — անուշ արէք, եղբայրներ և համարեցէք թէ ձեր խսկական տանն էք: — է՞ն, ասեց մի դաշտեցի դառ ժպիտով, մեր խսկական տունը այսուհետև երկնքի տակն է, խսկ մեր ընտանիքները, որ քշուած են Արաբիայի խորքերը, ով գիտէ, գոնէ ողջ են: — Այս, ուր էր թէ ողջ լինէին, կրկնեցին դաշտեցի երիտասարդները ու նրանցից որը թեռվ աչքերը սրբեց, որը արտասուախառ պատառը ձեռից ներքէ զրեց: Ոչ ոքի մօտ ախորժակ չմնաց, քահանան սեղանն օրհնեց, խաչակնքեց և դէսլի սրահի խորքը նայելով, ուր փայլուն աշտէներով զինուած բազմութիւն կար, ասեց.

— Գիւղապետ եղբայրներ, մթան մէջ մի՞ք կանգնիլ, առաջ եկէք: Սուրբ Կարապետը, Տարոնը, նախարարները, քահանաները, ժողովուրդը դէպի Սասունի լեռը նայելով մեզ են ապաւինել: Ահա և մեծ վանքից եկած կոնդակը, կնիքներով ծածկուած մագաղաթը: Հարիւր տարուց ի վեր նզովեալ Արաբը իջնում է մեր դաշտերը, հայի արիւնով ողողում: Եթէ լուսաւորչի զօրութիւնը չլինէր, այս դաշտի երեսին մէկ քրիստոնեայ չէր մնալ: Առաջ հայը համբերում էր, բայց երբ դանակը ոսկոռին հասաւ, այն ժամանակ դառը առիւծ կտրուեց, հայը յարութիւն առաւ, կանգնեց, անհաւատի դիակներով դաշտը պարարտացրեց: Յիսուն տարի կայ, որ այս խաղը խաղում էնք. ոչ նրանք ձանձրացան մեզ զերելուց ու

ջարդելուց և ոչ մենք նրանց կոտորելուց ու փըշը բելուց: Դուք լաւ գիտէք, որ Բագրատ իշխանը գնաց անհաւատ արար զլխաւորի մօտ նրա համար, որ իրան բարեկամ էր ցոյց տալիս և երդւում էր մարգարէի անունով վկաս չըտալ: Բայց անօրէնը երգումը զրժելով Բագրատին, նրա ընտանիքին շղթայակապ անելով ուղարկեց Արաբիա, իսկ ինքը Մուշ քաղաքի մէջ նրա պալատում նստած, օրը հինգ անգամ հայնոյում է Լուսաւորչի հաւատը: Աստուած այդպէս բան չի ընդունիլ, պէտք է զրա վրէժն առնել: Մինչեւ երբ քննենք. երբ է սասունցին ցրտից թմրել, որ այժմը թմրի: Գիւղապետ եղբայրներ, մտածեցէք թէ ի՞նչ էք անելու, ո. Կարապետը վտանգի մէջ է:

Քահանայի այս քարոզից ետ խոր մոլոնչիւն բարձրացաւ սրահի մէջ, ամենն էլ խօսում էին իրար հետ: Մի երիտասարդ չը համբերեց, ելաւ ուժով ձայն տուեց: — այս խան ի խուռն ձայներից բան չի հասկացւում: ուր է Յովիան գիւղապետը, թող նա առաջ դայ, իւր կարծիքն ասի, մենք նրան կը լսենք:

— Ուր է Յովիան, Յովիան, գոչեցին քառասուն հոգի միաբերան: Ահա սրահի մի կողմից առաջ եկաւ մի միջահասակ մարդ, երեսի գոյնով ոչ մէկից չէր տարբերում. արեր, քամին, ցուրտըն ու տաքը միակերպ ազգել էին նրա երեսի գէմքի վրայ. զլխաւորը նրա խոր աչքերն էին, որ երկաթեայ փայլուն սլաքների նման թափան-

ցում էին դիմացինի սրտի խորքը: Գլուխը կլոր. գէմքը քառակուսի, կազմուածքը ջղոտ ու մսոտ, քառասուն տարեկանի չափ: Ահա այսպէս էր Յովան կոչւող մարդը, որ ոչ միայն սասունցու սիրելի աշտէնն ունէր, այլ և զոտու մէջ երկայրի սուր:—Խօսէր, Յովան, կանչեց ժողովուրդը միաբերան: Երբ ամենը լոել էին, Յովանն սկսեց այսպէս խօսել:—ականջ արէք ինձ. ով Խութի ժողովուրդ. Եթէ ուզում էք ո. Կարապետը փրկել կամ ցանկանում էք Բագրատի վըրէմն առնել այդ նզովեալ արաբներից, այս ո. Սարգսի շարաթը պարապ մի նստէք, քանի որ այդ տաք գժոխիքի սատանաները թմբած նստել են մեր խեղճ մշեցոց տներում ու վառարանից պոկ չեն գալիս, հարկաւոր է նրանց վրայ յարձակուել: Փառք Աստծու, մեզ այնպէս անդամներ է տուել որ ցրտին էլ կը դիմանան, տաքին էլ: Եթէ հարցնէք, Երբ պէտք է յարձակուել քաղաքի վրայ, ես կասեմ հէնց հիմա, այս բուրին ու ձիւնին: Մինչև Մուշ կը համնենք չորս ժամում ու աւազակներին կը գտնենք առաւօտեան քնի մէջ ընկղմած: Նրանից ետ ձեր խղճմտանքին եմ թողնում, թէ ի՞նչ էք անելու նրանց: Ես վերջացրի խօսք:

Լուութիւն աիբեց սրանի ամեն կողմ: Տէր-ուրը կը կին բերանը բաց արեց.

— Յովան, արդեօք տեղեկութիւն ունիս այդ մարդկանց մասին, որ այդպէս համարձակ

առաջարկ ես անում:

— Ինչպէս չունեմ. Երկու ժամ չկայ, որ տուն եմ եկել. այն օրից որ Բագրատ իշխանը գերի գնաց, ես հանգստութիւն չունեմ: Քսան երեսուն քաջ հայեր հետս առած շրջեցի ամեն կողմ, ութ օր շարունակ նրան հետեւցի. տեսայ ձար չկայ նրան ազատելու, զուր տեղ կտրիճ տղէք պէտք է զոհ գնան, ետ դարձայ ու տեսայ անօրէն արաբներին ո. Առաքեալի վանքում անհոգ, անփոյթ նստած: Եթէ իմ ձեռին այս առաւոտ հինգ հարիւր մարդ լինի, աւազակներից ոչ մէկը շունչը վրէն չի ազատուիլ:—Երբ որ այդպէս է, տղէք, զուաց մէկը, ի՞նչ ենք կանգնել, գնանք, ուր որ մեզ Յովաննը կը տանի:—Գնանք, կրկնեցին հարիւր ձայն իրար հետ:

¶

Զիւնը հեղեղի ողէս վարար թափւում էր. քամին դէս ու դէն շպրտում: Այսպէս եղամնակին դիւրին չէր տնից դուրս դալ. բայց կէս գիշերն անց ահա հազարի չափ նիզակաւորներ Սարասեպ դիւրի դիմաց ժողովուեցին, ուր ապասում էր Յովանը: Էլ երկար չը համբերեց, սկսեց բոլորի առջից փայտէ ոտնամաններով սահել: Աղջ Սասունը դիտէր, որ այդ մարդը յոզնել, վհատել չգիտէր: Նա սահում էր, միւսները ետեսից քայլում էին: Խումբը լոիկ շարունակում էր ճամբէն: Արշալոյսը հեռու չէր, երբ յանկարծ խմբի պա-

բագլուխը կանդ առաւ. առջեր նկատեց մի անսովոր ձիւնադէղ բարձրութիւն. Նիզակը մեկնեց. երբ ձիւնի դէզի մէջ միխեց, դիմագրութիւն զգաց և զրա հետ էլ մարդկանց աղաղակ, ձիւների փոքնչոց լսեց: Շուտով ձիւնի դէզը փլուեց, ցիր ու ցան եղաւ և տակից դուրս պլծան չորս ձի ու չորս մարդ: — Այս մարդիկ, ովքեր էք, բարեկամ թէ թշնամի, հարցրեց Յովնան: — Եթէ բարեկամ չլինէինք, մի՞թէ այս ձիւնէ վերժակի տակ կը բնակուէինք, որ ձեզ դիմաւորենք, եղաւ պատասխանը: — Բարեկամներ, ահազին բազմութիւն էք, այսպէս ուր էք գնում. չլինի՛ հարսանիքի, ուրախութեան:

Յովնանը այս խօսող բարձրահասակ մարդի դէմքը լաւ գննելուց վերջը պատասխանեց. — Այն, հարսանիք ենք գնում, Գուրգէն իշխան, կորցընելու ժամանակ չունենք, եթէ ուզում էք մեր զուարճութեան մասնակից լինել, հրամայեցէք, գնանք միատեղ: — Զեր արշաւանքը դէպի ո՞ր կողմն է, հարցրեց իշխանը լրջօր!ն ու կամաց:

— Դէպի Մուշ: — Մօտիկ ենք: — Մի բանի քայլ է մնացել, շտապենք, քանի որ Խսմայէլի զաւակները ոչինչ չը դիտեն:

Երբ Յովնանը Մշու բարձր եկեղեցու զըմբէթը նշմարեց, կանդ առաւ: Զօրքը նրա շուրջը բոլորուեց, նա նրանց երեք խմբի բաժանեց. մի մասը, որի առաջնորդն ինքն էր, քաղաք էր մտնելու հարաւային կողմից. միւսը արևելեան

կողմը պէտք է շրջուէր. Երրորդն արևմտահիւսիս պէտք է գնար: Յովնանի կարգադրութեամբ երեք խմբերն էլ յարձակմամբ թափուեցին քաղաք: Սասունցոց աղաղակ բարձրացնելու վրայ արարները շփոթուեցին, անխուսափելի վտանգը տեսնելով աղիողորմ ձայներ հանեցին: Գերիները փայտ ու ջուր կրելլ թողած ուրախութեան ձիչեր արձակեցին: Այդ միջոցին Եռևուփ ոստիկանը Բագրատի պալատի մէջ խառնաշփոթ ժընորից վեր թուշելով շուարել էր. չէր խմանում ո՞վ է իւր անկողնի երջանիկ հանգստութիւն խանգարողը: Երբ իմաց արին, որ արիւնաբրու լեռնցիք քաղաք են մտել, սարսափած թողեց պալատը, վագեց մտաւ Փրկչի եկեղեցին, կարծելով որ նրա զմբէթի մէջ ապահովութիւն կը դանի: Բայց սասունցի խումբը եկեղեցին պաշարելով հասաւ անօրէն մեծաւորի կուշար և նիշակով մէջքից, թեփ տակից գարկելով սատկացրեց: Գուրգէն Արծըռունի իշխանը իւր ազգական պատանդներին բանդից հանեց: Սասունցիք թշնամիների դիակների ու արեան մէջ ուրախութեան և զուարճութեան օր էին կատարում ձեռն ընկած աւարը իրանց մէջ բաժանելով:

— Այդ ամենը հայի ապրանք է, ասում էր Յովնանը. Վասպուրականի ու Տարոնի հայերի ստացուածք է, սասունցիք իրաւունք ունեն սեպհականնելու: Բարբարոսները ինչ են բերում

Հայաստանի բնակչին —իրանց զարշելի կրօնը և
իրանց արիւնխում սուրբ:

Գուրգէնն սկսեց զննել այդ անսովոր մար-
դուն, որ ժողովրդական հայի տիպն էր. հաստատ
կամքն ու կորովը գէմքի վրայ պարզ փայլում էին.

Յովնանն էլ իւր կողմից սուր աչքերը ձը-
դեց իշխանի վրայ և մի ակնարկով տեսաւ, որ
իւր առաջ կանգնած է մի փստահ, քաջ, զօրեղ,
մինչև անդամ յանդուզն երիտասարդ. գէմքին
կնճիռի հետք ըլկար, երկու գուարթ մեծ սև աչ-
քեր ուրախութեան փայլ էին սփոռում աջ ու
ձախ. անդամները բարեկազմ և փայելուչ էին,
հագուստը պարզութեան մէջ ունէր իւր պեր-
ճութիւնը. զէնքերն ու ասպարը զարդարուած
էին սոկով, արծաթով: Յոլակ ձին, որի սանձը
ծառան բռնած պահում էր, իւր տիրոջից աչք
չէր հեռացնում, շուտ շուտ խրխնջալով անհան-
գիտ զլուխը դէպի նա էր գարձնում: — Երեկ
դնալու տեղ ունես, հարցրեց Յովնանը: — Այս,
պատասխանեց Գուրգէնը, միայն բաժանուելուց
առաջ կամննում եմ մի հարց տալ: Յովնան,
դուք սասունցիք քաջութեան մեծ գործ կա-
տարեցիք, բայց ի՞նչ էք անելու վաղը, երբ ամի-
րապետը եռասուփի տեղ ուրիշն ուղարկէ և ձեր
հութը 150 հազարով պաշարելով տակն ու վրայ
անի: — Ասած անհաւատալի չէ, կարելի է կատար-
ի, Գուրգէն իշխան. հէնց միայն այն պատճա-
ռով, որովհետեւ մեր հայը մարդ չէ: — Է՞հ, ես

ձանձրացել եմ այսպիսի խօսքեր լսելուց. «Հայը
անմիաբան է, հայը անպիտան է, հայը վախկոտ
է և այն, և այն»: Կարծես այսպէս ասողները
իրանը հայեր չեն. կամ յոյնը, պարսիկը, ասորին,
արաբը միաբան ու միահոգի են: Աշխարհիս երե-
սին մարդիկ ինչպէս գէմքով, նոյնպէս զիրքով,
ընաւորութիւնով իրարից տարբեր են: Անկարե-
թի բանը միկողմ թողնենք, ես գործադրելու բանն
եմ հարցնում, եթէ հայը մարդ լինէր, ի՞նչ պէտք
է անէր. խելօք մարդ ես, այս տսա ինձ: — Քո-
տուածը լաւ հարց է, բայց վախենում եմ պա-
տասխանը քեզ պէս պատուական, քաջ երիտա-
սարդի սիրտը վիրաւորի: — Ի սէր հայութեան և
քրիստոնէութեան տսա, չի վիրաւորի: — Լաւ, ա-
սում եմ, լսիր: Երբ որտեղ որ հայեր կան, միաբա-
նուեն և առանց նախարարների իրանց գլխի ճարը
տեսնեն, այն ժամանակ թերես հայ ազգը իւր
փրկութիւնը գանի:

Այս անակնկալ խօսքի վրայ իշխանը մնաց
զարմացած և մի կարմրութիւն եկաւ նրա երեսը:
— Ի՞նչ յանցանք են արել նախարարները, որ այդ
աստիճան քու ատելութեան արժանացել են, Յով-
նան: Գիտեմ որ մեր նախահայրերը շատ պա-
կասութիւն են ունեցել, մի քանիսը նրանցից ան-
պիտան են եղել, բայց այնպիսի քաջարի մարդիկ
էլ տուել են նախարարեան տները, որ մեծ աղ-
ուերին անդամ փառը ու պատիւ կը բերէին: Սա-
կայն ես հետաքրքիր եմ իմանալու պատճառները,

թէ ինչու դու իշխանների ու ազնուականների այլքան թշնամի ես. քանի որ շատ անգամ նըրանց ծառայել, նրանց հայր կերել ու նրանց տանը բնակուել ես: Մինչև անգամ գիտեմ, որ Բագրատ իշխանը քեզ շատ էր սիրում: — Այս, ասածդ ձիշտ է, Գուրգէն իշխան, ես օրերով տուն չեմ եկել, որ կարողանամ Բագրատին մի կերպ աղատել: Ամենը նրան խորհուրդ էին տալիս, որ Ուտիկանի մօտ գնայ, բարկութիւնը չը գրգռէ. մենակ ես էի աղաջում, որ չը գնայ, զգոյշ լինի այն մարդկանցից, որ պատիւ են համարում ոչ միայն ըրբիստոննեանների արիւնը թափել, նրանց գերել, այլ և խարեւթիւնով իրան դաւաճանել: Զուր ես ինձ մեղագրում. ես թշնամութեան հոգի չունեմ ոչ իշխանի և ոչ ազնուականի դէմ: Իմ լեռների մեջ ես ապրել եմ հանգիստ ու երջանիկ և կապրէի առ միշտ իմ գիւղի մէջ, եթէ Բագրատ իշխանը ինձ չը կանչէր, իւր մօտ բռնի պահելով չը սովորցնէր, թէ հայ ժողովրդի թշուառութեան միակ պատճառը ազնուական դասն է: Գոնէ տասններկու տարուայ ընթացքում այդ համոզման եկայ: Երբ ազդի գլուխը մի մարդ կամ մի շարք մարդիկ են անցնում, ամենից փառք, պատիւընդունում, զրանց փոխարէն պարտաւոր են այդ ազդին ոչ միայն պաշտպանել, այլ և կոսուավարել: Այդ պարտքը արդեօք կատարել է, իշխանների խումբը: Նախարարների ո՞ր ազգակործան արարքները յիշեմ: Դու որ երկու մեծ նախարարու-

թեանց, Արծրունեաց ու Մամիկոնեաց շառաւիղն ես. լաւ պէտք է իմանայիր թէ ինչու Բագրատը գնաց թշնամինների ոտներն ընկաւ: Աշոտ Արծրունին վստահ չէր իւր նախարարների հաւատարմութեան վրայ. այդ իշխանները խեղճ հայաստանի տէրերը չէին, այլ բռնաւորները. չեն կարողանում նրան պաշտուանել ոչ օտարից և ոչ իրանց կոյր կրքերից. Փոքրիկ փառասիրութիւնով իրանց անձերի ու ազգի համար խորխորատ են փորում: Քաջ ու անպարտելի են իրար դէմ կը-սուելիս, անխիղճ կերպով թափում են իրանց հպատակների արիւնը. կողոպտում, աւերում են հակառակորդի երկիրը, որ նոյնպէս հայինն է: Եւ ի՞նչ է զրանց աչքում հայը — ոչինչ: Այս բաները տեսնելով սիրտս դառնացել է, իշխան. ցաւում եմ ազգիս վրայ, որ իւր մարմնաւոր ու հոգևոր իշխաններին հլու, հնագանդ մնալով ամեն օր կոր-չում է հոգով ու մարմնով:

Յ Յովնանի այս խօսքերի վրայ լուսվիւն տիւեց. երկուան էլ աչքերը գետնին գցած մնացել էին կանգնած: Վերջը Գուրգէնը կարծես քնից արթնացած, առանց լաածին պատախան տալու, ձեռը կուրծքին զրեց, հրաժարական ողջոյն տալով շտապով հեծաւ Յովակը և դէպի արևելք ուղղեց նրա գլուխը: Նրան հետեցին երեք սպասաւորների հետ այլ և Արծրունի պատանդները: Յովնանն առժամ նայեց խմբակի ետնից և նիզակի վրայ կրթնած խօսեց. — Միթէ ասածս

Ճշմարտութիւն չէր: Նախարարները փոխանակ բնդիմանուր վիճակին դարձան առանելու, ողորմելի փառասիրութիւնով իրար հետ կռւում են և մէկ մէկու գաւաճանում: Այս թշուառութիւնն աչքովդ տես, դու հայ, դու բրիստոնեայ, դու խեղճ Յովնան և անտարբեր մնա արձանի նման, երբ որ տեսնես՝ եղբայրներդ մեռնում են տանջանքների մէջ, զաւակդ մոռանում է իւր լուսաւորիչն ու հայութիւնը, կինդ ու աղջիկդ զնում են օտար երկիր բռնաւորին աղախին ու հարճ լինելու: Հարիւրաւոր տարիներ այս է խեղճ հայի վիճակը, որի առիթով իշխան ու եկեղեցական տխմարի պէս կրկնում են «այս բոլորը մեր մեղքի հետեանքն է»: Միթէ Աստուած միայն հայոց ազգի մեղքն է տեսնում, և եթէ տեսնում է, հապա չի քաւում:

Այսպէս մտածելով Յովնանը գնաց գէպի քաղաք, ուր սասունցիք զբաղուած էին աւարուի: Ժողովեց նրանց և յիշեցրեց, որ գնալու են ու կարապետ նոյնպէս ազատելու: Իսկոյն լեռնցիք ամեն բան թողած վեր թուան, որոտալի ձայնով գոյեցին. «Գնանք սուրբ Կարապետ»: Հազարաւոր նիզակներ ճոճելով հետևեցին Յովնանին:

Մեծ համարմունք ունէին քաջ սասունցիք այս մարդի վրայ. առանց ընտրութեան առանց ժառանգական իրաւունքի, առանց հարստութեան մեծ ազգեցութիւն ունէր Սիմ լեռան վրայ: Անշահառ էր, խեղճ ու անտէրի օգնական, հարստահա-

թողների թշնամի. այս յատկութիւնների վրայ պէտք է յիշել իւր զրել-կարդալու կարողութիւնը, որ շատ քիչ մարդկանց էր առւած այն գժուար ժամանակ: Այդ Յովնան եղբայրը սասունցու համար մի տեսակ սուրբ էր, ինչպէս Մովսէսը խրայէլացոց համար: Այժմ նրան տանջողը այն միտքն էր, թէ չլինի Գուրգէնի մարգարէութիւնը կատարուի:

Որեւ մայր էր մտնում, յանկարծ մի խումբ արաբացի զինուորներ երևացին: Սասունցիների դէմ էին գալիս: Յովնան նշան տալով իւր մարդկանց փոքրիկ զնդերի բաժանեց: Քառակուսիներ կազմելով աշտէները հանեցին ու պաշարելով արշելեցին ձիւտորների արագ ընթացքը. շատերին ներքեւ զլորեցին իրանց ձիերից, ճերմակ ձիւնը կարմիր ներկեցին նրանց արիւնով. բայց ձիւտորների մի մասը կարողացաւ ճեղքել լեռնցի հետևակ զօրքը և արագ անցնել Հայաստանի սահմաններից, որ զոյժ տանի թէ Սիմ լեռան ապատամբները ջնջեցին տաճկաց բանակը և ամիրապետի փոխանորդին սպանեցին:

Այլ ևս վտանգ չկար: Ս. Կարապետը ազատուած էր բոլորովին. Յովնան շարունակեց իւր ընթացքը և մտաւ տաճարը աղօթելու: Վանահայրը և միաբանները գոհութեան մաղթանք կատարեցին ի փառ Փրկողին: Յովնանին իւր ընկերների հետ տարան սեղանատուն ընթրելու, ուր զլիսաւորապէս խօսում էին լեռնականների

արած քաջութիւնների վրայ: Յովնանը շատ քիչ
էր խօսում: Վերջը յոգնութիւնը պատճառ բռնե-
լով դնաց մեկնուեց խոսի դէղի վրայ:

Գ

Այս ժամանակ Հայաստանը բաժանուած էր
երեք մեծ նախարարութեանց մէջ—Բազրատու-
նեաց, Արծրունեաց և Սիւնեաց: Մամիկոնեանք
միայն անունով էին մնացել. միւս իշխանական
տները հարկատու ճորտեր էին դարձել Արծրու-
նեաց Աշոտ մեծ նախարարին, որ մի յանդուգն
և փառասէր երիտասարդ էր: Նրա մայր Հոփի-
սիմէն, որ իւր սրամտութիւնով, խոհեմութիւնով
և բարեպաշտութիւնով մեծ հոչակ էր վայելում,
իւր եղբայր Բազրատի գերի տանուելու օրից ի
վեր շատ տխուր և անհանդիսա էր: Վախենում
էր, որ մեծ իշխանին շղթաների մէջ նեղելով հա-
ւատն ուրացնել տան: Առանց զաւակներին բան
տաելու իւր հաւատարիմ իշխան Խոսրովին ու-
ղարկել էր իմանալու, թէ ի՞նչ վիճակի մէջ է
կամ ազատութեան ճար չըկայ: Երեք ամիս էր,
Բզնունեաց ծովի ափին, Բերկրի քաղաքի մէջ
նրա գալուն էր սպասում:

Յանկարծ լուր տուին, որ Խոսրովն եկել է:
Տիկնոց երեսը պարզուեց, հրաման արեց որ ներս
գայ:—Բարի եկար, իշխան, տեսամք Բազրատին:—
Տեսայ, իշխանուհի, խօսեցի հետը: յոյս կայ, որ
ամիրապետի խստութիւնը քիչ ժամանակից կակ-

ղի. որովհետեւ երկրի մէջ խոսվութեան նշաններ
կան: Այնտեղ եղած միջոցիս մի դաւադրութիւն
բացուեց, շատ մարդիկ մահուան դատապարտուե-
ցին: Զանազան դաւանմերում ապստամբութեան
նշոյլներ կան. եթէ քրիստոնեաներս խելօք մնանք,
մահմեդականների մէջ քաղաքական պատերազմ
կըծագի: Գրգըռման առիթ չպէտք է տանք, թէ չէ
նրանց կրօնամոլութիւնը վառելով կատաղութեան
զոհ կը գնանք:—Ի հարկէ այդպէս է: Ես էլ միշտ
այն խորհուրդն եմ տուել, որ անօրէն ազգի հետ
խոհեմութիւնով վարուենք, հայ իշխաններին սերտ
կապով միացնենք, մեր երկիրը լաւ կառավարենք,
զօրանանք. բայց իմ տղեքը խօսք չեն հասկա-
նում. խելքները զուարձութեան տուած՝ քան
խորհուրդներից մինը չեն կատարում:

—Ասածներդ միանգամայն ճշմարիտ են, Տի-
կին. Բազրատ իշխանը որ այնքան մեծամիտ է,
նոյնպէս խոստովանեց թէ, իմ զլիսին այս փոր-
ձանքը չէր գալ, եթէ երկու հոգու խորհրդի մտիկ
անէի: Աստուած Հայաստանի մէջ միայն երկու
խելք է ստեղծել. այդ խելքից մինը լցրել է մի
կնկայ գլխի մէջ, միւսը մի լեռնականի:—Ո՞վ է
այդ լեռնականը, իշխան, հարցըրեց Տիկինը աշ-
քերը փայլեցնելով:—Մի սաստնցի Յովնան:—
Յովնանը:—Դու Յովնանին որտեղից ես ճանա-
չում, Տիկին, այդ անունը ինձ բոլորովին անծա-
նօթ է:—Ի՞նչպէս չըճանաչեմ, մեր մեծամեծ իշ-
խանների յիմարութեանց առաջինն այն է, որ

հասարակ ժողովրդի մարդուն արհամարհում են, չիմանալով նրա խելքից, քաջութիւնից օգուտ քաղել։ Զեն տեսնում տիսմարները, որ եթէ հայ եկեղեցին այսքան հալածանքներին դիմանում է, այսքան ներքին ու արտաքին բռնութեանց համբերում է, պատճառը միայն այն է, որ իւր գըռները անխտիր բաց է ունեցել մտաւոր կարողութիւնների առաջ. յետին աղքատ շինականին, անազատին առել է իւր ծոցը, սնուցել, մեծացրել, մինչև անդամ կաթողիկոսական գահի վրայ բարձրացրել։ — Տիկին, դու ասիր որ այդ Յովինանին ճանաչում ես, ուրեմն երեկի մարդ է։ — Եթէ իւր զգեստներին, իւր ազգային ամսունին, իւր հարստութեան ու կալուծներին նայենք, ամենառչինչ մարդն է, իսկ եթէ քաջութեան ու խելօքութեան նայենք, ողջ Հայաստանի իշխանների մէջ տասն հոգի չենք գտնիլ նրա հետ համեմատելու համար։ — Բայց ի՞նչպէս կարող է Արծրունեաց իշխանուհուն այդպէս ծանօթ լինել մի յետին շինական, այդ ինձ զարմացնում է։ — Երբ ես Յովինանին ճանաչեցի, Արծրունեաց տիկին չէի. այլ Բագրատունեաց օրիորդ։ Նա Տարօնում եղբօրս պալատի մէջ իշխանազունների հետ խաղում էր. ճարպիկ ու զօրեղ էր մարմաւոր կրթութեան, մարդերի մէջ։ Մտաւոր կարողութեան կողմից էլ զարմացնում էր իրան կարդացնող վարդապետին. վերջը դարձաւ հօրեղբօրս ատենադպիրը։ Եթէ մէկի գաղտնիք հաղորդելու կարիք կար, Յովի

նանին էր յանձնուում. երբ հօրեղբօրս տղերանց վտանգաւոր ճանապարհից դարձնել էր հարկաւոր, կրկին Յովինանին էին դիմում։ Սակայն յանկարծ մի խոր լուսութիւն տիրեց այդ մարդի անուան վրայ. Յովինանը մէջտեղից անհետացաւ. Պալատից անհետացողը մենակ նա չէր. հօրեղբօրս գուտոր Վասկանուշը նոյնպէս հեռացուեց յունաց սահմանները, մի կուսաստանում կեանքը մաշելու։ Ամենին զարմանք պատճառեց այս զիստածը բացի ինձնից. Ես զիտէի, որ Յովինանն ու օրիորդը իրար սիրում են. մի քանի անդամ նրանց տեսակցութեան ներկայ եմ եղել ծաղկանոցի մէջ, ուր սիրահարները ժամադիր էին լինում։ Նախատեսնում էի սարսափելի հետևանքը։ Քանից յորդորեցի Վասկանուշին ետ կենալ այդ սիրուց և երիտասարդին իրանից հեռացնել։ Խորհուրդս իրաւացի գտաւ օրիորդը, բայց անկարող եղաւ բաժանուել իւր սրտի սիրածից։ Վերջն այդ աքսորները լսելով գտանացայ. Այդ զիստածից երեք ամիս անցած հօրեղբայրս հրաւիրեց ինձ, գնացի իւր մօտ. տեսայ որ զաւակի հետ ինքն էլ է պատժուել։ Ժամանակից առաջ ծերացել էր։ Աւստիխնդրեցի, որ բաւական համարի եղած պատուհասը, հրաման տայ դառնալու։ Խիստ մարդը շանթածիդ աչքերով վրէս գուաց. «մի խօսիլ, միայն մահը կարող է նրանց արգելանոցից բաժանել»։ Էլ ի՞նչ կարող էի օգնել, սրտակոտոր դարձայ մեր տուն։ Հօրեղբայրս սրտի նեղութիւնից օր

օրի վրայ տկարացաւ ու մեռաւ: Վերջապէս հրաւէր գնաց Վասկանուշին, որ տուն գայ. Նա պատասխանել էր. «Չատ երջանիկ եմ կրօնաւորութեան կեանքի մէջ, այստեղ ազնուատոհմութիւն չկայ. Աստծու արարածները հաւասար են: — Իսկ Յովնանը ի՞նչպէս լոյս աշխարհ դուրս եկաւ, հարցրեց՝ Խոսրովը հետաքրքիր: — Այդ երկաթի մարդին միայն սպանել կարելի էր, թէ չէ մըշտնջենական բանդարկութեան ենթարկելը յիմարութիւն էր: Հօրեղբայրս հրամայել էր Շիրակ գաւառի վանքի մէջ խիստ կալմանաւորած պահել: Երկու տարուց ետք ճամբորդութեան միջոցին անդութը հրամայեց աւելի խիստ հսկել բանդում. ձգել տուեց մի գետնափոր, խոնաւ սենեակի մէջ, հինգ միայն այն յանցանքի համար, թէ ինչո՞ւ նա զիւղացի տեղով համարձակուել է մի իշխանի աղջիկ սիրել: Երբեմն Աստուած մարդու յիմարութեան չափը ծաղրում է, այդ մթին սենեակը, որ խոր վիրապի նման էր, գետնափոր ուղիի սկիզբն է եղել. ուստի նոյն գիշերն և եթ Յովնանը սողալով դուրս է եկել ու ազատուել: Բագրատունեաց իշխանը իւր վրէժինդրութեան մէջ սիսալուել էր. լսեցի որ Յովնանն ութ տարուց ետքնացել է Սասուն, քաշուած կեանք է վարել իւր լեռների ու հայրենի գիւղի մէջ: Վերջը նրան երկու անդամ տեսել եմ եղբօրս Բագրատի տանը, իբրև Սասունի ներկայացուցիչ: — Իսկ դռւ, Խոսրով, նամակ չըբերիր եղբօրիցս: — Ոչ, Տիկին,

Յնար չկար, շատ խստութեամբ էին պահում նըրան: Երբ ես այստեղ հասայ, երկտակ շղթայի մէջ էր. Վերջը կապանքը թուլացրին ու բանդը փոխեցին: Թոյլ տուին որ ընտանիքի հետ տեսնուի, կրօնափոխութեան սպառնալիքը թողին: Այս միջոցին էր, որ բանդապետի ձեռը կաշառք դնելով կարողացայ նրան տեսնել: Ուրախ էր, յոյս ունէր ազատուել, բայց պատուիրեց ինձ, որ Տիկնոջդ յայտնեմ, որ ամենին խաղաղութեան հրաւիրես, ժողովրդի մէջ խովութիւն չըծագի: — Իմ փափազն էլ այդ է. Աշոտ որդուս էլ այդ խրատն եմ տալիս: — Խոսրով, դու յոգնած ես. հանգստացիր, գնալու ես վաղը Մոկս սպարապետ եղբօրս մօտ և պատմելու թէ ի՞նչպէս տեսար Բագրատ իշխանին: — Գլխիս վրայ, Տիկին, ասեց Խոսրովը ու դահլիճի դռնից հազիւ դուրս եկած ապուշ կտրուեց ու կրկին Տիկնոջ մօտ վերադարձաւ: — Ի՞նչ կայ, Խոսրով, ինչո՞ւ ետ գառար:

Այս ասելիս Տիկինն էլ մնաց զարմացած, երբ տեսաւ, որ Արծըունի պատանդները զուարթերես իրար ետնից ներս են մտնում ու խոնարհ զուկս տալիս:

¶

— Այս ինչո՞ւ էք ետ դարձել, հարցրեց Տիկինը զայրացած, ձեր փախուստով ոստիկանին չէք խաբում, այլ մեզ: — Ոչ, Տիկին, ոստիկանը

իւր կեանքը ձեզ բաշխեց, պատասխանեցին միաբերան, ոչ ինքը կայ և ոչ իւր զօրքը, ամենն էլ կոտորուեցին: — Ի՞նչ էք ասում, ովքեր էին այդպէս անխոհեմ գործ անողները: — Սասունցիք, Տիկին: — Սասունցիք: — Այն, սասունցիք իրանց գլխաւոր ունենալով Յովնանին, յարձակուեցին Մուշի վրայ, բոլոր արաբներին ջարդեցին. Եռւսուփ ոստիկանին սպանեցին, մեզ ազատ թողին ու իրանք գնացին ո. Կարապետի վրայ յարձակուող արաբ խմբի դէմ: — Բացի Յովնանը ուրիշ գլխաւոր չունէին սասունցիք: — Գուրգէն իշխանն էլ հետն էր, բայց նա հրամաններ չէր տալիս: — Ո՞ր Գուրգէնը իմ տղայ Արծրունին. միթէ նա այդպէս յիմարութիւն արեց: — Ո՞չ, Տիկին, ուրիշ Գուրգէն էր. մենք նրան չէինք տեսած, բայց նա էլ Արծրունի էր:

Տիկինը գունատուած նստեց մի կողմ և երիտասարդներից մէկին նշան տալով ասեց. — Դրիգոր իժամն, մօտ արի, ասա, ով է այդ Գուրգէն Արծրունին, չը կարողացաք իմանալ: — Ի՞նչպէ՞ս չէ, Տիկին, նրա ծառայից իմացայ, յունաց երկրից է գալիս, հօրով Արծրունի է, մօրով Մամիկոնեան, գեղեցիկ, պարթև, սև աշք-ունքով, սև մօրուքով, 25 - 30 տարեկան մարդ է: Կայսրը շատ սիրել է այդ բաշ տղային, գաւառ է պարգևել, կամեցել է հարսնացու տալ, բայց սա թողել է ամեն բան ու հայրենիք. գարձել: — Հօր անունը չիմացաք: — Իմացայ, Տիկին,

ասում են Ապուպէլձի որդին է: — Այս խայտառակ հանգամանքի մէջ այդ էր պակաս, հառաչեց Տիկինը ցաւագին: Այդ Գուրգէնը հետը զօրք ունէր: — Ո՞չ, երկու թիկնապահ և մի ծառայ ունէր: — Սասունցիք նրան չէին հնագանգում: — Ո՞չ, նա գործի մէջ չէր խառնւում և բացի Յովնանից ուրիշ մարդու հետ չխոսեց. մէկ օր միայն մեզ հետ ճամբորդեց, երկրորդ առաւտ բաժանուեց, գնաց: — Լաւ, իմացայ ով է, գնացէք, դուք հանգստացէք: Ապա Խոսրովին դառնալով Տիկինը խօսքը շարունակեց. — տես, ինչ բանից որ վախենում էինք, այն կատարուեց. այսպիսի օրերին Ապուպէլձի տղի լսու ընկնելը Աստծու պատիժ է: Իշխանը խօսքիս նշանակութիւն չտուեց. անխիղճ կերպով մարդու արիւնը թափեց, իմ որդի Աշոտըն էլ հօրը յաջորդելով անիրաւութեան վրայ անիրաւութիւն աւելացրեց, որբ տղի ժառանգութիւնը բոլորովին յափշտակեց: Այժմ այդ երիտասարդ Գուրգէնը գործիք չպէտք է դառնայ արարի ձեռում: — Ի՞նչ ես ասում, Տիկին, այդ երարի ձեռունի Արծրունի ունի երակների մէջ, այդպէս դաւաճանութիւննա չի անիլ: — Ի՞նչ անմիտ խօսք ես ասում, Խռարով. Մեհրուժանը, Շաւասպը Արծրունիներ չէին: Այդ տոհմից եսինքոս եմ վախենում. Արծրունեաց տոհմը միջին կարգի մարդիկ չունի. կամ լաւ մարդիկ է բերում կամ անօրէնների անօրէնն է հանում: Խոսրովը այս խօսքերին պատասխան չտուեց,

Տիկնոց վսեմ նայուածքից ակնածելով գնաց իւր սենեակը հանգստանալու։ Իսկ սրամիտ Տիկնը գուշակելով գալիք փոթորիկը՝ ընկաւ Աստծու առաջ իւր երկրի կորուսար ողբալու։

Այդ միջոցին նրա որդի Աշոտ իշխանը միւս երկու եղբայրների հետ խաղերով, անառակութիւնով և զուարձութիւնով էր զբաղուած։ Ապօւպէլճի տղի գալուստը բոլորովին անուշագիր թողին։ Յովնանը պարապ չէր. իւր լեռնցիները ժողոված կրթում, վարժում էր արաբներից խած զէնքերով։ Մուշի մէջ եղած պաշարն ամբարում էր Խութի անառիկ տեղերում և լեռան դիւրամատոյց դիւղերն ամրացնում։

Ե

Այդ ժամանակ մի ձիաւոր լայն մոխրագոյն վերաբկուի մէջ վաթաթուած վարագից մտախոհ գնում էիր դէպի Խոյ, Թէպէտ երկինքն ամպամած էր ու գետինը ձիւնաթաղ, բայց մարդը երբեմն զլուխը երկինք դարձնելով կուրծքից հառաջանք էր հանում. ապահով էր, որ ոքմին իւր սրտի տխուր ձայնը չէր կարող լսել։ Դա Գուրգէնն էր, որին ծանը էր թւում Վասպուրականի օղը, նա որոշել էր վայրկեան առաջ հեռանալ այդ երկրէն։ Երբեմն ինքնիրան ասում էր. «ախ երանի մի անգամ էլ նրան տեսնէի, մի անգամ էլ սրբափս վէրքը նրա առաջ բանայի, նրա սիրտն էլ մի անգամ տեսնէի, այնպէս հեռանայի այս երկրից».

գնայի թորթում ցաւոտ կեանքս անցկացնելու, ուր երջանկութիւն էի երազում։

Այսպիսի եղանակին ուղեգնացութիւնը շատ էլ զուարձալի չէր. երբ ճանապարհի վրայ գիւղ էր պատահում, խանձուած սիրտը ստիպում էր որ ժամ առաջ հեռանայ, որպէս զի մարդու հետ խօսելուց, պատասխանելուց ազատ մնայ. Երկու երեք զիշեր աննշան գիւղերի մէջ անցկացնելուց վերջը մօտեցաւ Խոյին և արևելքը թողած դէպի հիւսիս գնաց ու մտաւ Անձնացեաց քարքարուտ գաւառը։ Նրա սրտի զօրաւոր փափագն էր Ռշառունեաց օրիորդ Հեղինէին տեսնելը, որ այժմ դարձած էր Մուշեղ իշխանի կինը։ Հոգեաց վանքն էր հասել, բայց պէտք է գնար կանգուար ամրոցը, որ անառիկ ժայռերի ծոցում էր կանգնած. քարայրից քարայր պէտք է անցնէր այդտեղ հասնելու համար։ Ժայռի բարձրութեան վրայ արհեստական պարիսպներն ու աշտարակները աւելի դժուարացնում էին մօտենալը, բացի այդ միայն մի ճանապարհ կար ժայռի զլուխը հասնելու համար։

Գուրգէնը կանգնած այդտեղ սրտատրով նայում էր բարձրաբերձ աշտարակներին, ուր Հեղինէն էր ապրում։ Մտածութիւնների մէջ շփոթուած չդիտէր, ինչ հնար գտնի իւր սրտի սիրելուն տեսնելու համար։ Յանկարծ նրա աչքով ընկան երկու հոգի, որոնք վազելով դէպ իրան էին զալիս։ Մէկն անցաւ, միւսն էլ անցնում էր։ Դուրգէնը նրա թևից բռնեց. — այ մարդ, ինչու

Ես փախչում, պատճառն ասա, լսեմ: — Աւագակ քուրզերը թագ էին կացել. բազմութեամբ յարձակուցին, մեղ խփեցին, իշխանին վիրաւորեցին: Ահա գալիս են այս ճամբով, փախիր, թէ չէ քեզ էլ մեղ հետ գերի կը տանեն կամ կսպանեն: — Սպասիր, այ մարդ, ասեց Գուրզէնը նրա թերամուր սեղմելով այդ իշխանի անունն ի՞նչ է:

— Մուշեղ, Մուշեղ է անունը, Անձևացեաց իշխանն է: Թող, անօրէններն եկան:

Գուրզէնը սուր աշքով չափեց նիզակներով զինուած ձիաւորների խումբը, վերարկուն մի կողմ դցեց, փոքրիկ վահանը ճախ ձեռին, աջով սուրը ճոճեց ու ձիուն խրախուսեց. — Դէ, քեզ տեսնեմ, Յոլակ ինչպէս կը թոշես:

Մարդ ու ծի փոթորկի պէս տեղներից պոկ եկան, թուած յարձակում արին եկող խմբի դէմ: Ահազին սուրը շողում էր աջ ու ձախ. փայլակի նման փայփլում էր ու այս կողմ, այն կողմ մեռել ու վիրաւոր թափթփում: Մի քանի ըոսէից ետ էլ մարդ չը կար կանգնած: Սրի բերանից ազատուղը դուխն առել էր փախել: Միայն մի մարդ էր մնացել, նրա էլ ձեռները մէջքին կապած, ոտներն էլ ձիու փորի տակից շղթայած: Մուշեղ իշխանն էր դա: Գուրզէնը ձիուց իջաւ, թերն արձակեց, ամեն կողմից զինուած անզէն մարդիկ փախչերով եկան, մէկն ընկած գլխարկն էր բերում. միւսը սուրը, երրորդն աջ ուսի վէրքըն էր փաթաթում: Մուշեղը զարմանքն ու ապ-

շութիւնը թոթափելով դարձաւ Գուրզէնին ասեց. — Ո'վ քաջ, ինդրեմ անունդ ինձ բաշխես, որ իմանամ թէ ում եմ շնորհապարտ իմ ազատութիւնով: — Իմ անունն է Շաղպոմեցի Սուրէն, պատասխանեց Գուրզէնը: — Շատ լաւ, եղբայր Սուրէն, զնանք իմ ամրոցը, եթէ կուզես, իմ մօտ կը բընակուես, եթէ չէ, պարզե ու ընծայ կստանաս քու արած մեծ ծառայութեան համար:

Գուրզէնը խիստ զբաղուած էր Մուշեղի կերպարանքը գիտելով. նա զուարձութիւնից, մոլութիւնից յոզնած քառասուն տարեկան մարդ էր: Մըտքումն ասում էր. «ափսոս չէր, որ իմ Հեղինէն այսպէս մարդու բաժին է ընկել»: Հասան կանգուար ժայռի գլուխը, միջնաբերդի առաջ ամբոխը սկսեց քիչ քիչ ցրուել. ազնուականները մտան պարիսպների ներսը, ուր Մուշեղի շղթան կոտրելու էին: Վէրքը վտանգաւոր չէր. պառաւ կինը վէրքի պուռնկները միացընց, զինով, մեղրով և զանազան ինկեղիններով շինած սպեղանի վրէն տարածեց ու ապահովացրեց, որ շուտ կը լաւանայ: Անձևացեաց Տիկինը ամեն հարկաւոր բանը տալուց ետ անտարբեր նայում էր իշխանի հառաչանքին: Զարմանալի կերպարանք սնէր այդ կինը. զիմացինի վրայ ամենից շատ ազդում էին նրա աչքերը. կապոյտ ինչպէս ծով, բայց երկար արտևանունքների տակ ծածկուած, սև էին երեսում: Սաթի պէս սև մազերը պատկում էին նրա գեղեցիկ ճակատը: Ճերմակ գոյնն էր երեսի վրայ ախ-

բողը, ուր կարծես ամենախն ծիծաղ չէր ծագել։ Այս քշախօս կնոջն ամեն մի տեսնող մարդ կարող էր յարգել, բայց նրան կը սիրէր շատ քիչը, որովհետեւ անթափանցելի էր նա ամեն տեսակ մտերմութեան։ Արդէն լուռ ականջ դնելով իմացել էր, թէ ի՞նչ-պէս է ամուսինը գերի բոնուել, թէ ի՞նչպէս մի քաջ օտարականի միջոցով ազատուել, սակայն չէր հետաքրքրում տեսնելու, թէ ով է այդ մարդը, որին դիտելու համար ամրոցի բնակիչները անդադար շարժում էին սենեակի դռան վարագոյրը։ Մուշեղը քիչ հանդարատուելուց վերջն ասեց. — Տիկին, մենք ամրոցի մէջ մի բարերար ունենք։ Նրա արած ծառայութիւնն այն աստիճան մեծ է, որ ի՞նչքան հասարակ մարդ լինի, պէտք է մեզ հետ սեղան նստացնենք, հաւասարի պէս պատուենք։ — Քու կամքն է, իշխան, դու գիտես, պատասխանեց Տիկինը։ — Այդքան անփոյթ մի լինի, դիտեմ անտարբերութեանդ պատճառը. յանցանքն իմն է, որ սրտիդ հակառակ ամուսնութիւն. կատարել տուի։ Այն մարդին հրաւիրէ, սեղան պատրաստել տուր։

Տիկինն անձայն դուրս եկաւ, աղախիններին հարկաւոր հրամանները տուեց. Մի քանի րոպէից ետ Գուրգէնը իշխանի սենեակը մտաւ. Սա խօսեց. — Ներիք, եղբայր Մուրէն, որ մինչև հիմի քեզ մենակ թողինք. տանեցիք զբաղուած էին վէրքերս կապելով։ Ասա տեսնեմ, որտեղից է քու գալը և ի՞նչ սրտի տէր ես, որ այս վտանգաւոր ժամանակ-

ներին առանց ընկերի, առանց թիկնապահի ճանապարհ ես գնում։

Գուրգէնն այս խօսքերին կցկտուր պատասխան տուեց, միայն աչքի տակով դիտում էր սենեակի մութ խորշերը Հեղինէին տեսնելու համար։ Սեղանը բերին։ Իշխանը պատուիրեց որ տիկնոջն էլ կանչեն։ Ասին որ զլխացաւ ունի, անհանգիստ է, չի կարող գալ։ Մուշեղն ախորժակ չունէր, Գուրգէնն էլ մի քանի պատառ ուտելով ձեռը ետ քաշեց։ Բոլորն էլ գնացին իրանց սենեակները քընելու։ Ուշ գիշերին, երբ ամբողջ ամբոցը քնի մէջ էր, Տիկինը բժիշկ-պառաւի պատուէրի հանձայն մի տեսակ օշարակ բերեց, իբրև քնի դեղ իշխանին տուեց։ Սա գաւաթը պարպելով խոր քնի մէջ ընկղզմուեց։ Հեղինէն կանչեց իւր հաւատարիմ աղախնուն, որ ոշառնեաց երկրից էր հետը բերել պատուիրեց որ հոկի իշխանի ամենափոքր շարժմունքին. իսկ ինքը համարձակ դիմեց դէպի Գուրգէնի սենեակը և դուռը բաց արեց։ Ի՞նչպէս կարծում էր, այն վիճակի մէջ էլ գտաւ նրան. նստած վառարանի բոցին էր նայում խոր մտածութիւնների մէջ։ Դուրգէնը նըան իւր առջև աեսնելով ամբողջ մարմնով սարսըռաց։ Շտապ ոտի կանգնեց որ մօտենայ, Հեղինէն կանչեց. — Իրաւունք չունենաս տեղիցդ շարժուել, միայն մի մարդ կարող է ինձ մօտենալ. իսկ նրանք, որ իւրանց խօսքը զրժելով որբերին, անտէրներին խարում են, արժանի են միայն արհամարհանքի։

Գուրգէնը կանգ առաւ ու սառած եռամդով
խօսեց. — թշուտո Հեղինէ, քեզ խաբել են. դու
շուտ յուսահատուել ես ու մեզ երկուսիս այս
ողբալի վիճակի մէջ դրել:

Հեղինէն բարկացած մի համակ համեց ու ե-
րեսին գցելով գոչեց. — Ի՞նչ ես ասում, այս քու
գրած չէ:

Իշխանը քննող աչք գցեց համառօտ նամա-
մակի վրայ, որի բովանդակութիւնն այս էր. «Մըշ-
տունեաց ազնուազարմ Օրիորդ. սրտով ցանկա-
նում էի այնպէս նամակ դրել, որ իմ և քու կամ-
քի համեմատ լինի, բայց Աստծու նախախնամու-
թիւնն ուրիշ կերպ է սահմանել: Երբ քու ձեռը
համնի իմ այս գրածը, ես արդէն կայսրի մեծ
պալատականի դստրի հետ ամուսնացած կլինեմ:
Նոյն բաղը քեզ ես մաղթում եմ: Մշտունեաց
օրիորդին փեսայ չի պակսիլ: Ես այնպէս հան-
գամանքների մէջ էի, որ այս ամուսնութիւնն
ընդունելով կեանքս ազատեցի: Գուրգէն ապու-
տիէլձ Արծրունի»: — Անիծեալ լինի այն խարդախ
ձեռը, որ այս նամակը դրել է, վրդովուած գո-
չեց Գուրգէնը, ոչ այս գիրն է իմը, ոչ այս ստո-
րագրութիւնը և ոչ այս կնիքը: Ամբողջ ութ տարի
արիւն քրտինք թափեցի, ամեն տեսակ արշա-
ւանք արի, որ իմ և քու հայրենի ժառանգու-
թեան փոխարէն մէկն ստեղծեմ: Կայսրից ընծայ
ստացած մի գաւառ ունեմ, որի լիճն ու գետը
տեսնելով Հեղինէս իւր հայրենի երկիրը պէտք է

մտարերէր: Այժմ ամեն ինչ կըրած է: — Ուրեմն
այս քու գրածը չէ: — Ո՛չ, կտրուկ ասեց Գուրգէնը
ու ծոցից մի կնքուած թուղթ հանելով Հեղինէին
մեկնեց. — առ, համեմատիր:

Տիկինը որոշակի տեսաւ եղած խարդախու-
թիւնը, բոլորովին փոխուեց, ձեռը տարաւ աչքերը
և լոիկ յորդառատ արտասունք թափեց: — Ասա,
Հեղինէ, ով կլինի մեր դաւաճանը, որ նրան պատ-
ժելով սիրու մխիթարուի: — Ի՞նչ օգուտ պատժե-
լուց, մի՞թէ եղած չեղած կը դառնայ:

Յուսահատ նստեց բազմոցի վրայ, ծնկներն
էլ ոյժ չունէին. Նրա արտասունքը չէր դադա-
րում: Գուրգէնը որ նրա ոտների մօտ մտահոգ
նստած էր, ասեց. — Հեղինէ, այդ արտասունքը
վկայ է, որ դու ինձ սիրում ես. դարձեալ խօսք
եմ տալիս քեզ հաւատարիմ մնալ. չեմ զղջում
Մուշեղ իշխանին ազատելու համար: Բայց նեն-
գաւորը որ նամակիս բովանդակութիւնը խար-
դափսել է, չի կարող ձեռիցս ազատուել: — Դու ին-
ձանից երջանիկ ես. ստիպուած չես մի մարդու
մօտ ապրել, որին ոչ համակըռում ես, ոչ սիրում:
— Ի հարկէ քու վիճակը աւելի դառն է, բայց
մի՞թէ նոյն վիճակը չէ այսուհետեւ ինձ համար:
Կայսրն ու Մանուէլ սպարապետը ինձ արծիւ էին
կանչում, աչքով նրանց էի տեսնում, մտքով
քեզ, սիրելի. քեզ արժանանալու համար ամեն ինչ
գիւրին էր ինձ համար: Այժմ այլ ես ոչինչ չկայ,
ինձ համար սիւթական թէ բարոյական կեանքը

կորցրել են իրանց քաղցրութիւնը: — Միթէ այսօրուայ արածը, Մուշեղին ազատելը քիչ բան է: — Այդ ամեն մի հայի պարտականութիւն է. ինչու թողնել, որ հայ իշխանին գերի տանեն ազգը նախատելու համար: — Եթե այդպէս է, իմ ազնիւ Գուրգէն, ուրեմն ապրէ ազգիդ համար, ժողովը դիդիդ համար, որի պատիւը, ստացուածքը շատ վաղուց արհամարհուած, ոտնակոյն եղած և այժմ էլ լինում է: Դու, սրտիս միակ սիրելի, դնա, քաջու արդար եղիր, զրկուածին օգնութեան հասիր. որբին հայր եղիր, այրուն միխթարիչ. թող Աստուած քեզ վարձատրէ: Եթէ ժողովը բերանից քու մասին օրհնութիւն լսեմ, ցաւալից սիրտս կը միխթարուի: — Թող օրհնուած լինի քու սրտի փափազը, իմ անզին հրեշտակ, խօսեց Գուրգէնը. տարին շրոլորած անունս կը լսես:

Հեղինէն կանգնեց, ուզում էր զնալ: Գուրգէնը հարցրեց. — ուրեմն այնքաններկար տարիններից ետ այս մեր առաջին ու վերջին տեսութիւնն է: — Այս, սիրելիս, Աստուած ինքը այսպէս կամեցաւ, թող սոյն Աստուածը քեզ օգնական լինի: — Դէ, մնաս բարով, իմ հրեշտակ, ասեց Գուրգէնն ու նրան թեւրի ու կրծքի մէջ սեղմելով սիրուն գըլուխը ծածկեց համբոյներով:

Հեղինէն առաջն անշարժ կանգնած վրայ բերեց. «Աստուած լինի քու օգնականը, իմ սրտի միակ սէր», այս ասեց ու աներեսոյթ եղաւ, Հետեւալ առաւօտ կանդուարի բնակիչները շատ

վնտուեցին Շաղգումեցի Սուրէնին, չգտան: Զարմացաւ, որ իւր ծառայութեան համար իշխանից բան չընդունած հեռացել էր:

Չ

Հեղինէի վերջին խօսքերը սաստիկ ազգեցութիւն էին արել Գուրգէնի վրայ. տխուր ու զանդաղ ճանապարհորդում էր, ուր խեղճ գիւղ էր տեսնում, այնտեղ իջնում, շինականների հետ սիրով զրոյց էր անում, իսկ իշխանական ամրոց տեսնելիս անցնում էր: Գիւղական պարզութիւնը, գարի հացն ու մածունը այժմ նըան աւելի էին դուր գալիս: Այս ուղեգնացութիւնը շաբաթներ տևեց. անցաւ Արտազու գաւառը, հետուից պարզ տեսնում էր Մասիսը: Մաքերով պաշարուած արդէն մօտենում էր Բագրեւանդայ գաւառին: Օդի մեղմացած, ձների հալ ընկած, վտակների կազմուելու ժամանակն էր, տեսաւ մի մարդ, իւր առջեկց հաստատ քայլերով կլսակախ զնում է: Քայլուածքից ճանաչեց, ձին քիչ արագ քշելով մօտեցաւ ու ասեց. — Դու ես, Յովսան եղբայր: — Այս, Գուրգէն իշխան, պատասխանեց Յովսանը առանց զլուխը բարձրացնելու: — Ո՞րտեղից ես գալիս: — Տարօնից: — Կարսղ եմ հարցնել, թէ ուր ես զնում: — Ինչու չէ, զնում եմ հայոց կաթողիկոսին տեսնելու: — Եթեի առաջարկութիւն ունես անելու: — Անշուշտ. Եթէ հետաքրքիր ես, այդ ես կասեմ: Առաջարկելու եմ, կոնդակ հանի,

ողջ Հայաստանում յայտնի քարողիչների բերանով, որ սուրբ պատերազմի ժամանակը հասելէ. թռն նզովի այն հայերին, որ կարողութիւն ունեն զէնք վերցնելու և չեն շարժւում, կամ նրանց, որ պատերազմին հաց կարող են տանել ու չեն տանում, կամ ձի ու զէնք ունեն, ոչ իրանք են դործածում, ոչ ուրիշն տալիս: Վեհափառը թռն իւր եկեղեցական դասով գայ ո. Կարապետում նստի: Եթէ իշխանները չշարժուեն, Վեհի ձայնի վրայ ժողովրդականք կը շարժուեն:

— Կեցցես Յովան, շատ պատուական հայ ես: Այսօր ողջ Հայաստանում թերևս քեզանից հայրենաս!ը մարդ չկայ: — Գուրգէն իշխան, ուրեմն դու համամիտ ես այս խորհրդին: — Բոլոր հոգով ու սրտով: — Եւ ինչ ես կարծում, կաթողիկոսը կընդունի առաջարկութիւնս: — Մեր եկեղեցականների թուլութիւնը և անհոգութիւնը ճանաչելով կասկածում եմ, բայց չեմ կարծում, որ մերժի:

Այդ միջոցին Գուրգէնը ձիուց իջած էր: Երկուսով զնում էին խօսելով, Յուրակը իւր տիրոջ ետնից հանդարտ քայլում էր: Յովսանը յանկարծ կտնդ առաւ ու հարցրեց. — Իսկ դու ուր ես գնում, իշխան: — Բազրկանդ, իմ քեռի Քուրդիկ իշխանի մօտ: — Այդ մարդը Մամիկոննեան ցեղից է, բայց վարդան չէ: — Դու մի Ղեռնդ գտիր, ես քեզ տաս վարդան տամ, Յովսան: — Ըստ ճշշմարիտ է, եթէ Ղեռնդին գտնեմ, մեծ վարդանին էլ չեմ վնտովի:

Գուրգէն իսկոյն յիշեց այդ մարդու ունեցած խստութիւնը դէպի նախարարները. առանց պատասխան տալու ճանապարհը շարունակեց մինչև մի գիւղ երեաց: — Յնչիան եղբայր, այլ ես ուր ես գնում, արի միատեղ դնանք այս գիւղու: — Ես օր առաջ ուղում եմ Սասուն գառնալ, ուշանալ չեմ կարող, բայց որպէս զի չկարծես թէ իշխանազուն մարդուց փախչում եմ, ընկեր կը դառնամ քեզ այս գիւղում:

Մի բանի բոպէից ետ հիւրասէր զիւղականի տանն էին երկու բարեկամները, նստած կրակի առաջ զրոյց էին անում: Շատ նիւթերի վրայ համամիտ էին. երկուսն էլ գուշակում էին, որ գարնանը Հայաստանի վրայ փոթորիկ է լինելու, միայն երկիրը ամեն մի յարձակման կընդիմագրի, եթէ զլաւարները միահամուռ ու միահոգի գործեն: Այդ բանի համար հոգեոր իշխանութիւնը պէտք է շարժուի ու ժողովրդին շարժի բարբարու թշնամու գլու: Երկար խօսակցութիւն ունենալով իրար վրայ մնծ համարմունք կազմեցին, խոստացան յաջողութեան թէ ձախորդութեան պարագայում իրար տեղեկութիւն տալ և օգնել:

Հետեւալ օրը Գուրգէնը զնաց Բազրկանդ քեռի իշխանին գտնելու, իսկ Յովսանը Երասխն անցնելով զնաց դէպի Գուրին, իմանալով որ Յովսաննէս կաթողիկոսը ժողով ունի երելիների նետ, շտապեց այնաեղ հասնել, քանի որ ցըռւած չեն: Կաթողիկոսարանի դահլիճի մէջ զումարուած

ժողովը շատ ծանրակշիռ էր. բացի կաթողիկոսից այնուեղ էին Բագրատունի Սմբատ հայոց Սպարապետը, նրա որդի Աշոտ իշխանը, կալանաւորուած Բագրատի Աշոտ և Դաւիթ որդիքը: Արձրունեաց ցեղից այնուեղ էր Գուրգէնը. Միւնեաց տանից ներկայ էր Վասակ մեծ նախարարը իւր իշխաններով՝ այն է Գարդմանաց Կարիճը, Աղուանից Եսային, Ռւտէացոց Ստեփանոսը, Խաչենի տէր Ստրներսէնը, ուրիշ իշխաններ. Իշխանազուններ և Հայաստանի շատ եղիսկովուներ ու արքեպիսկոպոսներ: Յովհաննէս կաթողիկոսը, որի աջ կողմը Սմբատ Բագրատունին էր բազմած, ձախ կողմը Վասակ Սիւնին, սկսեց մի երկար պատմութիւն անել. նրա զլիաւոր իմաստն էր, թէ Աստուած զայրացել է Հայաստանի վրայ նրա բնակիչների չարագործութեան ու յանցանքների համար. շուտով իւր ցասումը թափելու է հայ ազգի զլիին: Ռւտի հարկաւոր է, ապաշխարել, մեղայ կանչել, շուտ գեսան ուղարկել Բաղդատի ամիրապետի մօտ, որ Աստծու բարկութեան գաւազանն է, նրան հանգարեցնել ընծաներով, որպէսզի սասունցիների զործած յիմարութեան պատճառով ողջ Հայաստանը չը տուժի:

Այդ միջոցին մի երիտասարդ եկեղեցական ծանուցեց, թէ մի սասունցի խիստ կարևոր առաջարկութիւն ունի անելու, ներս մտնելու իրաւունք է խնդրում: Կաթողիկոսը սպարապետի հաւանութեամբ հրաման տուեց ներս ընդունելու:

Յովհաննը ներս եկաւ, ձեռի նիզակն անկիւնում դնելով վեհափառի աջն առաւ, դահլիճի մէջ կանգնեց իւր պարզ լեռնականի հագուստով: Ժողովականները նրան դիտելով սկսան լոիկ նկատողութիւններ անել: Կաթողիկոսը բարձր ձայնով խօսեց. — Դու կամեցել ես այս ազնուակազմ ժողովին ներկայանալ և առաջարկութիւն անել հա: Մէնը այնպէս էինք կարծում, որ անպիտան սասունցիներդ երես չգէտք է ունենաք ազգի առաջ գուրս գալ. ձեր յիմար գործողութիւնով կրակ ու պատուհաս եք բերելու աշխարհի համար: Բայց տեսնում եմ, գուք այդ էլ չըմբռնելով վեր եք կացել եկել մեզ խորհուրդ տալու: Ասա տեսնենք, ի՞նչ ես ձեւկերպել մտքումդ:

Եեռնցին խոնարհեցրած գլուխը բարձրացրեց, երկար մազերը ցնցեց, փայլակնացայտ աչքերը ժողովականների վրայ պատեցրեց: Երբ ամեն կողմ լուութիւն էր տիրել, Յովհաննը յստակ ձայնով այսպէս խօսեց. — Հայ աշխարհի Հոգեոր տէր և մեծազօր իշխաններ, հասկանում եմ այն մեծ շնորհը որ անում էք, ինձպէս ողորմելի լեռնականին ականջ գնելով: Ես Սասունից այժմ չեմ եկել, որ մեր արածի համար ներողութիւն խրնդրեմ, այլ եկել եմ ազգը վերահաս վտանգից փըրկելու համար առաջարկութիւն անեմ: Տեսնում եմ, որ առաջ պէտք է սասունցոց արդարացնեմ, ապա առաջարկս անեմ: Դուք հարցնում էք՝ թէ ի՞նչ արին սասունցիք: Նրանց արածներից ո՞րը

յիշեմ: Երբ նրանք տեսան, որ Բագրատը դաւաճանութիւնով ընտանիքի հետ գերի է տարուած, Տարօնի ողջ գաւառը անօրէններից յափշտակուել է, կանայք, մարդիկ, տղէք կոտորածի, մատնութեան են մատնուել ո. Կարապետն անգամ բարբարուաներից պաշարուել է ու բոլոր հայերի յոյսը իրանց վրայ է, սասունցիք իջան իրանց լեռներից և այն արին, ինչ որ Բագրատ, Աշոտ և Գուրգէն իշխաններն էին արել: Միթէ յանցանք էր հայ քրիստոնեային սրից, շղթայից ազատելը, միթէ յանցանք էր մզկիթ դարձրած եկեղեցիները խլելը, նորից Քրիստոսին տալը. միթէ յանցանք էր ո. Կարապետի վրայ յարձակողներին սրի ու նրի մատնելը: Եթէ սասունցիների արածը յանդիմանութեան արժանի է, ուրեմն անզգամ արաբների գործած չարութիւնները մեր ազգի դէմ արդար և իրաւացի են: Մատեցէք, թէ այսպէս վարուելու հետեանքը ի՞նչ կըլինի:— Մենք կարիք չունենք քարոզի, խօսեց Սոլարապետը, ոու քո առաջարկն արա, Հոգեոր տէրը այդ բանի համար է հրաման տուել:

Յովնանն զգաց որ այդ մարդկանց համոզելը զուր է. սակայն սուրբ պարտք համարեց ճշմարտութիւնն ասել ժողովականներին երկիրը կորսակց ազատելու համար: Երկրորդ անգամ խօսեց. — Մենք լեռնական մարդիկ ենք, աշխարհիս կառավարութիւնից բան չենք հասկանում, բայց սրտի ցաւով տեսնում ենք, որ մեր աշխարհի կա-

ուավարիչները շատ անգամ թշնամու իւարէութեան զոհ են գնում: Նրանք մեծ մարդիկ են, իրանց անձն ու գանձը պահպանելու համար վատանգի ժամանակ թող վակուեն ամրոցներում, միայն թոյլ տան, որ ժողովուրդն ու հոգեորականները հաւատի պատերազմ սկսեն: Այդ նպատակով Սասունի ժողովուրդը խնդրում է Հոգեոր տէրիցդ, որ օրհութեան կոնդակ հանես, բոլոր հայերին զէնքի հրաւիրես, գուրս գան անօրէնների դէմ: ինքոդ բնակուես ո. Կարապետի վանքում մինչև պատերազմի վերջը. նուիրակներ հանես, որ ձի, զէնք, զրամ ժողովեն հայ երկրից ու հասցնեն պատերազմի դաշտը:

— Այս ի՞նչ խնդիրների, հրաւէրների մասին է ճառում այս յիմար լեռնականը, ընդհատեց Յովնանին Գարդմանաց իշխանը. մենք հազար անգամ աւելի յիմար պէտք է լինենք, որ այսպիսի առաջարկութիւնների համբերենք: Նրա կարծիքով մենք նստելու ենք ամրոցներում, իսկ մեր շինականները զինուելու, պատերազմելու են, որպէս զի մի գեղեցիկ օր էլ այդ դէնքը մեր դէմ դարձնեն: Միթէ, այսպէս խօսքեր լսելու համբերութիւն ունէք:

Այս նկատողութիւնից տաքացած Սմբատ Սպարապետը դարձաւ Յովնանին ասեց. — Մեր ներողամտութիւնը ոու ի չարը գործ գրիր. համարձակութիւնդ յանդիմութեան հասցըիր և այս մեծազօր նախարարներին նախատեցիր: Այդ հա-

մարձակ խորհուրդների համար սասունցիք պէտք է պատիժ կրեն: Մինչև քննութիւններ կատարուելը դու պէտք է այստեղ բանդարկուած մնան իբրև ժողովրդի մէջ վնասակար մտքեր տարածող:

Այս վճիռը լսուելուն պէս զինուորները մօտեցան և Յովնանին գուրս հանելով իջեցրին կաթողիկոսարանի բանդը: Հայ իշխանները և նախարարները նրա խօսքերը մեկնելով սոսկալի հետևանքներ էին հանում իրանց իշխանութեան համար: Թշնամու գէմ գործելու մասին ոչ մինն իշխաններից իւր ընկերի հետ չէր միաբանում, ոչ ով չէր ուզում իւր սահմաններից հեռանալ: Ինչպէս անօգուտ մտել էին ժողով, այնպէս էլ անօգուտ դուրս եկան, հեծան ծիերը ու թիկնապահների հետ ցըռւեցին իրանց գաւառները:

Այդ բազմութեան մէջ կային երիտասարդ իշխանազուններ, որոնց պարաւկանութիւնն էր լուս կենալ և լսել իրանց հայրերին, հօրեղբայրներին: Մի ծանրապուխ երիտասարդ, որ ուշադրութիւնով ամեն ինչ դիտում էր, մօտեցաւ սպառապետին ասեց.—Հայր, բաւական համարիր սասունցու պատիժը, հրաման տուր, գնամ, արձակեմ, որ իւր ճանապարհը շարունակի:—Իրաւունք ունես, նրդի, գնա, արձակիր: Ճշմարտութիւնը լու բան է, բայց ամեն տեղ ասել չի լինիլ:

Երիտասարդը Աշոտն էր. իջաւ ստորին սենեակներից մինը ու պատուիրեց պահապաններին, որ սասունցուն իւր մօտ բերեն: Հէնց որ եկաւ,

Աշոտն ասեց. — Յովնան եղբայր, ինչ պէտք կար որ իշխանների ժողովում բոլոր կարծիքներդ յայտնում ես: Աւելի լաւ չէ լոիկ, մնջիկ գործել, ժողովուրդը պատրաստել և վտանգի ժամը հասնելուն պէս գործ սկսել:

—Ի շխան, խօսեց Յովնանն անխռով, շատ սրամիտ երիտասարդ ես երեւում. կարիք չկայ ինձ հետ այդպէս խորախորհուրդ կերպով խօսել: Եթէ կարենայի ասածդ անել, ժողովրդին կարեւոր ժամին ոտքի հանել իրանց յիմար տէրերի գէմ, օտարահաւատ բռնաւորների գէմ, այս բոպէիս կանէի: Բայց այդ լեաւը շարժելու հաւատն ու կարողութիւնը վերեի զառամեալ և ողորմելի ծերի ձեռին է: Ի՞նչ օգուտ, նա էլ այդ զօրութիւնը չի ճանաչում և չի իմանում ազգին օգտակար լինել: Այդ տխմար իշխանները գուր էին իմ գէմ գոռում, մոընչում, հաւատացնում եմ քեզ, հինգ տարուց ետ դրանցից մինն էլ չի մնալ Հայաստանում, ամենը Բաղդատ քշուած ու մահմեղական դարձած կըլինեն: Ա՛խ, Ղեռնդ, Ղեռնդ, ուր ես: Հայ աշխարհը քեզ պէս մեծ մարդ, մեծ քահանայ մի հատ միայն բերեց, ափսսո. և նրանից ետ իւր ծնելու կարողութիւնը կորաւ: — Յովնան եղբայր, մի յուսահատուիլ, չէ որ համբերելը, պարագաներից օգուտ քաղելը իմաստուն, հեռատես մարդի առաքինութիւնն է: Մեր թշնամին թէպէտ զօրաւոր է, բայց տես ինչպէս օր օրի վրայ հալւում է. թէպէտ ընդարձակ աշխարհների տէր է,

բայց ինչպէս նա օր օրի վրայ տկարանում է և
իւր միջից բաժանուում: Ո՞վ երիտասարդ, ինչու
տեսնում ես թշնամու ընկնելը և անուշագիր թո-
ղում քու ոչնչանալդ: Ո՞ւր էր թէ կարողանայիր
քեզ անվթար պահպանել քեզ հետ ես էլ կըմիշի-
թարուէի: Բայց այժմ մնում է ինձ կրկին Սասունի
լեռները դառնալ, սպասել այն բարկութեան, որ
գալու է:

Եշոտ Բազրատունուց մի թուր ստացաւ Յով-
նանն իբրև բարեկամական յիշատակ ու նիզակի
վրայ յենուած սրտակոտոր հեռացաւ այդտեղից,
որովհետեւ անկարող եղաւ. հոգեորական դասին
շարժել յօդուա ժողովրդի:

Ե

Յովնանը հասաւ երասխի ափը. ջուրը
խրոխա ընթացքով գալիս էր անցնում: Ճանա-
պարհից քիչ հեռու նստեց, մտածում էր: Քսան-
չորս ժամ քայլել էր ու բերանը բան չէր դրել:
Միտքը յափշտակել էր Բազրարանից ներքեւ երկող
մի փոքր վանք. այդտեղ Յովնանն երկու տարի
կալանաւորուած էր եղել. նայում էր աշտարա-
կին, ուր այնքան անքուն գիշերներ էր անցկաց-
րել, յիշում էր իւր սրտի համար այն սոսկալի
վայրկեանները, որոնք չարչարանքի երկար տա-
րիներ էին. բառ չէր գտնում իւր տանջանքները
բացարելու համար, միայն զգում էր սրտի խոր-
բում, որ սիրել է անյօյս, որ սիրել է, թշուառ:

Յիշում էր տիսուր գիշերների անհամնգիստ քունը,
ուր Վասկանուշի հրեշտակային ու պաշտելի կեր-
պարանքը երեւում էր փայլակի պէս ու անհետա-
նում: Վերջն այս յիշողութիւններից յոգնած ձեռը
ճակատը տարաւ ամեն խորհրդածութիւն վանե-
լու համար, բայց սրտի սպիտակեալ վէրքը ձայն
էր տալիս, որ չէր բժշկուած, որ նա չէր մոռա-
ցած իւր սիրելուն, թէն անցել էին քսան և հինգ
տարի: Տեղից ցնցուեց, հանեց զգեստներն ու
գինքերը կապելով զլիսի վրայ, ընկաւ զետի բար-
կացայտ յորձանքների մէջ ու ալիքների հետ սրա-
նալով ներքեւ վանքի հանդէպ դուրս եկաւ: Զուրը
վրայից թափ տալով հագաւ շորերը ու Վասկա-
նուշի վրայ մտածելով գիւղի կողքով դէպի վան-
քը զնաց. այդ ժամանակ երկու պատանի նրան
մօտեցան ու մի տուն հրաւիրեցին: Յանկարծ նրա
առաջ լոյս ընկաւ Գուրգէն իշխանը. — Բարի տե-
սայ քեզ, Յովնան եղբայր. նոր լսեցի քեզ պա-
տահած անախորժ ընդունելութիւնը, սիրտս ան-
հանգիստ էր. վախենում էի առանց քեզ տեսնե-
լու մնամ. փափագում էի որ տեսնուենք և եթէ
կարելի բան կայ, զործ գնենք: — Ի՞նչ մնաց ա-
նելու, իշխան, պատասխանեց Յովնանը տիրու-
թեամբ, ոչ կաթողիկոսից յոյս կայ, ոչ իշխանից,
իսկ ժողովուրդն անհովիւ ոչխար է, վազը կամ
միւս օրը պիտի մատնուի բարբարոսների ճանկը:
Եթէ կաթողիկոսն ուղենար շարժուել, իմ խոր-
հրդիս հետեւելով գար ո, Կարապետ, եկեղեցական

բանակին ոտքի հանէր, ժողովուրդը հարիւր հազարով անմիջապէս կը կանգնէր, այն ժամանակ մենք հայերս ոչ վատ կը լինէինք, ոչ անմիաբան, ոչ նախանձու, այլ միայն քարերով զինուած թշշնամուն ինչպէս շների կը հալտէինք, որի անարդ ոտների տակ հեծում են մեր զաւակները, մեր կանայքը, մեր իշխանները, մեր եկեղեցին, մեր հաւատը։ Մենք կարող էինք առանց ուրիշի օգնութեան արաբական և յոյն զօրքերին դիմագրել և մեր երկիրը պաշտպանել, եթէ մեր այս յիմար նախարարական ու ազնուապետական կառավարութեան ձեր չունենացինք, որ մեր ազգը հարիւր կտոր անելով անթիւ բռնաւորների գերի է դարձրել։ Ահա այս է իմ ցաւը։

Լուելեայն, գրեթէ առանց խօսելու կերակուր կերան, ապա Գուրգէնը Յովնանի երեսը նայելով ասեց. «գու պէտք է քիչ քնես, որովհետեւ յետոյ գնալու տեղ ունենք»։ Յովնանը ընդունեց նրա առաջարկն ու պարկեց։ Բայց գեռ կէս զիշեր չեղած Յովնանը ելաւ կանգնեց, նրա զօրեղ կազմուածքը երկար հանգստանալու պէտք չունէր։ Երկու բարեկամները ձիարշաւ զնացին Ախուրեանն ի վեր Բագարանու ձանապարհով.—Յովնան, Աըմբատ սպարապետի որդի Աշոտն ինձ ապսպել է, որ քեզ առնեմ գնամ Բագարան։ Շատ կարեոր ինդրի վրայ կամենում է խորհրդածել։

Գուրգէն իշխան, ձմարիտ է, այդ երիտասարդն ինձ բանդից ազատեց, բայց դրանով հա-

յոց ազգը չի փրկուիլ։ Այժմ փորձով տեսնենք, ինչ է նա, մինչև ուր է զնում նրա դործունէութիւնը ընդհանուր ազդի համար։

Ամեն կողմից խումբ խումբ հեծեալներ էին հասնում Բագարան։ Կամաց խօսելով ձիաներից իջան ու հրաւիրուեցին գահլիճ։ Ամենն էլ երիտասարդ իշխանազուններ էին, նրանց միջի հական գուրգէնն էր։ Աշոտ Բագրատունին երևաց այլ իշխանների հետ ու ամենին քաղաքավարութեամբ ողջունեց։ Երբ բոլորը խոր լուութիւն էին պահում, Աշոտն այսպէս խօսեց.

— Ով ազնիւ բարեկամներ և իշխանազուններ, երբէք հայրենիքն ու կրօնը այնպէս ծանր ու վտանգաւոր վիճակի մէջ չեն եղել ինչպէս այսօր։ քաղաքներն աւերակ, զիւղերն անշէն, դաշտերն անտպատ, ժողովուրդը տարագիր ու փախստական, լեռների ու ժայռերի մէջ թափուած։ Հայաստանի վիճակը շատերի վրայ յուսահատութիւնն է բերել։ Բայց յուսահատուելը, լքուելը ոչ մարդի վայել է և ոչ քրիստոնէի։ Եթէ մենք խելքով ու քաջութեամբ վարուենք, ես այնպէս եմ հաւատում, որ Աստուած մեզ կօգնի, դառն վիճակից մեղ կազատի։ Մեր հայոց պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ այս թշնամիների դէմ մեր պապերը քաջութեամբ պատերազմել են և զեռերէլ մեր քաջ սասունցիք արար ոստիկանին իւր բոլոր բանակով բնաջինջ արին։ Եկէք, մտածենք, թէ ինչ պէտք է անել։ Ինդրեմ համարձակ խօ-

սեցէք, ամենիդ վրայ վստահ եմ, զիտեմ որ մեր գաղտնիքը գաղտնիք կը մնայ և գործելու համար միայն կը յայտնուի:

Խօսքն աւարտուելուց վերջը բըթմըջիւն ընկաւ դահլիճի մէջ, բայց բարձրաձայն խօսելու ոչ ով չամարձակեց: Յովնանն ու Գուրգէնը նոյնպէս լուռ էին: Աշոտն անակնկալ դարձաւ նրանց. — Դուք էլ ոչ մի առաջարկ չունէք: — Երկու օր առաջ իմ առաջարկը լսեցիք իշխան, աեղից շարժուելով խօսեց Յովնանը, ես լիայոյս էի, եթէ Հոգելոր տէրը իշխանութեան գլուխ կանգնէր, կարող էր ազգին հրաշքներ գործել տալ. նա այդ չուգեց: Դուք այս երիտասարդ իշխանազունների վրայ յոյս էք զնում և փրկութիւն փնդում: Տայ Աստուած: Բայց ես այս ժողովի մէջ անյարմար անձն եմ — ոչ իշխանազն եմ, ոչ երիտասարդ: — Քաջ իշխան, ասեց Գուրգէնն Աշոտին, դուք այս ժողովը հրաւիրելով անշուշտ ձեր մտքում պատրաստ առաջարկ ունէիք. համարձակ ասեցէք, ժամավառ մի՛ լինէք:

Գուրգէնի ձայնը որ առիւծի մոընչիւնի էր նմանում, դահլիճի ուշադրութիւնն իւր կողմը դրաւեց: Աշոտը շարունակեց խօսքն այսպէս:

— Այսպիսի վիճակում, Գուրգէն իշխան, ազգի պարտաւորութիւնն է իրան զօրացնելը. այս զօրութեան համար պէտք է մի անխզելի միութիւն կազմել: Մեր բոլոր թշուառութեան աղբիւը նրա մէջն է, որ զօրաւոր կապ չունենք: Ա-

բաբացին զօրաւոր է, որովհետեւ ամիբապետ ունի. բոլորը նրան հնազանդում են. յոյնը զօրաւոր է նոյնպէս, որովհետեւ կայսր ունի: Այն բոլոր ազգերը, որ զօրաւոր, ամուր իշխանութիւն չունեն, այս ամիբապետին ու կայսրին ծառայ են ու գերի: Իմ կարծիքն այն է, որ մենք էլ իշխանութիւն հաստատենք և բոլոր սրաով նրան կուշենք: Հայաստանին ուտող, սպառող ցեցը անիշխանութիւնն է, այս է միակ պատճառը նրա կործանման ու գերութեան:

Նրա լոելուց ետ երիտասարդները և ժողովուրդն ասին. «Աշոտ իշխան, քեզ ենք արժանաւոր տեսնում այդ իշխանութեան, դու յանձն առ, մենք պատրաստ ենք քեզ հնազանդուել և օգնել:

— Այդ պաշտօնը իւր դժուարութիւններն ունի, խօսեց Աշոտը. ես մատնացոյց եմ անում ուրիշի վրայ. միթէ աւելի յարմար չէր այդ իշխանութիւնը յանձնել իմ սպարապետ հօրը, որի քաջութիւնը, խոհեմութիւնը ողջ Հայաստանին յայտնի է:

— Թո՞ղ լինի Սմբատ սպարապետը, գոչեցին ժողովականները միաբերան, կեցցէ նա, արդարւնա կարող է երկրին փրկութիւն բերել: Նա կը լինի զօրաւոր կապ մեր միութեան:

Ժողովը ծածուկ էր, ուստի լուսանալուն չսպասելով ժողովականներն սկսեցին ցըռւել: Դոնից գուրս գալիս Գուրգէնը Յովնանին հարցըցեց. — Եղբայր, քու կարծիքն ի՞նչ է, ես սպարա-

պետին ոչ տեսել եմ և ոչ լսել. արդեօք կարող
է ազգը փրկել: — Իմ կարծիքով ներկայ բողեին
մի մարդ միայն կարող էր ազգը փրկել, այդ մար-
դը հայոց կաթողիկոսն էր և նա չըկամեցաւ:
Աստուած ինքն անի նրա դատաստանը: Յոյսա-
բոլորից կարած դարձեալ գնալու եմ մեր լեռնե-
րը. ինչքան Աստուած շնորը է տուել, աշխատե-
լու եմ ազատութեան գործի համար, Գուրգէն,
մնան բարով, եթէ չըմեռայ, էլի կըտեսնուենք:

Է

Ապրիլ ամսին Հայաստանում արհաւրալից
գարուն էր, Ամիրապետն անհամար զօրք էր հա-
նել, վճռած լինելով հայերին բնաջինջ անել: Բու-
դա սպարապետին հրաման էր տուել սովոր, սրով,
գերութիւնով տառապեցնել Հայաստանը. ազնուա-
կաններին աքսորել, գեղեցիկների կեանքը խնա-
յելով ուրացնել, ուամիկ ժողովրդին ոչնչացնել և
երկիրը վերցնել ամայի դրութեամբ: Բաղ՛ջից էլ
լուրեր էին հասնում, որ արաբական ահազին բա-
նակ ուղղակի Սասուն էր գալիս Խութեցոց սրի-
բերան տալու: Սակայն Յովնանն էլ պարապ չէր-
բոլոր կիրճերը ամրացնել էր տուել, պահապան-
ներ գրել լեռների անառիկ կողմերը. տղաներին
ու ծերերին ապահովել էր պաշարով ու ինքը մի
քանի հազար հոգով Խութի ստորոտում դարան
մտած սպասում էր թշնամու դալուն: Եւ թշնա-
մին գալիս էր իւր բանակը երեք մասի բաժա-

նած: Երբ Յովնանը լսեց թէ Բոնաշէն գաւառն
է մաել, հետն առաւ իւր լնամիր զինուորները և
խուլ աեղերով մթանը հասաւ նրա զիմաց: Կաղ-
նի ծառերով ծածկուած խիտ-խիտ լեռները, ան-
դնդախոր ձորերը, որ լեռնականներին մի առ մի
ծանօթ էին, Յովնանին վատահութիւն էին տա-
լիս: Փամանակ տուեց իւր մարդկանց, որ քիչ դա-
դար առնեն, հայ ուտեն, յետոյ նրանց երեք
խմբի բաժանեց: Երբ թշնամին ապահով քնի մէջ
էր թագուած, սասունցիք երեք կողմերից ազա-
գակելով, սուրերը վահաններին զարկելով յարձա-
կուեցին թշնամու վրայ և սկսան անխնայ կոտո-
րել: Յովնանի պատուէրի համաձայն խութեցիք
«սուրբ առաքեալ» էին կոչում ու հարուածում
թշնամուն: Այդ ծայները արձագանք էին տալիս
լեռների մէջ և սարսափահար անում հակառա-
կորդին: Թշնամին փախչել էր ուզում, ճանա-
պարհ չէր գտնում. մթան մէջ միայն սրի փայն
էր տեսնում ու նիզակի հարուած ստանում: Կո-
տորածի զօրծողութիւնը վերջացաւ, երբ օտար
ձայները բոլորովին լուցին: Յովնանն Աստծուն
փառը տուեց, իսկ քաջ լեռնականները իրանց
իմացած սազմուները երգեցին: Արշալոյար բա-
ցուելիս տեսան գետինը զիակներով ծածկուած:
Ժայռերից զլորուածների թիւը աւելի շատ էր,
քան թէ սրով սպանուածները: Սասունցոց հա-
մարմունքը Յովնանի վրայ աւելի բազմապատ-
կուեց. իրանց երախտագիտութիւնը յայտնելու

համար գաղանի որոշեցին, որ կողոպուտի մէջ գտնուած բոլոր ոսկին ու արծաթը նրան ընծայեն: Յովնանը նրանց դիտաւորութիւնն իմանալով սկսեց այսպէս խօսել.

—Իմ սիրելի խոռոշեցիք, միթէ ձեզ առանց նուերի չեմ ճանաչում. այս պատերազմուն մէջ ձեր ցոյց տուած քաջութիւնն ամեն վարձատրութիւնից բարձր է. Գնացէք, աւարը բաժանեցէք ձեր մէջ, միայն պաշարը յանձնեցէք ամբարապետին: Մեր առաջ դեռ մեծ աշխատութիւն կայ. թշնամու բանակը մեծ է և բազմաթիւ, հարկաւոր չէ յուսահատուիլ ու վախենալ, այլ իմանալ բաջինել և համբերել: Ես իմ վիճակից գոհ եմ. մի պատառ հացն էլ ինձ բաւական է. գնացէք, դուք էլ ձեր սակաւապետութիւնը ձեռից մի թողէք:

Բուղան երբ իմացաւ թէ այսպիսի անակնկալ հարուած է հասել արաբական զօրքին, արգելեց այդ մասին խօսել, չլինի թէ հայերը աւելի խրախուսւեն: Ամեն կողմից յարձակում արեց Սասունի վրայ, հաղորդակցութեան բոլոր ճանապարհները կտրեց: Բայց Յովնանը իւր քաջիներին անցած ուր ասես ճամբայ էր գտնում: Եթէ չկար, հնարում էր, յանկարծ վրայ էր տալիս այդ բազմալեզու ամբոխի ցիրուցան խմբերի վրայ, կոտորած հասցնում: Հէնց որ տեսնում էր, թէ թշնամուն օգնութիւն է գալիս, քաշում էր իւր լեռները, այնտեղ ինչպէս թուղար հաւաքւում՝ թանձրանում էր, որ կրկին անտկնկալ որոտմուն-

քով փայլակի, կայծակի, կարկըտի կերպով թափուի բարբարոս թշնամու գլխին: Երկու կողմից էլ անգութ էին կարուել: Արաբը գերի ընկած սասունցուն տանջելով բերում էր լեռնականների աշքի առաջ ապանում: Սասունցին էլ շուտով վրէժ էր հանում, տամն արաբացու գլուխ միանգամից էր շպրտում Բուղայի բանակը: Այնքան այսպէս տեսեց մինչև որ զօրքը Քուղայի դէմ արտնջաց ասելով՝ ինչ շահ լեռնականների հետ կոռւելուց: Այդ ժամանակ Բուղան խորամանկ զէնքի դիմեց ու պատգամաւոր ուղարկեց Յովնանի մօտ այս խօսքերով.—աղի, հնազանդութիւն խոստացիր մեծ թագաւորին, երդւում եմ իմ սուրբ հաւատով, որ քեզ կամ քու լեռնականներին ամենեին վնաս տուողը չեմ: Պաշտեցէք ձեր կրօնը ինչպէս կուղէք, միայն թէ ապստամբութեան զէնքը թողէք:

Պատգամաւորի աչքերը փակած բերին Յովնանի մօտ. լեռան վրայ աչքերի կապը վերցրին: Արաբը մնաց զարմանքով մտածելիս. «միթէ սա է այն մարդը, որի անունը արդէն ամիրապետին է հասել, որից մենք ամենս վախի մէջ ենք»: Յովնանը բրդէ կապան հագած, ժայռի վրայ նստած, նիզակն ու վահանը ոտների մօտ դրած առանց գլուխը բարձրացնելու այնքան համբերեց, մինչև պատգամաւորն իւր բոլոր ճարտարութիւնը գործածելով խօսրը վերջացրեց. ապա իւր կրակոտ չքերը նրա վրայ տնկելով ասեց.

— Գնա քու զօրավարին ասա, ուղիղ է, խութեցիք լեռնական են, բայց տաճիկների երգում ուտելուն ու խաբելուն հաւատացող յիմարներ չեն: Եթէ բոլոր հայ նախարարները և իշխանները ձեր ստութիւններին լսելու փոխարէն զէնքով պատերազմէին, նրանք տանջանքների, ուրացութեան չէին ենթարկուիլ, հայ երկիրն էլ այնպէս ոտնակոխ չէր լինիլ, բայց Բուղան թող լրաւ իմանայ, որ այս լեռների մէջ ոչ իշխան կայ, ոչ ազնուական, ոչ ծառայ, ոչ գերի, ամենն ազատ կամքի տէր են ու մեռնելու պատրաստ: Մենք այն ժամանակ զէնքերը կը թողնենք, երբ կը տեսնենք մեր երկիրը ձեր ներկայութիւնից ազատ: Զուր են քու աշքերը կապած այստեղ բերել, ես քեզ ցոյց կը տամ, թէ ի՞նչպէս կարող էք մեր լեռները բարձրանալ:

Այս ասելով պատղամաւոր արաբին Յովնանը հանեց մի ահաւոր բարձր սար, որտեղից երեսում էր կանանց և մանուկների պատսպարանը, ցոյց տուեց ժայռի ահագին բեկորները, որոնց վրայից մի հոգի կարող էր անթիւ բազմութիւն ոչնչացնել, ցոյց տուեց ամրութիւնը, որ ամիսներով սասունցիք պատրաստել էին իրանց անառիկ լեռները անմասայց շինելու համար: — Դէ, հիմա գնա ու տիրոջդ պատմիր:

Բուղան լսելով Յովնանի ապսպարանքները, ատամները կրծտելով կատաղութիւնն երևացրեց: Բաւական հայեր միամտաբար հաւատալով նրա

խոստումներին հնագանդուել էին մօտն եկել. նըրանց մի մասին հրամայեց սրի բերան տալ, միւս մասին շղթաների մէջ դնել և ուրացութեան մատնել: Յովնանի առաքինի և հայրենասէր սիրտն անկարող էր սոսկալի անդթութիւնների դէմ անտարբեր մնալ: Փախստականներից ամեն օր մանրամաս տեղեկութիւններ էր ստանում. Ժայռերի գլխին կանգնած արծուի պէս դիտում էր թշնամու շարժմունքը: Մի առաւօտ նկատեց, որ արարի ահագին բանակը դղրդալով թողեց Սասունի շրջակայքը. Տարօնի դաշտը գարդակելով ուղղուեց դէպի Մանազկերտի կողմը: Իսկոյն ձայն տալով իւր քաջերին իջաւ լեռներից, յարձակուեց վերջապահ բանակի վրայ, չարդեց, փշրեց ինչ որ գտաւ դաշտի վրայ: Հէնց որ թշնամին զօրութիւնը դէպի Յովնանը գարձեց, սա նորից ամրացաւ իւր լեռներում: Այսպէս կրկնուեց մի քանի անգամ: Բուղան տեսնելով որ խաղալիք է դարձել վայրենի լեռնականի ձեռին, սկսեց այդ կողմերի բերդերն ու վանքերն ամրացնել ու զօրքերով լցնել: Այդ օրից Յովնանն առաջուայ պէս անարգել ներքի չէր վազում, բայց արաբներին էլ հանգիստ չէր թողում, որ չէր անցկենում, որ յանկարծ չլսուեր թէ Յովնանը փոքրիկ խմբով Բաղէշի կողմերում երևացել է: Արաբները, որ կարծել էին թէ նա Տարօնումն է, հէնց որ Բաղէշի վրայ զօրք էին ուղարկում, մէկ էլ լսում էին, որ Թշնամունեաց գաւառն է մտել, արաբական

վաշտերը ոչնչացրել, և հայ գերիներին ազատել։ Զարմանում էին նրա արագ շարժուելու և յանդ-գնութեան վրայ. քսան երեսուն հոգով յարձակ-ւում էր հարիւրաւոր մարդկանց դէմ։ Այն աս-տիճան ահտիվ էր դարձել նրա անունը, որ հե-րիք էր ասէին թէ Յովնանը կամ սասունցիքն եկան, արաբացիք շտապում էին խելօքութեամբ հեռանալ:

Թ.

Իւր արշաւանքների միջոցին Յովնանը եր-բեմն մտաբերում էր Բագարանի ժողովը. ինքն իրան հարցնում էր՝ ի՞նչ եղաւ որոշումը, չէ՞ որ Սմբատ սպարապետը փրկելու էր Հայաստանը։ Այժմ ուր է, ի՞նչ բանի է։ Իրար հակասող լու-րեր էին համսում նրա ականջը Սմբատի ու նրա որդի Աշոտի գործունէութեան մասին։ Սասունը ապահով վիճակի մէջ էր. իւր շինական քաջերի փոքր գունդը առաւ ու ճանապարհ ընկաւ դէպի վասպուրական լսել էր որ Աշոտ Սրծունին զօրք-է ժողովում թշնամու դէմ մաքառելու։ Բզնու-նեաց երկիրը հասնելով աշքի տեսածից մնաց քստմբնած. ամեն տեղ աւերուած, ամեն տեղ քա-ըուքանդ։ Արաբացու սուրը Նորաշէն գիւղի կաթ-նակեր մանուկներին անդամ չէր խնայել։ Քու-ղայի միւս զօրավարը Ռշտունեաց Ոստանից ան-թիւ հայեր գերի արած, վկները չուան դրած, իբրև անասունների նախիր քշել էր տալիս որ ի-

րանց հրապարակներում աճուրդով ծախեն։

Նորաշէն գիւղի աւերակների վրայ նստել էր Յովնանը գիշերելու մտքով. յանկարծ գիշերա-պահ տղաներից իմացաւ, որ մեծ գունդ է գալիս։ Հրամայեց կրակները հանգցնել, խիստ լուսութիւն-պահելով հսկել, մինչեւ ինքը մի ընկերի հետ գիւ-ղի մուտքին մօտենայ ու իմանայ թէ ովքեր են-եկողները։ Մի քանի խօսք հազիւ էր լսել Յով-նանը իւր թագնուած տեղից, խկոյն իմացաւ, որ մոկացի հայեր են, մթան մէջ նշմարեց գնդի գըլ-խաւորին իւր թիկնապահներով շրջապատուած։ Շտապով բարձրացաւ կիսակործան պատի զլուխը և ուժեղ ձայնով գոչեց. — Հայոց սպարապետ, նւր-ես գնում, չէ՞ որ այդ ճանապարհը թշնամու գիր-կըն է տանում։ Մինչեւ երբ միամիտ մնաք և ձեր այդ յատկութեանը զոհէք ազգ, երկիր, հաւատ։ Մինչեւ երբ հայ նախարարներդ ձեր անօ-րէնի ձեռը մատնէք, անարդ ստրուկ և գործա-կից դառնաք Բուղային։

Գիշերուայ մէջ լսուող բարձր ձայնը, որ ձի-աւորների արշաւանքը դանդաղեցրել էր, Սմբատ սպարապետին բոլորովին սրտաթափ արեց, հա-զիւ կարողացաւ հարցնել, «Ո՞վ ես դու, չարա-գուշակ մարգարէ, ինչո՞ւ իմ բարի փափազները վատ մտքով ես մեկնում։ Միթէ կարծում ես, որ Սմբատն այնքան մատնիչ ու դաւաճան հայ է դարձել, որ քու չափ էլ իւր ազգը չի սիրում, կամ այս սոսկալի պատուհամների միջոցին նրա-

սրտից արիւն չի հոսում: — Եթէ ազգդ ճշմարիտ սիրում ես, Բուղայի կուշտը մի գնալ, որ Խլաթ է նստած. արածդ վախկոտութիւն է, խոհեմութիւն չէ: Խոհեմութիւնն այն է, որ մարդ ուխտադրուժներից, խաբեբաններից հեռու կենայ: Ետքարձու այդ քաջերին և դրանց բազուկները պէտք ածա պատերազմի և ոչ թէ շղթաների: — Այ մարդ, փափկացած խօսեց սպարապետը, ով էլ լինես, այս խաւարի մէջ վիճաբանել չի կարելի, օթևան գտնենք և այնտեղ տեսնուենք:

— Սրանից ետք հային ի՞նչ օթևան. ես լոյս ցերեկով փնդուցի, այստեղ աւերակներից զատքան չգտայ, դու այս խաւարի մէջ ի՞նչ յոցս ունես գտնելու:

— Ի ջնենք, տղէք, հրաման արեց սպարապետը: Այդ վայրկեանին Յովնանն իւր բարձրաւանդակից ցատկելով ասեց. — Ես միշտ պատրաստ եմ նազանդելու նրանց, որոնք Աստծու հրամանով ազգի գլուխ են ընտրուած և սրբազն պարտք կայ իմ վզին, որ նրանց վտանգից զգուշացնեմ:

Սմբատն աղօտ լուսի մէջ Յովնանի փայլուն աչքերը տեսնելով, նոր իմացու թէ ինչ հերոս էր իրան յորդոր կարդացողը. ձեռից բոնեց ու ասեց. — Ո՞րտեղ կարող եմ քեզ հետ երկար տունձին խօսել:

— Ո՞րտեղ և երբ կամենաս, իշխան, ես պատրաստ եմ. միայն ողջ գիւղը աւերակ է, չզիտեմ ողբան յարմար կլինի ձեր ձիաւորներին աւերակ-

ների մէջ տեղաւորելը: Բացի այդ մենք մեր կորեկ հացով բաւականանում ենք, դուք արդեօք հետներդ պաշար ունէք: — Փոյթ չէ, մենք էլ զինուոր մարդիկ ենք, զրկանքներին կը համբերենք, երբեմն պատահել է, որ 24 ժամ անօթի կոռուել ենք. այս գիշեր էլ մի կերպ կանցկացնենք: Բայց այն է ինձ համար ծանր, որ դու վախկոտութեան նախատինքը բերում ես Բաղրատունի զօրավարի վզով վաթաթում, որի մազն ու մօրուքը զէնքերի տակ է, ձերմակելու:

Այսպէս խօսելով նրանք եկեղեցու առաջ հասան, կամենում էին այդտեղ պատսպարուել, բայց լապտերի լուսով գեանի վրայ դիզուած մարդկանց, կանանց, մանուկների դիակներ տեսնելով ետքաշուեցին: Սմբատը հառաջեց այդ տեսարանից ու հրամայեց ուրիշ տեղ ձարել: Յովնանի ձեռից բոնած շրջագայում էր, մինչև թիկնապահները մի սենեակ զտան ու գորգեր փոելով յարմարեցըին: Այդտեղ հայոց մեծ նախարարը և Սասունի լեռնականը իրար դիմաց նստած ժամերով խօսեցին: Խօսակցութեան արգաս քն այն եղաւ, որ Յովնանը լիովին համոզուեց թէ հայ նախարարութիւնը մի բազմազլուխ վիշապ է, որ Հայաստանը շալտկած անդունդ է տանում: Առաւօտն սպարապետը իւր շքեղ խմբով գնաց Խլաթ քաղաքը թշնամուն խոնարհութիւն ցոյց տալու, իսկ Յովնանն իւր հետեակ խմբով գէպի ոշտունեաց Ոստանը գնաց, որի հրապարակը լիքն էր գերի-

ներով ու դիակներով. որովհետև արաբները գեցիկներին գերում էին, տգեղներին մորթուում: Խեղճ հայ ժողովրդի մնացորդը յուսահատ սպասում էր մահուան, երբ Յովնան իւր սասունցիներով երեաց: Դահմներից ով փախչելու հնարունէր, փախաւ, ով չէ, սպանուեց: Գերիները կապանքներից ազատուեցին: Յովնանն սպանուած թշնամիների գէնքերով քաջերին զինեց և իւր գունդը մեծացնելով յարձակուեց մօտակայ ձորի կողմը, ուր մի արաբացի գունդ հայ փախստականների ետնից էր ընկել: Սյուտեղ առաջն անգամ Յովնանի սիրտը մեծ ցնծութիւնով լցուեց, երբ տեսաւ որ արաբացի գնդին կրճի բերանում գիմագրում էր մի հայկական խումբ նիզակով, մանգաղով, պարսատիկով, աղեղով: Սասունցիք էլ իրանց սոսկալի աղաղակը բարձրացնելով ճանապարհի միւս կողմը կտրեցին: Սրիւնն սկսեց գետի պէս հոսել, թշնամիներից հազիւ մի քանի հոգի կարացին փախչել գէպի Սրտամետ Բուղայի միւս զօրավարին եղելութիւնը պատմելու: Սա զօրք առած շտապ եկաւ Յովնանին փնդոելու: Յովնանն ամրոցի մէջն էր, պարսպի վնասուած տեղերը հողէ պատմէշներով ամրացրեց, դոները պինդ փակեց և փնդոեց բերդապահին, որ տեղեկանայ ամրոցի ելումուտի մասին.—ասա, արդեօք քու բերդը գաղտնի ճանապարհ ունի, որ կարելի լինի ծովից նաւակ կամ լաստ գտնել ու փախչել:

— Ի՞նչպէս չէ, ստորերկրեայ ճանապարհ կայ, որ բերդից ներքի է տանում: Դիմացի հին եկեղին տեսնում ես, ճիշտ նրա խորանի տակն է ելքը:

— Շատ ապրես, եղբայր, ասեց Յովնանն ու հրամայեց երկու ճարպիկ երիտասարդների գնալ այդ ճամբով, զգոյշ դուրս գալ և թշնամու դիրքն իմանալ:

Ինքը դիտում էր, թէ ինչպէս արաբ զօրքը տարածում էր, որ բերդը ամեն կողմից պաշարը: Մի քանի ըոպէից ետ իւր ուղարկած տղէքն արդէն գաղտնի մուտքից դուրս էին եկել, եկեղեցու կտրի վրայ սողալով գէս դէն էին նայում: — Ապրէք, տղէք, ասում էր Յովնան ինքն իրան, ախ, թէ ձեզ պէս հազար կտրիմ ունենայի հետս և ոչ թէ միայն հարիւր, ես զիտէի թէ երեսուն հազար աւաղակներին ինչպէս կաքաւների նման ցրիւ կըտայի: Տեսնենք. կարելի է, Աշոտ Արծրունին բան յաջողեցնի:

Սյու մտածմունքի վրայ էր, Երբ տղէքն եկան ու պատմեցին զաղանի ճանապարհի մասին: Մթնաղէմին ինքն իւր մարդկանցով մտաւ գետնուղին, հասան եկեղեցին, զգոյշ դուրս եկան առանց նկատուելու, ողջ զիշեր քայլելով հասան Մոխրաբերդ: Սյու կիսաւեր շնչքում սասունցի գունդը քնելով լաւ հանգիստ առաւ:

— Այս ճանապարհ ու այս քաղաքը ու այս քար բան այդինքն արդ համանակ ու չէ մի որոշ: — Իրայ

Յովնանը ծովեզըն իջած արթուն դիտում
էր ջրերի խաղը, երբ յանկարծ երկու նաև տես-
աւ, որ Արթամարի կողմից դէպի արևմուտք էին
դիմում. վազեց իւր սասունցի դրոշակը բերեց,
որ սպիտակ կտորի վրայ կարմիր խաչ էր, և
սկսեց փրփոացնել օդի մէջ: Նաւերը գէպ ծովեզ-
րըն ուղղեցին իրանց ընթացքը: Դեռ բաւական
հեռու էին, Յովնանի սուր աչքերը նկատեցին մի
քանի հայեր ու ընտանիքներ: Երեխ փախչում
էին. մի մարդ կանգնած ղեկը ձեռին նաւը վա-
րում էր. տասնի չափ կանայք ու մանուկներ նա-
ւի իրքում տիսուր արտասունք էին թափում:
Ութ տաս ազնուական երիտասարդներ վնասուած
փանաները ձախ ձեռում, իսկ աջով սրերի վրայ
թեքուած նրան էին նայում. նրանց պատուտուած
և արիւնշաղախ զգեստները ցոյց էին տալիս, որ
կոռից նոր են դուրս եկել: Դեկավարը լոսրով
իշխանն էր, որ Յովնանին ճանաչելով տիսուր
աչքերը երկինք զցեց, «Փառք քեզ Տէր» ասեց,
ու հառաչելով աւելացրեց, — Եղբայր, յուսով եմ
որ այդ դրոշակի տակ ապահով ենք: — Մի օրուայ
չափ հաստատ ապահովութիւն կարող եմ տալ,
ասեց Յովնանը, այժմ այսչափը Արծրունի Ա-
շոտն էլ հազիւ խոստանայ: — Շղթաների մէջ ե-
ղողը այդ էլ չի կարող: — Ի՞նչ ես ասում, Խոս-
րով: — Հապա ի՞նչ ես իմանում, ինքն Արծրունեաց

տէրը իւր որդի Գրիգորի հետ, Վահան Արծրունին
իւր որդի Գագիկի հետ, Մուշեղը, Հրանոյշ տի-
կինը և Մեծ տիկին Հոփիսիմէն ուրիշ շատ ազ-
նուական մարդկանց հետ կապուած և ուղտերի
վրայ բարձած ուղարկուեցին Բաղդատ: — Երեսում
է դուք պատերազմով էք ազատուել, Խնարով, ձեր
վիճակը այդ է ցոյց տալիս: — Մենք մեր ազա-
տութիւնը Աստծու օգնութեան և մեր սրերին
ենք պարտական, իսկ նրանք իրանց շղթաները
մատնիչների վատութեան: — Ո՞վեր էին մատնիչ-
ները, Խնարով, ասա լսեմ: — Ի՞նչ հարկաւոր է յիշ-
ել նրանց անունները: — Ոչ միայն պէտք է յիշել,
այլ և կրակով գրել, ժայռերի վրայ փորագրել,
փոքրիկ մանուկներին սովորցնել, որ նրանց անունը
նզովեն և զարհուրեն: Ասա, ովքեր են այդ անօ-
րէնները: — Վահանունեաց ցեղից Մուշեղը, Տրու-
նեաց ցեղից Վահրամը, իշխանի թիկնապահ միւս
Վահրամը, միացնելով իրանց հետ ազատաց գուն-
դը ծածուկ պատղամաւոր ուղարկեցին Բուղային,
որ իրանք կամենում են Աշոտին իւր հաւատա-
րիմների հետ կապել և նրա ձեռը մատնել: Իշ-
խանն այս տեսնելով՝ ինը գնաց և անձնատուր
եղաւ թշնամուն: Մենք էլ հետեած կլինէինք նրա
օրինակին, եթէ չնկատէինք, որ մեր կանանց ու
զաւակներին ուզում են Բաղդատ ուղարկել: Մեր
գէնքերը առնուած չէին, իրար ձայն տալով յար-
ձակուեցինք կարաւանի վրայ, գերիներին ազա-
տեցինք, կոռւելով պաշտպանուելով մինչև ծո-

վեզը հասանք: Մի կերպ նաւեր դանելով ընկանք մէջները և առաջ վարեցինք, լաւ համարելով ծովակուլ լինել, քան թէ, գերի գնալ:

— Փառք Աստծու, դարձեալ մասամբ փրկուել էք. Աստուած ողորմած է ու արդար. Մեհրուժաններն ու Վասակները նրա բարկութիւնից չեն ազատուիլ: Այժմ տեսնենք, ինչ բանի կարիք ունեն փրկուածները:

Յովսանի պատուէրով սասունցի աղեքը լսու փոեցին մի սենեակում, որ փախստականները հանգստանան. հանեցին իրանց գարի հացը, չոր պանիրը ու ջրի սափորի հետ դրին առաջները: Մինչև սրանք սասունցոց հիւրընկալութիւնը վայելում էին, Խոսրովը Յովսանի հետ առանձնացաւ խօսելու: Յովսանն ասեց.

— Այս երկում անկարող եմ երկար մնալ, բնակիչները թշնամուն դիմագրելու համար ոչ յոյնունեն, ոչ կարողութիւն: Արաք զօրավարն անշուշտ կուղի ինձ վրէժինդիր լինել այն չարիքների համար, որ նրա զօրքին հասցընել եմ. ստիպուած պէտք է դառնամ Սասուն, որ մտածեմ անելիքիս վրայ:

— Քանի զինուոր ունես: — Հարիւր: — Այդքանին մեր նաւերն էլ կը վերցնեն, ուր ուզում լք, տարէք մեզ: — Այս գիշեր ճանապարհ ընկնենք, լաւ է, յաջողակ քամով կը հասնենք Դատուան, եթէ ուզէք մինչև այս պատուհան անցնելը հիւր կը մնաք Սասուն: — Մենք տարագիր մարդիկ ենք, խօսեց

Խոսրովը, գոհութեամբ Սասունի պէս ապահով տեղը կը մնանք:

Գատուան հասնելուն պէս սասունցիք կանանց համար գրաստներ և արաբական նժոյզներ ճարեցին և բարձրացան իրանց լեռները, որ փախատականներով լիքն էին:

Ամենը հանգիստ էին այդտեղ բացի Յովսանից. գիշեր ու ցերեկ մի միտք նրան տանջում էր: Ճանապարհների կիրճերը կտրած մի քանի հոգաւ հետ ջարդուփուրթ էր անում թշնամուն և զարմանալի եռանդով տեղեկանում, թէ ի՞նչ է անում թշնամի զօրավարը, ովքեր են նրա մօտի մարդիկը, ինչ է անում Սմբատ սպարապետը:

Իմացաւ որ նրա որդի Աշոտը աշխատում է թշնամուց հեռու մնալ, իսկ Վահկունի Մուշեղ և երկու Վահրամները Բուզայի բանակի մէջ բարձրագիզ ման էին գալիս իրեւ բարեգործ հաւատարիմներ: Երբ Յովսանի արշաւանքները տաճկաց զօրավարի հանգստութիւնը խլեցին, հրամայեց խիստ պահպանութիւն անել Խութի լեռների վրայ, բայց Յովսանը միշտ ճար էր գտնում նրան վնաս հասցնելու, պատերազմի կերպը փոխելով, շատ անգամ էլ երևալով արաբական հագուստներով, արաբական գրոշակներով:

ԺՈ

Երկրի մէջ տարածուած վատութիւնն ու մատնութիւնը այնպէս խիստ էին ձնշում Յովսա-

նի սիրտը, որ իշխաններին արհամարհելը աւելի
էր զօրանում նրա մէջ։ Աշոտ իշխանի եղբայր
Գուրգէնը պատերազմելով Բուղայի դէմ և նրա-
նից 1800 հոգի ջարդելով, յանկարծ յիմարաբար
խաբուել էր արաբական խոստմունքներով և անձ-
նատուր եղել, որպէս զի Աշոտի տեղ Վասպու-
րականի իշխան դառնայ։ Յովնանը լոիկ սպասում
էր Բուղայի կողմից յարձակումի, երբ տեղեկու-
թիւն տուինթէ բանակը Խլաթից հանեց, որ ձը-
մեռը Դուխնում անցկացնի։ Ինքն էլ պատրաս-
տութիւն տեսաւ, որ Խլաթ գնայ իրան տաճջող
մտազրութիւնը գլուխ հանելու։ Խլաթը ծառա-
խիտ պարտէզներով շրջապատած գեղեցիկ քա-
ղաք էր վանայ ծովի վրայ, ամուր աշտարակնե-
րով, միայն մայր եկեղեցին էր մզկիթ դարձել։
Քաղաքի բնակիչները գոհ չէին բռնաւորի գնա-
լով, որովհետև զօրքի հեռանալով առևտուրը պա-
կասելու էր։ Նրա դուրս գնալուց ետ դիւնանա-
պետն էլ իւր թղթերը կաշէ պարկերի մէջ տե-
ղաւորեց, որ պատրաստ լինի հետեւալ օրը գը-
նալու։ Բնակարանը քաղաքից դուրս պարտէզնե-
րի մէջն էր։ Միրզա Հասան դիւնապետն իւր
առաջին քաղցր քնի մէջ էր. զգաց որ մէկն ի-
րան զգոյշ բոթում է. կարծելով թէ ծառան է,
սաստեց որ հեռանայ, իրան հանգիստ թողի։ Տե-
ռաւ որ բոթելը չի դադարում, աչքերը բաց ա-
րեց։ Ուրբան եղաւ նրա զարմանքը, երբ ծառայի
փոխարէն իւր գլխավերն նշմարեց մի միջանա-

ասկ, լայնակուրծ, մեծագլուխ մարդ. սև ու փայ-
լուն մազերը մինչեւ ուսերը, սլաքի նման աչքերը
վրէն տնկած։ Հասանը սարսափով ձեռը մեկնեց
գէպի բարձի մօտ դրած դաշոյնը։ Անծանօթն ան-
խօս բռնեց նրա գաստակը և այնպէս սեղմեց որ
գիւնապետը ցաւին չդիմանալով սկսեց աղաղա-
կել։ Անծանօթն իւր լայն ձեռը նրա բերանին
դնելով հանդարա ասեց.

— Ամօթ է, Միրզա Հասան, ի՞նչ ես երեխա-
յի նման գոռում, դու գրագէտ ուսումնական
մարդ ես. ի՞նչ կասեն ծառաներդ, երբ իմանան
թէ ձեռդ սեղմելուն չդիմանալով այգպէս ողոր-
մելի ձայն ես հանում։

Միրզա Հասանն իւր ծառաներին իմաց տա-
լու նպատակով սկսեց բարձրաձայն յանդիմանել.

— այ անհաւատ շուն, չես իմանում թէ վերջը ինչ
կը գայ գլուխդ, դու չես իմանում թէ ես ով եմ
և թէ իմ տէր Բուղան ի՞նչ մարդ է։

Անծանօթը պատասխանեց. — Նախ պէտք է
իմանաս, որ ծառաներիցդ նրանք կենդանի մնա-
ցին, որոնք խոնեմ վարուելով անձնատուր եղան.
Երկրորդ՝ դու խելօք մարդ ես, պէտք է հայհոյանք
չհանես բերանիցդ, երրորդ՝ պէտք է իմանաս, որ
կեանքիս մէջ երկիւղ ասած բանը չը գիտեմ, քու
Բուղայից էլ չեմ վախում։ — Ուրեմն ի՞նչ ես ու-
զում ինձանից, կամենում ես ծառաներիս պէս
սպանել. — Ամենաին ոչ, ես անզէն մարդ չեմ
սպանում։ — Ուկի ես ուզում, ահա, բարձի տա-

կից բոսակը հանելով մեկնեց Հասանը: — Ոչ ոսկի եմ ուզում, ոչ արծաթ, իմ ուզածը ուրիշ բան է: — Ի՞նչ ես ուզում, այ մարդ, ասա, խօսեց Հասանը բոլոր մարդնով դողալով և աչքերը փակելով, որ անձանօթի հրացաշտ աչքերը չտեմնի: — Դիւանի բոլոր թղթերը քու մօտն են: — Այս, այս պարկերի մէջն են: — Ամենը ինձ պէտք չեն, իմ ուզածը մէկ թուղթ է: — Ո՞ր թուղթն ես ուզում, ասա, տամ: — Յիշում ես, երբ Աշոտ Արծրունին Նկան բերդի մէջ պաշարուած էր, մի քանի հայ իշխաններ դադարնի նամակ էին գրել Բուղային: — Այս, զիտեմ, յիշում եմ: — Այդ թուղթը պէտք է փնտես, ինձ տաս. բոլոր պահանջս այդ է:

— Հէնց այդ չափ և այդ չնչին թղթի համար ինձ այսքան սարսափ ուտացրի՞ր: Այս ասելով պարկի մէկը բաց արեց դողալող ձեռներով, հայերէն գրութիւնը գտնելով մեկնեց, — ահա ստացիր:

Անձանօթ մարդը կանթեղի լոյսի տակ թըղթին նայելով ծոցը գրեց ու դաբճաւ դիւանապետին հարցրեց. — Միլզա Հասան, ինձ շիտակն ասա, ամիրապեաը Բուղային ի՞նչ հրաման է զրկել Հայաստանի համար:

— Ահա թէ ինչ. կամ Հայաստանը իւր անհաւատութիւնը թողնելով մեր ուղիղ հաւատը պէտք է ընդունի կամ բոլորովին կորչելով իւր յիշտակը աշխարհէս վերացնի:

— Դէ այժմ մնաս բարով, Հասան, տեսնում ես, որ քեզ պէս խելօք մարդուն վնաս չեմ տա-

լիս, ասեց ու հանգիստ դուրս եկաւ. Հասանը ճակատը շփելով ինքն իրան հարցնում էր. — արդեօք նվ է այս սոսկալի մարդը: Մենք ճանաչում ենք. դա խութեցի Յովնանն էր:

ՓԲ

Ջիւնն ու սառուցը պատել էին հայոց երկիրը: Ճիշտ է, Բուղայի կոտրածը դադարել էր, բայց իւր անուան սոսկումը գեռ ամեն մի սրտի մէջ տիրում էր: Նրա արիւնարբու զօրավարները խիստ պատուեր էին ստացել գարուն բացուելուն պէս Դուխն համել. սրանց թւում պէտք է լինէին երեք մասնիչ հայ նախարարները, որոնք Բուղային Խլաթից հեռանալիս երկու օր ուղեկցեցին և գոհ գարձան իրանց տները: Մուշեղ Վահնեւնին լճի ափին գտնուող իւր ամրոցում հանգիստ սպասում էր, որ գարնան գալու հետ ամիրապետից մեծ շնորքներ ստանայ: Շըջակայ գիւղերը ամայացած էին, ամեն կողմ լուր էր ուղարկում, որ բնակիչները գտնան իրանց տները: Գիւղացիք ձանձրացած անիրաւութիւններից ակամայ էին գալիս իրանց բնակարսնները: Զմեռուայ մէջ Տարօնի կողմից երիտասարդ խմբեր իրանց պաշարներով գալիս էին այդ դադարկ գիւղերում բնակւում. նրանցից հինգ վեց հոգի կուբայ վանքում հիւրընկալութիւն խնդրելով ուխտաւորների սենեակներում ապրում էին: Վահնահայրը դրանց երկար մնալուց ձանձրացած ուղում

էր ճամբու դնել, բայց տեսնելով նրանց գլխաւորի համեստ ու առաքինի վարմունքը, որ ամենին պարապ չէր մնում, ժամերգութեան միշտ ներկայ էր, վանահայրը միաքը փոխում էր։ Տարոնեցիք վարժ նետաձիգ էին. թոշուն, կենդանի չէր ազատում նրանց ձեռից, ուտիս օրերը սեղանատունը որսի մսերով լիֆն էր։ Վանքի փայտ և ջուր կրողը, աւելողը, գոնապանը նրանք էին։ Մուշեղ Վահեունու ձմեռուայ գլխաւոր զուարձութիւնը որսն էր։ Յաճախ բարակ շներ ու թիկնապահներ հետն առած գնում էր շըջակայքը որսալու։ Մի օր էլ երբ Կոբայ վանքի առջեկց անցնում էր, յանկարծ մի քանի տարոնեցի դիմացն ելան, մէկը աղեղից մի նետ թոցնելով այնպէս ձիու փորին խփեց, որ անասունը ցաւից կատաղած շպրտեց Մուշեղին վրայից ու ինքը փախաւ։ Թիկնապահներն ուղեցին օգնել, բայց այնպիսի նետատարափ եկաւ գլխներին, որ ամենն էլ թողին իշխանին ու փախան։ Տարոնցիք վրայ վաղեցին Մուշեղի ոտն ու ձեռը կապեցին ու տարան վանքը։ Շատ աշխատեց իշխանը, որ իրան կապողներին հասկացնի, թէ ինքը Բուղայի բարեկամն է, մեծ ամիրապետին շատ ծառայութիւններ է արել, իրանց յանդգնութեան համար իիստ պատիժ կստանան, լաւ կլինի, որ բաց թողեն իրան, եթէ կամենում են, փող էլ կընծայի։ Կոշտ գիւղացիք նրա ասածները բանի տեղ չըդնելով, հասցրին վանքի սենեակը, կապերն արձակեցին

որ նստի. բան տուին ուտելու, զինի էլ տուին որ զօրանայ։ Վանահայրն այս իմանալով ուզեց իշխանի մօտ գնալ. պահապան կանգնած տարոնեցիք չթողին։ Հայր սուրբը բարձրածայն գանգատեց. — այս ի՞նչ ապերախտութիւն է իմ դէմ, գաւառի պատուաւոր իշխանին յափշտակել էր, իմ վանքը աւագականոց շինել և ինձ վանահօրս արգելում այդ սենեակը մտնելու, ովք է վանքի տէրը, դժւը թէ ես։ — Հայր սուրբ, մի վրդովուիլ, մենք տարօնեցիքս ոչ ապերախտ ենք և ոչ երախտամոռ, միայն իշխանի հետ դատաստան ունենք. հանդիստ կաց, դու էլ առաջին դատաւորը պիտի լինես։

— Ի՞նչո՞ւ էք արգելում ներս մանելը։ — Եթէ այդքան փափագում ես, մտիր, ասեց գլխաւորը։

Հէնց որ Մուշեղը վանահօրը տեսաւ, սկսեց յանդիմանել. — այս ի՞նչ անիրաւութիւն է, որ վանքի մէջ կատարւում է, իմ դէմ էլ ապերախտութիւն անեմ, հայր սուրբ։ Այժմ ափսոսում եմ, թէ ինչո՞ւ հիմնայատակ չեմ արել այս վանքը, որ իմ անձի դաւաճանութեան բոյն է դառնում։ — Ի՞նչ անեմ, տէր իմ, ես խեղճ տարոնցիներին հիւընկալելով ամենկին չէի կարծում, թէ նրանք այդպէս անզգամութիւն կանէին, խոնարհութեամբ պատափանեց վարդապետը։ Իսկ իշխանը մատին նայելով տեղից վեր թուաւ. — Տես, այդ չարագործները մատանիս էլ հանել, գողացել են։

Տարոնցի գլխաւորը, որ այդ խօսակցութեան

միջոցին մի կողմ կանգնած էր, մօտեցաւ իշխանին և հանդարդ զօրեղ ձայնով ասեց. — Հոգս մի անիլ, Մուշեղ, այդ մատանին կը գտնենք, քեզ կը տանք: — Բաւական չէ, որ ինձպէս ազնուատոնմ իշխանի դէմ ամեն բռնութիւն գործ էք գնում, դեռ ինձ էլ վիրաւորում էք սոսկ անունս տալով, մի՞թէ ես հասարակ մարդ եմ: — Իոչ արած, մենք շինական մարդիկ ենք, քաղաքացոց պէս չենք իմանում արժանաւոր յարգանքը տալ ձեր նման մեծ մարդկանց, պատասխանեց տարօնեցին հեզնելով — Շատ չի բաշել, ես ձեզ կը սովորցնեմ, թէ ինչպէս պէտք է վարուել մի իշխանի հետ:

Այդ միջոցին վանահայրը դիմելով տարոնացուն հարցրեց. — Քիչ առաջ ասում էիր, որ իշխանի հետ դատաստան ունէք, ի՞նչ դատաստան է: — Հայր սուրբ, մինչև վկաները չգան, դատաստան չի կայանալ, աւելորդ խօսելու ժամանակ չը կայ, այժմ պէտք է գնանք: — Ուր, հարցրեց Մուշեղը զայրացած հրամայական ձևով: — Քեզ տանում ենք դատարան, եթէ այնտեղ արդարանաս, կը թողենք որ գնաս:

— Եթէ չարդարանամ, ի՞նչ էք անելու: — Դատաստանն ինչ կը վճռի, պարտաւոր ենք գործ դնել: — Զեր նման գոեհիկների, աւագակների հետ դատաստան մտնելն էր պակաս: Ես որ ձեզ կեանքումս չեմ ճանաչել. ես որ ոտքիս տակին չեմ նայել ձեզ նմաններին նշանարելու համար,

համարձակւում էք ինձ հետ դատաստանի մտնել: — Երկար ու նախատական խօսքերի կարիք չկայ, ընդհատեց գլխաւորը և ձայն տուեց դէպի դուռը, — աղէրք, մութը կրխեց, ջորին քաշեցէք, հայր սուրբի ջորին նոյնպէս պատրաստեցէք, որ գնանք: — Իմ ջորին ուր էք տանում, հարցրեց վանահայրը: — Քու ջորին քեզ համար են պատրաստելու, հայր սուրբ: — Այս ցրախն, այս գիշերին ես ոս փոխողը չեմ, ի՞նչ էք խելքներդ թոցրել: — Քու կամքին որ թողեն, տեղիցդ չես շարժուիլ, բայց որովհետեւ Սասծու քահանայ ես, զբա համար արդարութիւն պիտի սիրես: Եթէ չես ուզիլ սիրել, մենք քեզ կը սովորցնենք: — Բոնութիւնով պէտք է տանէք, վրդովուած խօսեց վանահայրը: — Ամենախն ոչ, իշխանն էլ գալու է. մեր բարեկամական խորհրդին հետևողների դէմ բռնութիւն չենք գործ գնում:

Տղէքն եկան իմաց արին, որ ամեն ինչ պատրաստ է, — Դէ գնանք, իշխան, ասեց տարոնեցին: — Ես իմ կամքով մի քայլ չեմ անիլ, խօսեց Մուշեղը: — Դու լաւ մարդ ես, մէկի տեղ շատ քայլ կանես: Միայն հարկաւոր է քեզ օգնել. իշխան մարդ ես, պէտք է կռնիցդ բարձրացնել:

Այս ասելով տարոնեցին, որ Յովսանն ինքն էր, նրա թեկից բռնեց: Մուշեղը կարծես մեքենայից ցնցուելով թուաւ, երկու ոսի վրայ կանգնեց. — այ անօրէն գոեհիկ, թես կոտրեցիր:

Իսկ Յովսանն առանց իւր երեսի վրայ փոքրիկ

շարժմունք ցոյց տալու, հանդարտ ասում էր.
— Ոտներդ փոխիր, իշխան, դանդաղելու ժամանակ չէ:

Դուան մօտ երկու հոգի իշխանին վերցըին ու պարկի պէս զցեցին պատրաստ ջորու վրայ առանց նրա աղաղակներին ուշ դարձնելու: Աւրիշ երկու հոգի նրա ոտները անսառւնի փորի տակից իրար կապեցին: Քիչ ժամանակից ետ վանրի բակը զինուած մարդկանցով լցուեցին, դիմադրութիւն անկարելի էր: Հայր սուրբը ճանապարհից ետ փախաւ, բայց քաջ սասունցիք հասան ետ բերին: Յովսանի խումբը երեք ժամ քայլելով հասաւ մի շամբի, եղեգնի անտառի միջով սառած ջրի վըրայով գնալով մտան ո՞ւ քաղաք, որ ոլոր-մոլոր փողոցներ ունէր, կանգ առան մի բերդանման կիսաւեր լնդարձակ շէնքի առաջ, դա Օձ քաղաքըն էր, որ երբեմն Մամիկոնեաց հռչակաւոր Մուշեղի և գայլ վահանի բնակատեղին էր եղած: Մուշեղի կապերն արձակեցին, ցրտից ոտները բռնուել էին, չէր կարողանում ման դալ. զրկած տարան կրակից հեռու նստացըին: Տիսուը վանահայրն ակամայ ուզեց զուարթ երևալ: Իշխանը մտածում էր ունքերը կիտած ու չէր կարողանում մեկնել իւր գլխին եկած փորձանքի պատճառը. ոտների ուռած և ցաւող տեղերը շոշափում էր ու ինքն իրան մտածում. «Հինի Աշոտ Արծրունու անմեղ արիւնն է վրէժինդիր լինում. Երկի նրա ոտներն էլ շղթաներից այսպէս ցաւում

էին, ելք լնտանիքի հետ ուղտերի վրայ բարձել տուի Բաղդատ ուղարկելու համար»: Այսպէս շատ ուշատ բաներ էր անցնում նրա մտքով ու ներսը վառում: Մտածելուց յոգնելով դարձաւ Յովնանին, որի կամքից էր կախուած նրա բաղդը: Իշխանական ձեւթողնելով յուսահատաբար հարցըեց. — Այ մարդ, ով ես դու: — Դու չէ՞ր որ քիչ առաջ անուանեցիր ինձ աւազակ, գոեհիկ, ողորմելի: Եթէ կամենաս՝ այդ երեքն էլ եմ: — Այս, ասած խօսքս ետ չեմ վերցնում, միայն ուզում եմ իմանալ, թէ դու կին, զաւակ ունեցել ես: Եթէ այո, ապա միտդ բեր, թէ այս գիշեր կինս ու զաւակներս ինչ վիճակի մէջ կըլինեն: Անօրէն, անսաստած, իմ տունը ողբի ու արտասուքի տուն շինեցիր:

Այս ասելով սկսեց լալ, իսկ Յովնանը դառնացած գարձաւ նրան. — Ես քու տան վիճակը վեց ամիս առաջ եմ երևակայել ու սգացել, Մուշեղ: Մեր աշխարհում որքան անմեղ կանայք ու մանուկներ գազան արաբների սրի բերան են ընկել, քանի շէն ու զուարթ քաղաքներ, գիւղեր բուերի ու գազանների բնակարան են դարձել, խղճմտանքից հարցըու, արդեօք ձեռդ մաքուր է այդ արիւններից, դու մասնակից չէ՞ս բիւրաւոր հայերի դառն արտասուըներին: Իսկ թէ ուզում ես իմանալ, թէ ես ով եմ, իմացիր — ես սասունցի Յովնանն եմ: — Բայց ինչ ես ուզում, այ մարդ, քեզ ու քու սասունցիներին ինչ եմ արել,

ի՞նչ դատաստան էք ուզում կտրել զլխիս, ուր
են դատաւորները կամ վկաները: — Համբերու-
թիւն ունեցիր մինչև ընկերներդ հասնեն, շուտով
սուրհանդակներ կուղարկեմ, որ դատախազներն
էլ գան:

Այս միջոցին մի երիտասարդ արեղայ ներս
մտաւ ձեռին երկու թուղթ մաքուր զրուած. Յով-
նանին տուեց, սա կարդալով ծալեց ու ծոցից
ոսկի մատանի հանելով վրաները կնքեց: Այս գոր-
ծողութիւնից վերջը մօտեցաւ Մուշեղին ու ա-
սեց. — ահա մատանիդ, որ կարծում էիր թէ ա-
ւազակները յափշտակել են, արդարութիւնը տեղ
հասցնելու համար այս մատանին պէտք է այս
երկու թղթերը կնքէր, որոնք գրուած են երկու
բարեկամներիդ, որպէս զի գան քեզ մենակութեան
մէջ մխիթարեն: Քեզանից ծածկելու ոչինչ չու-
նեմ, մէկը Տրունեաց Վահրամը, միւսը Գնունեաց
Վահրամը. Երկուսն էլ Արձէշ քաղաքից պէտք է
գան:

Այս երկու անունները լսելիս Մուշեղի կար-
մրած երեսը թալկացաւ, կանաչեց, ցուրտ քըր-
տինք եկաւ ճակատը: Յովնանն ասեց «իշխան,
որպէս զի դու բոլորովին դժգոհ չըմնաս, կըպա-
տուիրեմ, որ նամակի բովանդակութիւնն էլ կար-
դան»: Աբեղան կարդաց բարձրածայն զրութեան
պատճէնը, «Ես, Կոք գաւառի իշխան Մուշեղ
Վահեւունիս իմացնում եմ քեզ Տրունեաց Վահ-
րամ քաջ իշխանիդ, որ կարևոր գործի համար

հասել եմ Մեծոփայ վանքը. մեզ համար այնպիսի
խնդիր կայ, որ կամ պէտք է կեանքներս կորց-
նենք կամ ամենամեծ իշխանութեան հասնենք:
Ըստապիր, եկ, քեզ ու Գնունեաց Վահրամին եմ
սպասում, որ միաձայն շարժուենք: Քաղաք տեղ
մեր տեսակցութիւնը կասկածի առիթ կարող է
տալ, այսպէս առանձին տեղ յարմար դատեցի.
չուշանաս, գանդաղութեան ժամանակ չէ: Ողջ
լեր: — Ահա տեսակում ես, իշխան, խօսեց Յով-
նանը, բարեկամներդ ժողովում եմ, որ բարեկեն-
դանի օրերը տխուր չանցկացնես: Այս ասելով
անցաւ միւս սենեակը, ուր նստած էր Խոսրովը.
— Իշխան, արդէն Մուշեղ Վահեւունին ինձ մօտ
կալանաւոր է, երկու Վահրամներն էլ կը գան,
դու պէտք է մեզ ընկերանաս. դրա համար ապրս-
պրեցի, որ Մասունից գաս:

— Ես պատրաստ եմ, ուր ուզում ես տար: — Զգեստներդ հարկաւոր է փոխել, այս գարանի
մէջ բաւական հագուստ կայ Բոնաշէնի աւարից,
ահա կաշէ պարկը, ջոկիր մէջից, որը յարմար կը
դայ, հագիր: Այս զիշեր հանգիստ կառնենք, վա-
ղը կանուխ գնալու ենք: Դու պէտք է մեր իշ-
խանը դառնաս և Մուշեղ Վահեւունի կոչուես,
մենք էլ մեր սաստնցի զգեստները թողելու ենք
և իշխանի թիկնապահի կերպարանք առնենք: Այս
պարկի մէջ մի քանի իշխան զարդարելու մաքուր
զգեստներ կան:

ԺԳ

Պատունցու համար սառն ու ցուրտը ոչինչ էր. որպէս զի գաղտնիքը լաւ պահուի, Յովնանն աշխատում էր աւերակների մէջ գլշերել. Մուշեղ Վահեունին ճանապարհորդում էր հարիւրի չափ թիկնապահներով. Գունզը Քաջբերունեաց սահմանը հասաւ թէ չէ, երկու սուրհանդակի ձեռով Յովնանը նամակներն ուղարկեց Արձէշ. Առանց կասկած զարթեցնելու կեղծ Մուշեղ իշխանը հասաւ Մեծոփայ վանքը. Յովնանն առաջ գնաց, որ իշխանի կողմից հիւրընկալութիւն խընդրի. Մուշեղին անձամբ ճանաչող չկար. մի քանի կրօնաւորներ ելան իշխանի դիմաց. Խոսրովը իւր դերը հիանալի կատարելով մտաւ ներս. Յովնանըն շտապով քսան ընտիր ընկերներ հետն առած գնաց դէպի Արձէշ, կէսը ճամբին մի գիւղում թողեց, որ Վահրամ իշխաններին աչք բռնեն. Ինքը մի քանի զբաստով իջաւ քաղաք, պաշար առնելու. Որպէսզի Վահրամները ճամբից փախչելու հնար չունենան, հեռուից իւր մարդկանցով հետևում էր. Գլխաւոր պայմանն էր արիւն չթափել. Խւստի Խոսրովը զրեթէ անդէն, երկու ծառայով դիմաւորեց նրանց վանքի առաջ պատճառ բերելով որ Մուշեղը փոքր ինչ տկար է, մի երկու ժամով նրան տեսնելը կուշանայ. Նրանց տարան ամենափառաւոր սենեակը, որ լաւ տաքացրած էր, սեղանը զանազան ընտիր կերակուրնե-

րով ու ըմպելիքներով պատրաստ դրած էր, ցուրտ եղանակին այդ բաները յոգնած իշխանների ախորժակը զրգուեցին. Հանգիստ կերպով նստան հացի, Խոսրովը պատմում էր ծիծաղելով թէ ինչպէս Մուշեղի միջնորդութիւնով Բուղայից ներուղութեան թուղթ է ստացել. Հանեց ծոցից արաբերէն զրութիւն, ցոյց տուեց նրանց, իմանալով որ ոչ ոք կարգալ չզիտէ. Վահրամներն ամեն կասկած մի կողմ թողած սկսեցին վստահութեամբ ուտել, խմել. Երբ գլուխները գինուց տաքացաւ, Վահրամ զինակիրը զուարթ աչքերով դարձաւ Խոսրովին.—Վերջապէս դու էլ մեր ճամբէն ընտրեցիր ու խելօք մարդի պէս գործդ կարգի զրիր. Ես կարծում էի թէ հոգով ու մարմնով Արծրունեաց անձնատուր ես. բայց տեսնում եմ, որ այդքան յիմար չես եղել:—Ճշմարիտ ասեմ, ես յարգում էի նրանց մօրը տիկին Հոփիսիմէին, որ առաքինի խելօք կին է, բայց զաւակները երբէք նրա խրաններին ուշ չէին գարձնում:—Դու տեղեկութիւն ունես մեր վրայ եկած նամակի մասին, հարցուեց Տրունեաց Վահրամը:—Գիտեմ որ Բուղայից Մուշեղին հրովարտակ է եկել, նա շատ ուրախացաւ, բայց բովանդակութիւնն ինձ չպատմեց: Այդ բանը յետոյ էլ կիմանանք, զուարծութիւնը շարունակենք, ասեց Խոսրովը և բաժակները լցըեց: Երբ զինի խմելուց սենեակի ներսում իշխաններն էին ուժից ընկել, իսկ զբում իրանց թիկնապահները, յանկարծ Յովնանի հետ ներս

խուժեցին սասունցիք և առանց ժամանակ տալու կապոտեցին Վահրամներին ու թիկնապահներին, որոնց խմած զինու մէջ ափիօն էր խառնած:— Դէ, էլ ժամանակ չկորցնենք, Խոնրով, ասեց Յովնանը, ուզած լաւ կատարեցիր, շապենք: Թէև դու էլ լաւ խմած ես, վնաս չունի. դրսի օդը քեզ կը կազդուրի:

Զիանը պատրաստ էին, հեծաւ Խոսրովը, միւս Վահրամներին կէս քուն, կէս արթուն ձգեցին գրասաների վրայ, լաւ կապկալեցին որ վայր չընկնեն: Արդէն վանքից դուրս գալու վրայ էին, երբ լուր տուին թէ տասներկու ձիաւոր են գալիս դէպի վանք: Յովնանը բարձրացաւ դռան մօտի ժայռի զլուխը ու զգոյշ զիտելով տեսաւ որ Գուրգէնն է: Մուշից էր գալիս ու յունաց կողմն էր զնում, մրսած էր և հանգստանալու տեղ էր խնդրում: Յովնանը որոշեց այդ զիշերն այստեղ մնալ: Շուտով սենեակ մաքրեցին, կրակը վայրեցրին: Գուրգէնը նկատեց որ կալանաւորներ ունեն, խօսեց— «Երեկ արար աւազակներ ես բոներ, Յովնան, ի՞նչ կարիք կայ այդ անպիտաներին կապելը, առաջին հանդիպած ծառից կախիր, գնա:— Եթէ սովորական աւազակներ լինէին, մի ըսպէ էլ ժամանակ չէի կորցնիլ նրանց պատճառով: Բայց երբ Արծրունեաց Աշոտին մատնողներն են իմ կալանաւորները, ի՞նչպէս անեմ:— Այդ շներին դատելը աւելի հեշտ է, վանքի պարսպից կախել տուր, վերջացրու:— Զէ, դեռ կարեռ է քննել նը-

րանց յանցաւոր լինելը. Կրանից ետ ես զիտեմ, թէ ո՞ւր պէտք է կախել:— Յովնան, ես յուսահատութիւնից զնում եմ յունաց կողմը, գուցէ օդնութիւն գտնեմ մեր խեղճ ազգի համար: Մեր իշխաններից ոչ ոք չի ուզում յայտնի կերպով Բուղայի դէմ գործել: Դու խելօք մարդ ես, ուրիշ լաւ ճար կիմանաս, ասա լսեմ:— Եթէ զիտենայի, Գուրգէն, ի՞նչ ես կարծում, երեք դաւաճան պատժելու համար այսքան սար ու ձոր կը պտտէի:

Յովնանն ու իւր համախոները առաւօտը դարձան Օձ բաղաքը: Մուշեղին, երկու Վահրամներին բանդարկեցին մի սենեակում: Հետեւել օրն եկան Սասունում ապաստանած տասն իշխան մարդիկը, զիւղապեսները, Մշակայ վանքերի առաջնորդները. Գուրգէնի ու Խոսրովի հետ ատեան կազմեցին որ դատեն: Այդտեղ բերուեցին մատնիչ իշխանները: Յովնանն իբրև դատախազ ամբաստանեց երեքին էլ այսպէս. «Նկան բերդի պաշարման ժամանակ դուք գաղտնի պատգամաւոր ու նամակ էք ուղարկել Բուղային, խոստացել էք նրա ձեռը մատնել Աշոտ Արծրունուն և բերդը: Յայտնել էր թէ Աշոտի եղբայր Գուրգէնը նրտեղ է և ի՞նչքան զօրք ունի: Աշոտի հրամանները խարդախել էր, կեղծաւորութեան ու նենզութեան միջոցով փորել էր նրա ոտների տակը, մինչև որ յուսահատուած ակամայ գնացել է Բուղայի բանակը: Նոյն դաւաճանութեան զոհ

է եղել նրա եղբայր Գուրգէնը: Ամենը դիտեն
թէ ինչ դասն հետեանքներ ունեցաւ Վասպուրա-
կան աշխարհի համար այդ երկու եղբայրների դե-
րութիւնը: Երեք իշխաններդ ձեր տէրերին մատ-
նեցիք, ձեր բարերարներին ապերախտութիւնով
պատասխանեցիք»:

Դատաւորներից ծերագոյնը հարցը եց ամբաս-
տանեաններին, «Ի՞նչ էր պատասխանում»: Նրանք
միաբերան ուրացան, որ իրանը Բուղային մատ-
նութեան նամակ դեն զրել, ամենը զրպաբու-
թիւններ են իրանց դէմ և չարակամութեան նը-
շան: Յովնանը խարդախ, դատաճան մարդ է, կա-
շուռած է որեէ մէկից ու կամենում է իրանց
կեանքին վտանգ սպանալ, զրա համար սատա-
նայի խորամանկութիւնով իրանց կապկապել, բան-
դարկել է: Ցոյց էին տալիս իրանց ձեռներն ու
ոտները, որ իշխան ու նախարար մարդկանց այսպի-
սի նախատինքի են ենթարկել: — Եյն, երբ արա-
բի բանութիւնը իմ ազգի վրայ ծանրանում է,
մարդկային ու Աստուածային օրէնքն այսպիսի
մատնիչների ձեռ խաղալիք են դառնում, տիրա-
նենդութիւնը տիրասիրութիւնից աւելի է հոչակ-
ւում, երբ ուխտադրուժ մահմեղականի օտար լու-
ծը Քրիստոսի և ազգային պարտաւորութեան լծից
աւելի ընտիր է քարոզում, որտեղ հայոց Հոգիոր
տէրը սասունցոց քաջագործութիւնները, արիւ-
նարբու Եռևսութիւն սպաները յիմարութիւն է
համարում, այդպիսի ժամանակ ամեն մի հայի ի-

րաւունքն էր դաւաճանների դէմ դաւաճանութիւն
և նենդաւորների դէմ նենդութիւն գործ դնել.
այն, ես էլ ամեն ջանք գործ դրի սրանց ձեռ զը-
ցելու համար: Ուրանում են, որ Բուղային նամակ
են զրել. Եթէ այն նամակը ցոյց տամ ժողովին,
ուր նրանց կնիքները դրած է, այն ժամանակ ի՞նչ
կասեն: Ահա նամակը:

Այս ասելով մի թուղթ տուեց ծեր դատա-
ւորին, որ սկսեց բարձր ձայնով կարդալ, վերջն
ասեց. — ահա կնիքները. Մուշեղ Վահեունի, Վահ-
րամ Տրունի, և Վահրամ թիկնապահ:

Յովնանն ասեց. — Վերցրէք սրանց մատանի-
քը և համեմատեցէք կնիքների հետ, արդեօք խար-
դախութիւն կայ:

Սկսեցին ամեն կողմից համեմատել և մատ-
նիչներին ցոյց տալ: Սրանք համարեա մեռածի
նման էին, ըերանները խօսք չէր դալիս: Յով-
նանը շարունակեց. — Սրանք ամբաստանուած են
և ես դատախազ, մենք սասունցիներս այստեղ
գործ չունենք: Եթէ գուք, հայ եկեղեցու հայ-
քերդ, դատաւորներդ և գիւղապետներդ արդար
կը համարէք այս երեք մարդկերանց, մենք կրկին
կը թողնենք որ խաղաղութիւնով գնան, թէպէտ
այս վկայաթուղթն ու իրանց ձեռ բերելու հա-
մար արիւն քրափնք ենք թափել: Իսկ եթէ ուրիշ
կերպ կը վճռէք, դարձեալ մեր պարտականութիւ-
նը կը համարէնք ձեր վճիռը ամենայն ճշու-
թիւնով մինչև վերջին կէտը կատարել:

Այս ասելով նշան տուեց. երեք մատնիչ իշխանները դուրս եկան և նրանց հետ սասունցիները, ժողովի նախագահը, որ Տարօնի արքեպիսկոպոսն էր, Յովնանի ետնից հիացումով նայելուց ետ առաջարկեց ծեր դատաւորին ձևակերպել դատավճիռը: Նա արտասաննեց հետևեալը. «այս երեք անձանց՝ Մուշեղ Վահեուուն, Վահրամ Տրունուն և Վահամ Գնունուն Աստծու առաջ արդար խղճով համարում եմ յանցաւոր իբրև մատնող իրանց իշխանին, դաւաճնող հայրենի երկրին, և պատճառ եղող Վասպուրական աշխարհի կոտորածի ու աւերման»: Միւսներն աջ ձեռք աւետարանի, ձախը սրախ վրայ զրած խոստովանեցին. «արանք յանցաւոր և մատնիչ են ինչպէս Մեհրուժան Արծրունին, Վասակ Սիւնին, Յուզա Իսկարովտացին»: Ծերը հարցրեց. «ի՞նչ պատճի արժան էք համարում սրանց»: Ամենն էլ միաբան պատասխանեցին. «Մահուան»՝ Արեղայ ատենադպիրն եկաւ, ծերի թելազրութեամբ գըրեց եղած վճիռը: Հրաման տրուեց, որ ամբաստեաները և ժողովուրդը ներս գնան: Ծեր դատաւորը կարդաց. «Մենք ներքև ստորագրողներս Փրկչի 852 թ. փետրվարի 3-ին ժողովուած Տարոնի Օձ քաղաքում, Աստծու առաջ քննեցինք Մուշեղ Վահեուուն, Վահրամ Տրունուն և Վահրամ Գնունսւն. ճշմարիտ ապացոյցներով յայտնի եղաւ մեզ, որ սրանք երեքը նամակ են գրել ու միաբան կնքած Բուղային ուղարկել, իրանց իշ-

խան Աշոտ Արծրունուն մատնել կապանքի ու գերութեան, և Վասպուրական աշխարհը սրի ու հրի բերան տուել: Այդ պատճառով նրանց դատապարտեցինք մահուան և այս վճով գործադրութիւնը յանձնեցինք խութեցի Յովնանին, Ստասուն գաւառի գօրավարին, որտեղ կամ որ կողմնա արժան ու յարմար կը դատի, այս պատժի վճիռը գործադրի ի գուշութիւն չարագործների»:

ԺԴ

Այս ժամանակ Ճորոխ գետի ափին, ուր Արտանուշի վտակը գալիս էր խառնըւում, Բագրատունի իշխանների շինած մի կուսաստան կար, ըլրի վրայ բարձր պարխապներով, աշտարակներով: Վանքը բերդի նման երկաթապատ դուռ ունէր. նրան կից շինութիւնների մէջ ապրում էին սպասաւորների ու զինուորների բազմութիւն: Կուսաստանն ապահովուած էր շրջակայ գաւառի եկամուսներով: Մայրապետը միշտ Բագրատունեաց ցեղից էր լինում օրիորդ կամ այլի տիկին և միշտ յարգանք էր վայելում շրջակայ յոյն և վրացի իշխաններից և ժողովրդից: Այժմեան մայրապետը Վասկանուշն օրիորդն էր, նրա խմաստուն կառավարութիւնով խաղաղութիւն և երջանկութիւն էր տիրում վանքում, Մշակայքում: Քառասուն հինգ տարին անց կին էր, բայց պարզ ու սև հագուստների մէջ, ճերմակ քողի տակ երեսուն հինգ տարեկան էր երկում վայելուց կեր-

պարանքով ու հասակով։ Գեղեցիկ աչքերի վսեմ
նայուածքը պատկառանք էին ազդում մեծին թէ
փոքրին։

Չմեռուան կիսում Վասկանուշը տիսուր մը-
տածում էր երկրի ողբալի զրութեան վրայ ու
նայում ձորոխի փրփրալից խառնուրդին, երբ վե-
րակացու կոյսը մեծ կնիքով մի նամակ տուեց
նրան։ Բացեց, զրութեան նայեց ու ասեց. «Հո-
գեր Տէրը Սիւնեաց երկրից մեզ մի կոյս է ու-
ղարկում, շուտով ներս ընդունեցէք. ով գիտէ,
խեղճն այս ցրտին սառել է. տաք սենեակ տա-
րէք, ուտելու բան տուէք և ինձ լուր բերէք։ Այս
եղանակին Սիւնիքից այստեղ աղջիկ ուղարկել,
ի՞նչ խղճմտանք է, ինչու համար։»

Վերակացու կոյսը հեռանալուց ետ մայրա-
պետն ինքն իրան խօսքը շարունակեց. «Ինձ գոնէ
գարնան քաղցր եղանակին աքսորեցին և այս
բանուն առաքեցին. արգեռք ով է լինելու այս աղ-
ջիկը, որին կաթողիկոսը «բարձր և ազատ տա-
նից»անուանելսվ հրամայում է «խիստ պահպանել»։
Ի՞նչ ոճիր պէտք է գործած լինի տասնուեօթ
տարեկան աղջիկը, չը լինի՞ սա էլ նոյնպիսի ոճ-
րագործ լինի, ինչպիսին ես էի, գուցէ սա էլ
Սեանայ կապոյտ լճի ափին իւր շրթունքը սիրու
բաժակին մօտեցրել է ու նկատուել։»

Այս մտածելով աչքերը զցեց ձորոխի ալիք-
ներին։ Այդ ջրերի մէջ Վասկանուշը տեսնում էր
Տարօնի իւր պալատը, նրա ոսկենկար սենեակ-

ները, ինքը նստած ոսկեթել բէհէզների մէջ, տես-
նում էր Սասունի առիւծակորիւն Յովնանին 20
տարեկան հասահում, նրա լայն ճակատը, մեծ գլու-
խը սկ մազերով պակուած մինչեւ ուսերն իջնե-
լիս, նրա կայծակնափայլ աչքերը, որ իւր ակնար-
կի առաջ խոնարհում քաղցրանում էին. տեսնում
էր իրան լուսնի հանդարտ լուսի տակ վարդալից
պարտէցում նստած, Յովնանն էլ իւր ոտների
առաջ չոքած, յանկարծ տեսնում էր իւր զիսա-
վերն կանգնած իւր հայր Վասակի բարկացայտ
աչքերը... և ահա ձորոխի ալիքները ամեն բան
քաշեցին տարան՝ թէ պալատ, թէ Յովնան, թէ
վարդենիք և թէ լուսին և թողին նրան միայնակ
տիսուր սենեակում կրակարանի առաջ։

Գիշեր էր, երբ աղջկան բերին մայրապետի
առաջ. աղջիկը քնքոյց կազմուածքով շուշանի նը-
ման սպիտակ էր և մազերով արծաթի պէս փայ-
լուն։ Հազիւ թէ ով լինելը հարցրեց, պատաս-
խանն եղաւ արտասունքի հեղեղ ու հեկեկանքի
ձայն։ Վասկանուշը զթուս մօր պէս նստացրեց
մօտը և սպասեց մինչեւ հանդարտուեց. — Այժմ
ասա, որգեակ, ով ես գու, ինչու են քեզ այստեղ
ուղարկել. կարելի է ճար գտնեմ քու թշուառու-
թեան։ — Իմ անունը Զարուհի է, Սիւնեաց Սու-
քան իշխանի զուստրն եմ. երկու տարի առաջ
հայրս նշնել էր ինձ Բարկէնի որդի Աշոտի հետ,
այժմ երբ հայրս մեռած է, իմ եղբայր Վասակը
կամենում է ամուսնացնել Գարդմանաց կտրիճ

իշխանի հետ։ Այդ բանը ես յանձնառու չեկայր ուստի ուղարկեցին այստեղ բանտարկուած մնալու։ — Լացդ պահիք, արդի, այստեղ բանդ չէ, քիչ ժամանակից ետք քեզ առն կը զրկեմ։ Գնա, քեզ համար պատրաստած սենեակում հանգստացիք, ինչ հարկաւոր է քու մասին, ես կը հոգամ։

Այս յուսառու խօսքերը լսելով աղջիկն իւր արտասութոր թշերի վրայ ծիծաղ խաղացրեց, երկիւղը վստահութեամ փոխելով վասկանուշը ձեռները համբուրեց ու գնաց քնելու։

Այս անցքից դեռ երեք օր չէր անցել, մի տուաօտ լուր տուին, որ մօտիկ աւանի տանուտէրն եկել է կարեոր լուր հաղորդելու։ «Կէս գիշերուան մօտ քսանի չափ ծիւաւորներ մտան զիւղը և օթեան ուզեցին։ Գլխաւորը 25 ամաց երիտասարդ է, մի քանի ընկերների հետ ընդունեցի տանը. միւսները զանազան տեղեր օթեանցին։ Երիտասարդը հարցմունքներ արեց վանք բերուած օրիորդի մասին, իրան անուանում է շիրակեցի ու իրը սպարապետի կողմից Պօլիս է գնում։ Բայց լեզուներից երեւում է, որ սիւնեցի են և աղջկայ ետեից են եկել։ Տկարութիւնը պատճառ բերելով երիտասարդն ուզում է մի քանի օր մեր զիւղում մնալ։ Երեխ մաքում կայ վանքի վըրայ յարձակուել։ — Հոգ մի անիկ, կարելի է աղջկայ այստեղ լինելու իմացել է բերող սիւնեցիներից։ Ասեցիր, որ իշխան երիտասարդն անհանգիստ է, քանի որ տանից չի դուրս եկել, գնա

իմ կողմից ողջունիր ու ասա. — կուսաստանի մայր իշխանուհին ուզում է քեզ տեսնել։

Գիւղապետը կարծել էր, թէ մայրապետը կը հրամայի պահապանների թիւն աւելացնել զըռներն ամրացնել, շատ զարմացաւ երբ լսեց նրա բերանից. թէ իշխանին ասա, միայնակ գայ վանքը։ Հիւր իշխանն ուզում էր ձի հեծնել, գիւղապետը շուտ հաղորդեց իրան տուած պատուէրը։ Երիտասարդն ուրախութեամբ յօժարուեց, երկուսով եկան վանքը։ Իշխանն երկաթապատ զըռնից ներս մտաւ կից սենեակը, ուր սպասում էր նրան մայրապետը։ Աշոտը յանդուզն բնաւորութիւն ունէր. բայց մայրապետի անհանգիստ վըսեմ կերպարանքը տեսնելիս իսկոյն շփոթուեց. զգաց որ նրա գեղեցիկ ըննող աչքերը իւր գիւտաւորութիւնը գուշակել էին. մնաց լուռ դռան մօտ։ Վասկանուշը հանդարտ ձայնով խօսեց. «Բարի լինի գալուստգ, իշխան. լսեցի որ Պօլիս ես գնալու սպարապետի կողմից. իմ մօր ազգականն է, ինչպէս է որ ինձ վրայ նամակ չի տուել»։ Մշոտն աւելի շփոթուեց. Ի՞նչ ասէր, որ սուտ չը լինէր. մեղք համարեց այդպիսի վեհ կնոջը խարելը, մնաց լուռ զլխակախ ինչպէս աշակերտը վարժապետի առաջ։ Վերջը բոլոր ոյժը ժողովելով թողեց երկչուսութիւնն ու ասեց. «Ներիր իշխանուհի, որ անունս ծածկել եմ այս զիւղը մտնելիս. իւր թէ կայսեր մօտ եմ գնում։ Դուք ամեն բան գիտէք, ես եկել եմ մի օրիորդի վիճակի մասին»

բան իմանալու. խեղճին իւր գահիձներն այսցուրտ ձմեռը սարէսար գցելով ուղարկեցին այս հեռաւոր բանդը. եկել եմ ազատելու ինչ միջոցով էլ որ լինի: Երկու տարի է քուն ու հանգիստ մոռացած թափառում եմ կաթողիկոսի, եպիսկոպոսների գոներին, որ հօրս ու անօրս միջի դժգութիւնը վերացնեմ, ամենն էլ ինձ տարտամ պատասխաններով կերակրեցին: Բագրատունի, Արծրունի իշխաններին դիմեցի. Նրանց մի մասը ուրախ էր, որ սիւնեցիք ներքին պատերազմ ունեն, միւս մասն անառակ կեանքով թաթախուած թողին, որ մեր մէջ արիւննեղութիւնը շարունակուի: Թէպէտ ես պատերազմին չեմ մասնակցել, բայց անօրս կողմը վնաս կրած լինելով ուղեցին վրէժինդիր լինել ու նշանածս ուրիշի տալ: Երբ աղջիկը չըյօժարեց, վճռեցին վանքում փակել ու սրտակուոր մեռցնել: Բայց ես մտադրուած եկել եմ կամ իմ նշանած Զարուհուն ազատել կամ մեռնել»: — Աշոտ իշխան, գուինձ խօսք տուր, որ ասածներիս կը լսես. Զարուհիդ փրկուած է: — Շատ բարի, խօսք եմ տալիս բոլոր հրամաններդ կատարելու, միայն թէ Զարուհուն վտանգ չը պատահի: — Դու դեռ ինձ չես ճանաչում. քսնի այս պարիսպները իրանց հիմքերի վրայ են, քանի ես կենդանի եմ, մարդ չի կարող նրա մազին դիպչել: Իմ կուսաստանը ոչ բանդ է և ոչ գերեզման. Եթէ Աստուած կամենայ, այս ձեռով նշանածիդ կըքերեմ ո, սեղանի առաջ քու մօտ:

Դու մի գթած մայր ես և թագուհի լինելու արժանի կին, գոչեց Աշոտը, — տուր աջդ համբուրեմ: — Լսիր, իշխան, այս խօսակցութիւնը գաղանի է միալու. գարնանը սրախիդ փափազը կը կատարուի: Փոքր սպասիր գրսի սենեակում, մի նամակ տամ կաթողիկոսին, իրան հասցնես: — Այս իշխանունին սովորական կին չէ, կարծես աստուածամայր լինի, վնթինթում էր Աշոտը գիւղը գառնալիս: Հասաւ թէ չէ, առանց ձիուց իշնելու հրամայեց իւր փոքրիկ գնդին հեծնել: Ուրշել էր Կարին գընալ, այնտեղից էլ Բագրատն մանել նամակը կաթողիկոսին յանձնելու, որ Բուղայի վախից այնտեղ էր գալու:

ՓԵ

Կը Բագրատն մտաւ, գտաւ Բագրատունի Աշոտ իշխանին խիստ ալլայլած. տխուր լուրեր էր ստացել առ. առաջին՝ որ Յովհաննէս կաթողիկոսը մեռել էր, երկրորդ՝ Բուղան հրաման էր ուղարկել Սմբատ սպարապետին, որ Մոլաց աշխարհից իւր մօտ գայ: Աշոտը գանդատում էր դժուար ժամանակի վրայ. մանաւանդ սասունցիք հիմնայատակ էին արել իւր հօր նախապատրաստութիւնները. իրանք ամեն ձիգ թափելով յոյս ունէին Բուղայի սիրտը կակղեցնել, սասունցիք անհաւատալի յանդգնութիւնով ամեն խորհուրդ տակն ու վրայ էին արել. նրանց վերջին քաջագործութիւնը նմանը չունի: — Ի՞նչ են արել, հարց-

ըեց սիւնեցի Աշոտը:—Մի խումբ լեռնականներ սարի գագաթներից իջնելով եկել են մինչև Դուխին, այստեղ Բուղայի աջքի առաջ երեք հայ նախարարների կախաղան են հանել: Դուխնի հայ թէ տաճիկ դարմանքով տեսնում են երեք մատնիչ իշխանների դիակները, կուրծքերի վրայ իրանց յանցանքը և դատաւորների վճիռը, որ ի կատար է ածել Յովլանը, խութեցոց զօրավարը: Որքան որ մեծ էր հայ ժողովրդի անձայն ուրախութիւնը, այսքան էլիխստ էր անիծուած Բուղայի կատաղութիւնը: Երեք չորս զօրագունդ ուղարկեց սասունցիների վրայ, որ հետեւն նրան ու ողջ կամ մեռած իւր մօտ բերեն: Կարծում եմ հօրս կանչուելլ սրա հետ կատ ունի: Աստուած ինքն օգնութեան համնի. չգիտենք ինչ դառնութիւններ է գալու մեր և ժողովրդի գլխին:

Աշոտ սիւնեցին կաթողիկոսի մահը լսելով մտաղրուեց Սիւնիք գնալ: Մնաս բարե ասեց Բագրատունուն և ճանապարհ ընկաւ սառած Ախուրեանի վրայով: Մի քանի ժամ հազիւ էր գնացել հեծելագունդը, ահա Արագածի ստորառում նկատեց երկու խումբ իրար դիմաց կանգնած. փոքրաթիւ գունդը, որ բլրի վրայ ամուր դիրք ունէր, հայոց գունդն էր, իսկ միւսը արարացիք էին իրանց ճերմակ փաթթաններով: Աշոտը մի քանի րոպէ դիտելուց ետ գոչեց. «աղէք, գնանք մեր եղբայրներին օգնենք» և իրար հետ ճիւնը մըտրակեցին դէպի բլուրը: Աշոտն առջեից սուրը խա-

չաձն փայլեցնում էր, որ հայ խմբին նշան տայ: Ճիշտ որ, 150 հոգի սասունցիք էին. 30 հոգի ձիաւոր, քաջ ու կորովի անձինք, երեք մարդ ջոկ կանդնած եկողներին նայում էին. սրանք Յովլանը, Գուրգէնը և Խոսրովն էին: Խմբակին սիրալիր ընդունելութիւն անելուց ետ Գուրգէնն ասեց. «մենք արդէն յարձակուելու որոշումն արել ենք, բայց այժմ քիչ կապասինք, որ ձեր ձիանը շունչ առնեն»: Աշոտը սիրով ընդունեց այդ պատիւը. կէս ժամ զուարթ զրուցելուց ետ այս երկու հարիւր հոգին—հետեւակները մէջտեղ զցած, ձիաւորներով աջ ու ձախ պատած սաստիկ յարձակում արին բլուրն ի վեր: Թշնամիք երկու հազարից աւելի էին. գոսում գոչումով ընդունեցին նրանց համարելով յաղթութիւնը իրանց կողմը, բայց իրանց յարձակումներն անօգուտ անցան հետեւակախմբի դէմ, որ առաջ եկած ամեն ինչ նիշգակներով խորտակում էր ու անցնում: Աջ թեկի վրայ Գուրգէնն էր հսկայ հասակով, իւր ահազին թուրը շարժելով դիմացն եկողին կործանում, տապալում էր. ձախ կողմը սիւնեցիք առիւծի պէս էին պատերազմում Աշոտ իշխանի խրախուսով: Կոտորած կոտորածի ետնից հասցնելով տեսան որ արաբացի գունդը անզօրացած սկսեց նահանջել, իրանք էլ թողին հալածելը: Իրանցից միայն երկու մեռած կար և մի քանի թեթև վիրաւոր, իսկ թշնամուց երեք հարիւրի չափ կոտորուած: Փառք տուին Աստծուն և քաշուեցին դէպի Ա-

խուրեան։ Աշոտը կամենում էր իւր ճամբէն շարունակել, Գուրգէնն ու Յովսանը նրան թախանձեցին, որ իրանց հետ ընկերանայ ու մնայ, ոչ թէ նրա համար, որ իրանց առաջ մեծ վտանգ կայ, այլ նրա համար, որ իրանց վճռել են վրէժինդիր գունդ կազմել. հայ ազգի նախատինքը քաւելու և թշնամի, մատնիչ անձանց պատուհասելու։ — Շատ լաւ, դուք Տարօնն ու Վասպուրականն լք ներկայացնում, թող ես էլ իմ ձիաւորներով Սիւնիքը ներկայացնեմ, մինչև գարուն զործ չունեմ, ասեց Աշտան ու ընկերանալով կարսի ճանապարհը բռնեց։ Ախուրեանն անցնելով զիշերը հասան Արզինայի աւանը, Լուր հասաւ, թէ մի մեծ խումբ կարս է գտիս իրանց ճամբէն կրտրելու համար։ Մյժմ որոշեցին Արդահան զնալ, եթէ թշնամին պատահի, պատերազմէն ու ջախջախելով անցնեն։ Մինչև յունաց սահմանագլուխ առանց արգելքի գնացին. բայց Գուրգէնն առաջապահ գնդով գնալիս յանկարծ ենթարկուեց հարիւր յունական ձիաւորների յանդուզն յարձակման, շրջապատելով հրամայեցին նրան անձնատուր լինել. Գուրգէնն առաջ խոհեմութեան ճամբէն բռնեց, չուզենալով տաճիկների թշնամութեան վրայ յոյների գայրոյթն էլ աւելացնել, սկսեց յոյն գօրավարին համոզել խօսքով, որ ինքը յունական իշխան է, կայսրի հապատակ, նրա շնորհով ամբողջ գաւառի տէր։ Յոյները Գուրգէնի խոհեմ ընթացքը երկիւղի նշան համարեցին։

գօրավարը զէնքը ձեռին յարձակուեց Գուրգէնի վրայ պահանջելով նրա սուրը։ Այն ժամանակ Գուրգէնը գոռաց. «Սուր էք ուզում ինձնից, յոյներ, առէք թէ կարողանաք։ Դէ աղէք, դարձաւ իւր քաշերին, ձեզ տեսնեմ, թէ ինչպէս էք բանեցնում ձեր սրերը սրանց վրայ»։ Ամենից առաջ գլխաւորը զոհ գնաց նա ահազին սրին։ Մի բանի ըուպէի մէջ յունական խումբը ցաք ու ցրիւ եղան գաշտի վրայ, բսանից աւելի մեռել թողնելով. մնացածները վայրավատին փախան։

Կալնի յոյն գօրավետը իւր գնդով եկել էք Արմանեակ բերդը պաշարել, այդ ջարդուողները նրա պահապան խումբն էր։ Այսպէս հայոց վրէժինդիր փոքր գունդը ձախ թեր վրայ ունէր աւրաբացիներին և աջ թեր վրայ յայներին։ Խորհրդի նստան մեր չորս գօրապետները, Գուրգէնը եղելութիւնը համառօտ պատմելուց վերջն ասեց։ — Իմ կալծիքով ետ դառնալ անկարելի է, առաջ զնանը և եթէ պէտք է, արգելք եղողներին կոխ տալով անցնենք։ Յովսան, յոյներին դու էլ ճանանչում ես, սրանք այնքան էլ ամուր զինուոր չեն, որքան խօսելու և փախչելով մէջ վարպետ են։ Եկէք մենք յարձակուենք նրանց վրայ և Արմանեակ բերդի մօտ պաշարենք։ Յոյսունեմ որ յաղթենք։ — Բայց ինչքան է յոյն գընդի թիւր, այդ իմանայինք, հարցրեց Խոսրովը։ — Կալանաւորեցին ստացած տեղեկութեան նայելով շատ չեն, 3—5 հազար։ Եթէ յունաց մեծախօ-

սութեան բաժինն էլ հանենք, կը մնայ նրա կէսը: — Արմանեակ բերդի պաշտպանների թիւը ի՞նչքան ես կարծում, հարցը եց Խոսրովը: — Երկու հարիւր հոգի են, բայց ընտիր տղամարդիկ, ես նրանց լաւ եմ ճանաչում: — Ուրեմն էլ ինչի՞ ենք սպասում, գոչեց Աշոտը, զնանք, ժամանակ չը կորցնենք: — Իսկ դու, Յովնան, ինչո՞ւ բան չես խօսում, ասեց Գուրգէնը: — Հակառակ ոչինչ չունեմ, տըգերսնց հետ մի քիչ կերակուր ուտենք, և յարձակուենք, պատասխանեց Յովնանը և զնաց իւր զինուրների մօտ: — Ինչպէս որ մենք մի խօսքի և ո՞ւ մաքի ենք, ուր էր թէ միշտ այսպէս լինեն հայերը, հառաչեց Գուրգէնը: — Արմանեակ բերդի մէջ այս գիշեր լաւ ընթրիք կանենք, խօսեց Աշոտը ձեռներն ուրախ շփելով: — Ապրես, երիտասարդ, պատասխանեց Գուրգէն: աջի ահագին բազուկը մեկնելով և Աշոտին իւր լայն կըծքի վըրայ սեղմելով, Աստուած քեզ մեր փոքր բանակի համար ուրախութիւն է առաքել. տես, Յովնանի երեսին անգամ ժպիտ խաղացրիր: Հայ իշխանները քեզ պէս պէտք է լինեն: Միշտ այսպէս ուրախ ու քաջ ես, չէ: — «Սիւնեցիք միշտ քաջ են, իսկ իմ ուրախութիւնն ամիսներով փախել կորել էր: Աստուած երկար կեանք և երջանկութիւն տայ այն կնոջը, այն հրեշտակին, որ իմ սրտին կրկին յոյս ու զուարթութիւնն պարզեց: Խմենք նրանց կենացը»: Այս ասելով թիկնապահի ձեռից առաւ արծաթէ մեծ բաժակը և դար-

տակեց: Յովնանն ու Գուրգէնը իբրև սիրակորոյս մարդիկ լուռ մնացին. Խոսրովը հանգիստ կերպով պատառը բերանում գինու բաժակը ձեռն առաւ և ասեց. «Սամում եմ այն կնոջ կենացը, որովհետեւ հրեշտակ անուանեցիր: — Աստուած է վկայ, հրեշտակ է նա, խօսեց Աշոտը, ես այդպիսի կին չեմ տեսել կեանքիս մէջ, մեծ ու փոքր նրան օրհնում են ու աստուածամօր պէս պաշտում: — Այ տղայ թիկնապահ, գոչեց Գուրգէնը, տուր այդ բաժակը, խմում եմ այդ հրեշտակի անզին կենացը, որ թշուառներին մայրութիւն է անում և տխուր երիտասարդ սրտերին ուրախութիւն բերում: — Թող լինի հրեշտակի կենացը, ասեց նոյնպէս Յովնանը և մի գաւաթ ջուր խմեց ըստ իւր սովորութեան ու տեղից ելաւ:

ԺԶ

Մեր փոքր գունդը կէս ժամի չափ հազիւ էր քայլել, ահա հազար հոգուց բաղկացած մի յունական գունդ երևաց: Գուրգէնն իւր մեծ ձայնով առջևից գոչեց. «Փառք տանք Աստծուն, հայ տղէք, թշնամին մեզ վրայ քիչ քիչ է ուղարկում»: Յովնանը դառնալով իւր խութեցիներին ասեց. «առաջ նետերը գործ զրէք, ապա նիզակները, իսկ վերջը սրերը: Դէ ձեզ տեսնեմ, իմ քաջ սասունցիք, ձեր աղեղներից ոչ մի նետ զուր չըպէտք է թռչի և ոչ էլ սրի կամ նիզակի հարուած անօգուտ կորչի: Թշնամին մօտենալուն պէս սաս-

տիկ նետաձգութիւն բաց արին վրէն, հարիւր յիսուն վիրաւորներ ընկան նրանցից. հայ խումբը վրայ վագեց նիզակներով՝ ժամանակ չտալով շունչ առնելու։ Կոտորածի գործն սկսուեց կենդան մընացածները փախան։ Գուրգէնը, Աշոտը, Յովնանն ու Խոսրովը իրանց քրաինքը խառնեցին թշնամու արեան հետ, ձիւնապատ գետինը ծածկուեց չորս հարիւր գիւակներով ու կարմիր արիւնով։ Կոփէր կէս ժամ տեղեց. հայերն իրանց կորուստը քննելով տեսան, որ միայն մի քանի վիրաւորներ ունէին, փառք տուին Աստծուն, որ իրանց յաղթութիւն պարգևեց։ Շարունակեցին ճանապարհը, որ մնացած յոյն զօրքին ժամանակ չըտան սթափուելու։ Փախստական զինուորները բանակը հասնելով ահ ու դողով ամենի սիրտը լցրին՝ հայ խմբի զօրութիւնը չափազանց մեծ նըկարագրելով։ Այս լուրը յոյն զօրավարի ու զօրքի վրայ վհատութիւն բերեց, հրաման արեց շուտ վերցնել բանակը և կարինի ճանապարհը բռնել։ Արագ հեռանալով, հաղիւ կարեսը հետաները տանելով, ահագին աւար թողին Արմանեակի առաջ։ Բերդում պաշարուածները չկարողանալով մեկնել փախստեան պատճառը զարմանում էին։ Գուրգէնը իւր թիկնապահ Վահրիմին առաջուց ուղարկել էր բերդը Դրիգոր իշխանիկին տեղեկացնելու։ Գիշերն արգէն վրայ էր հասնում, երբ ձիաների ոտնաձայնը հնչեց բերդի կամարների տակ։ Աշոտը զուարթածան գոչեց. «Ես ձեզ չասի, որ այս

գիշեր Արմանեակի իշխանի հիւրն ենք։ Ահա իմ գուշակութիւնը կատարուեց։ — Ո՞վ է այս երիտասարդը, հարցը բերդի իշխանը Գուրգէնին։ — Սա մեր վոքը բանակի ցնծութիւնն է ու Բաբկէն Սիսականի որդին։ — Այս երիտասարդի հետ ոչ թէ միայն ցնծութիւն, այլ և բարեբաղդութիւն էք դուել։ — Ո՛չ, Հայաստանի այս վիճակի մէջ բարեբաղդութիւն խօսքը խակի հային սազ չի գալիս։ Այսօր յաջողութեան օր է, եկէք հանգստանանք և ուրախ լինենք, հոգսն ու մտածմունքը վաղուան թողնելու։

Զուր բերուեց, հիւրերը լուացուեցին, բերդի գահիները լուսաւորուեցին. վառարանի մէջ կրակը փալեց, երգիչներն ու նուազողները իրանց ծայնն ու գործիքները հնչեցրին. սեղանը ամեն տեսակ խորտիկներով, զինիներով և ազնիւ պտուղներով լցուեց։ Երբ տանտէրը սեղան նըստելով հիւրերին կերակուր վայելելու էր հրաւիրում, Գուրգէնը իւր թիկնապահին հարցը ց. «Վահրիմ, ուր է Յովնան եղբայրը»։ — Ներքեն է, սասունցիների հետ հաց է ուտում։ — Գնա շուտ կանչիր նըան այստեղ, թէ չէ ես չեմ կարող հաց ուտել։ — Ո՞վ է այդ մարդը, հարցը իշխանիկը, ես ինքս կը գնամ վերև բերելու ու շտապով գնաց, Գուրգէնն էլ յետեից. խնդրեցին, բայց Յովնանը դժուարանում էր գալ, — այստեղ աւելի հանգիստ է, թողէք ներքե մնամ։ — Թէ ինձ սիրում ես, գնանք, Յովնան, ասեց Գուրգէնը Յովնանի թելից ամուր

բռնելով, այս զիշերուայ հանգստութիւնդ խանգարիր. երկինքը ձմեռուայ մէջ անգամ զուարթօրեր ունի, մեր սրտերն ինչու չունենան»։ Նըրան վերև բերելով ամենը նստեցին սեղանի շուրջը, կերան խմեցին, զուարձացան։ Յովնանն էլ զուարթ էր երևում, տիտուր դէմքի վրայ ժպիտ էր խաղում։ Իսկ երբ երգիչն ասեց այս խօսքերը «Անցած օրերի քաղցր յիշատակք ետ դարձէք։ Քնած վարդեր, գարուն եկաւ, ծաղկեցէք.

Սէր ու հրճուանք մի անգամ էլ արթնացէք»։ Էլ չկարողացաւ դիմանալ, աչքերը փակեց ու մաքի ծովն ընկաւ։ Ուղիղ 27 տարի առաջ մի հրեշտակային անուշ ձայն վարդալից պարտէցի մէջ այդ երգը մըմնջել էր։ Այժմ այդ յիշում էր սրտի արտասուքով։ Միթէ սէր և հրճուանք կարող էին գերեզմանից յարութիւն առնել։ Այս բաների վրայ էր մտածում Յովնանը և քնած ձեանում։ Սեղանակիցներից միայն Խոսրովն էր, որ գիտէր նրա սրտի գաղանիքը ու անչափ յարգում էր։ Յովնանը Գուրգէնից թույլտութիւն խնդրելով գնացսասունցիների մօտ հանգստանալու, քնելու, իսկ Խոսրովն Աշոտ իշխանի հետ զուարձաբանելով ուզում էր նրանից «հրեշտակ կնոջ» գաղտնիքն իմանալ, որի կենացը այնպէս եռանգով խմել էր։ Դեռ ես առաջ ուզում եմ իմանալ ով է այս Յովնանը, խօսեց Աշոտը. պատերազմի մէջ քաջ զօրավար է, իսկ ընկերութեան մէջ բոլորին սառեցնում է, խօսելիս ակամայ է

խօսում, ծիծաղելու տեղ հեգնում է, բերանը զինի չի դնում։ Նրա շարժուածքն ու վարմունքը վկայում են, որ դա խելօք ու լաւ զլուխ է պատերազմի մէջ, բայց խնջոյքի միջոցին բանի պէտք չէ. լաւ արեց որ զնաց։ Ճշմարիտ ես նկատել, դա զուարձութեան մարդ չէ, այլ գործիք եթէ ուղենար, մեր նախարարների կարգը կը դասուէր, շատերից էլ կը բարձրանար։ Իւր սասունցիք նըրան այնպէս են հնազանդում ու սիրում, որ եթէ հրամայէ մեռէք, ամենը անխօս կըմեռնեն։ Տես, երեք չարագործ կախելու համար Սասունից վեր են կացել եկել Դուխն։ — Ի՞նչ կարիք կար Դուխնի զոսմու կախել, աւելի յարմար չէ՞ր մատնիչին առաջին պատահած ծառից կախել։ Մեծ տարբերութիւն կայ Բուղայի աչքի առաջ մի դաւաճան հայ կախել, որ նրա անզգամութեան գործիք է եղել, քան թէ մի անապատում։ Դա նշանակում է գաւաճաններին հասկացնել, թէ հայ երկրի մէջ կայ մի դաւաճան, որ հսկում է, վճիռներ դնում ու գործադրում։ Ուրեմն ինչու Աշոտ Բաղրատունին այդ առիթով գանգատում էր, հարցըց Աշոտ Սիւնեցին։ Աշոտն ու իւր հայը սպարապետը մի հանելուկ են։ Սասուած գիտէ միայն, թէ ի՞նչ է նրանց ուզելիքը կամ մտածելիքը։ Մեր և նրանց գործունեութեան մէջ ահազին տարածութիւն կայ։ Յովնանը զուր տեղ մարդ դաւապարտող չէ։ Նա իւր ձեռին ունէր իշխանների յանցանքի ապացոյցը, որ հանել էր

Բուղայի գիւանից: ՏԵղն էր այդ մատնիչներին: Բայց դու այն ասա, թէ այսպէս երիտասարդ ուր ես թողել սիւնեաց աշխարհը. Ի՞նչ բան է քեզ պտտեցնում: Ո՞վ է այն կինը, որին այսօր այնքան գովեցիր: — Դա մի կուսաստանի մայրապետ է: — Երկի անունն էլ Վասկանուշ, վրայ բերեց Խոսրովը: — Դու որտեղից գիտես, հարցրեց Աշոտը: — Բացի այդ նա Բագրատունեաց ցեղից է: — Ուրեմն դու նրան ճանաչում ես: — Այս, շատերից լաւ եմ ճանաչում, ասեց Խոսրովը: — Իրաւունք ունէի նրան գովելու թէ չէ: — Դու ի՞նչ տեսար, որ գովում ես: — Ի՞նչ տեսայ: Ես տեսայ մի կին, որին Արտանուշի բոլոր գաւառը իբրև թագուհի յարգում է: Մի ուրիշ բան էլ կայ, որ այժմ չեմ կարող պատմել:

Խոսրովն այդ էր ուզում իմանալ, տեսաւ որ չեղաւ, միւսների հետ վերկացաւ գնաց քնելու:

ԺԵ

Առաւօտը գեռ լոյսը չբացուած հետևակ գրաբեր եկաւ Արտանուշ գաւառից և շտապ օգնութիւն էր խնդրում արաբացի աւազակների դէմ, որոնք յանկարծ մտել էին երկիրը ու ամեն նեղութիւն հասցնելով գիւղացիներին, պաշարել էին. Եկած զրի բովանդակութիւնն իմանալու համար Յովնանը, Խոսրովը և Աշոտը գնացին Դուրգէնի սենեակը: Իշխանիկը բարձրածայն կարդալուց զինի ասեց, պատուական բարեկամներ, չեմ

կարող անօգնական թողնել մի հարևան գաւառ, որի բնակիչները բոլորը հայ են և ինձ են գիմում ոչ միայն իբրև հայի, այլ և Բագրատունու, որովհետև այդ գաւառը շատ վաղուց Բագրատունեաց առաջին սեպհականութիւնն է: — Ո՞վ է երկրի տէրը, ով է նամակը գրել կամ ստորագրել, հարցրեց Գուրգէնը: — Ստորագրողն է Վասկանուշ Բագրատունին, Արտանուշի վանքի մայրապետը: Այս կինը սպարապետի հօրեղբօր զաւակն է, Տայոց ու Բարձր հայոց նահանգներում հոչակուած իւր իմաստութիւնով ու առաքինութիւնով: — Ուրեմն էլ ի՞նչ ենք կանգնել ուշանում, գնանք, ասեց Աշոտը և ոտքի կանգնեց: — Կեցցես Աշոտ, խօսեց Գուրգէնը ծիծաղելով, այս կինն էլ դիրքու միւս կնոջ մօտ, որի կենացը երէկ մեզ այնքան զինի խմացրիր: — Միննոյն կինն է, գնանք, ժամանակ կորցնելու կարիք չկայ, պնդում էր Աշոտը:

Այս խօսակցութեան միջոցին Խոսրովը բերան չբացեց, շարունակ Յովնանին էր գիտում, որ Վասկանուշ անունը լսելիս մի փոքր ցնցում զգաց, նրանից ետ անվրդով էր ինչպէս քարէ արձան: — Ուրեմն գնանք Յովնան, խօսեց Գուրգէնն ուրախաձայն, տես այս երիտասարդն արդէն զէնքերը վերցրեց: — Դնանք, ընդ դէմ ոչինչ չունեմ, ասեց Յովնանն ու գուրս ելաւ:

Չորս հարիւր հոգի հետևակ և ձիաւոր Արմանեակ բերդից արագ արշաւեցին դէպի Արտա-

նուշ: Մի գիշեր ճանապարհին հանգստանալով,
երկրորդ օրը քաջ գունդն այն ժամանակ հասաւ
վանքի առաջ, երբ արաբացիք հողապարապի հետ
կոռւելով ներս խուժելու վրայ էին: Այս անգամ
խմբի զիւցազր Գուրգէնի փոխարէն Աշոտն էր, որ
մոլեզնաբար կոտորածի սկիզբ տուեց: Եթէ Գուր-
գէնի սուր աչքը նրան հետեւիս չլինէր, երեք
անգամ կեանքը կորցրած կը լինէր: Արաբացիք եր-
կու կողմից սրի մէջ մնալով ջարդուեցին և նրան-
ցից հազիւ մի քանի հոգի փախչելով կարս հասան:
Սմբատ աւանի ընակիչներն օգնական զօրքին այդ
գիշեր հիւրասիրեցին իբրև եղեօր: Յովնանն ա-
ռաջարկեց զինուորներին բոլոր աւարը տալ
վնասուած գիւղացոց, որ զրկանքները փոխա-
րինեն:

Առաւօն իշխանիկը զօրքի զլխաւորներին
յայտնեց, արդեօք վայել չէր այցելութիւն անել
վանքի իշխանութիւն: Այս հարցի վրայ Աշոտն ան-
հաս մտածում էր, իսկ Յովնանը վճռական ձայ-
նով առաց: «Ճեր երթալը կարծեմ անհրաժեշտ է,
ինձ համար կարիք չեմ տեսնում, մանաւանդ որ
ժամ առաջ պէտք է ճանապարհ ընկնեմ Սասուն
համելու»: Դեռ այս խօսքը բերանումն էր, որ
գիւղապետը ներս մտաւ, ամենին ողջունելով ա-
ռաց, «Յարդոյ տէրեր, վասկանուշ իշխանութիւն»:
Այս խօսքի վրայ իշխանութիւն չորս պառաւ կոյ-
սերով շրջապատած ներս մտաւ: Յովնանին էլ

փախչելու տեղ չըմնաց. Նրա սըտի տրոփիւնն
այնքան խիստ էր, որ մօտը կանգնած Խոսրովը
որոշ լսում էր: Մի տեսարան էլ Աշոտի գրու-
թիւնն էր, որ Գուրգէնի ետեր պատսպարան գրտ-
նելով աշխատում էր ծածկուել իշխանուհու աշ-
քից: Վասկանուշը կարձ և քաղցը չնորհակալու-
թիւն արեց ամենին իրանց քաջութեան և ազնը-
ւութեան համար, ապա խօսքը վերջացրեց այս
կերպ. «Հայ ազգի համար մեծ միմիթարութիւն է
իւր թշուառ վիճակի մէջ տեսնել այսպիսի գիւ-
ցազուններ, որոնց զինուորական քաջութեան
հետ միացած է առաքինութիւնն ու անշահասի-
րութիւնը»:

Այս խօսելով ոտքի կանգնեց ու աւելացրեց.
«յոյս ունեմ, յարգելի զօրավարներ, որ մեր վանքի
չնորհակալութիւնը պատուելու համար յանձն առ-
նել այս երեկոյ մեղ մօտ ընթրելու»: Մի քանի
քայլ առաջ գնալով Աշոտի մօտ կանդ առաւ. «Քեզ
ծածկելու համար լսւ պատսպարան ես գտել, Ա-
շոտ իշխան, սակայն քաջութիւնդ դարձեալ քեզ
յայտնի է արել ամենին, երեկուան համբաւդ ինձ
հասաւ և ուրախացրեց, գոհ եմ քեզնից»: Դրանից
ետ իշխանուհին Յովնանի առաջ կանդ առաւ,
նրա լուսալիր նայուածը վսեմ ու քաղցը կեր-
պով ուղղուեցին այդ մարդու կրակոտ աչքերի
վրայ, որոնք այդ բռպէին կարծես դակացել էին:
Յովնանը գողում էր, նրա անխոնջ ծնկները հա-
զիւ էին նրան պահում. «Յովնան զօրավար, ինձ

չես ճանաչում:—Ես ովք եմ, որ քեզ ճանաչեմ,
իշխանուհի, պատասխանեց Յովնանը ճնշուած
ձայնով:—Ես Քաղբատունի Վասկանուշն եմ, Վա-
սակի դուստրը... միտգրերիր, այնպէս չէ:—Այս,
իշխանուհի, ասեց Յովնանը նոյն խեղճ կերպով:
—Ուրեմն այս երեկոյ կըտեսնուենք, այնպէս չէ:
—Հրամանը քոն է, իշխանուհի: —Շատ բարի,
ասեց Վասկանուշը ու իշխաններին հրաժեշտ տա-
լով ելաւ, ջորին հեծնելով վանքի ճանապարհը
բռնեց: Իսկ Յովնանը էլ չկանգնեց, իսկոյն անհե-
տացաւ: Գուրգէնն Աշոտին դառնալով ասեց. — դու
իրաւունք ունես, այս կինը սովորական կին չէ,
ձիշտ որ թագուհի. նրա շարժմունքի, ձայնի մէջ
մի վսեմութիւն կայ, որ ակնածութիւն է հրա-
մայում: Խռարով, տեսած Յովնանի վիճակը. այդ
առիւծը ապուշ ոչխար էր դարձել, աչքերում
փայլ չէր մնացել, ես այնպէս կարծեցի թէ հի-
ւանդ է:—Այս, երեսում էր, որ քիչ հիւանդ է, ա-
սեց Խոսրովը:—Քանի տարեկան ես կարծում այդ
կնկանը, Խռարով:—Իմ կարծիքով, այժմ 45 պէտք
է լինի: — Շատ պակաս է ցոյց տալիս կերպա-
րանքը: Այս, ինչ է նշանակում վանքի կեանք. ա-
զօթելը, ուտել-խմելը, զաւակ չունենալը երի-
տասարդ են պահել նրան: — Այդպէս շուտ դա-
տաստան անելը անխոհեմութիւն է, Գուրգէն.
ով զիտէ մարգկանց կեանքը ինչ գաղտնիքներ
ունի. ասած է՝ մարգկային որտի խորքը ծովի
անդունդների նման է, ով զիտէ ինչ հանդամանք

Բազրատունի մի գեղեցիկ օրիորդի Եփրատի ա-
փերից բերել է Ճորոխի ափերի վրայ զցել: Հե-
ռու չգնանք, Գուրգէն, քեզ պէս զուարթ գեղե-
ցիկ հսկային տեսնողը մի՞թէ չի ասիլ, ահա աշ-
խարհիս ամենաերջանիկ մարդը: Բայց ես առանց
իմաստուն լինելու տեսնում եմ, որ մի որդ կայ, որ
սիրադ կրծում է, տեսնում եմ մի վիշտ կայ պարզ
ճակատիդ վրայ, որ պայծառ արևիդ վրայ ստուեր
է զցում: Ի՞նչպէս ասեմ թէ Գուրգէնը երջանիկ
է: Այդպէս էլ իմացիր այս սեերով ծածկուած
կնոջը, որի կեանքը բեհեղների ու ծիրանիների
համար էր ստեղծուած: — Խոսրով, իրաւունք ու-
նես, դու ինձնից խելօք ես:

Այդ երեկոյ վանքի նախապարսպի սենեակ-
ների մէջ լաւ ընթրիք արին իշխանուհու հիւրե-
բը. ինքը մի քանի ըոտէով երեաց և ապա քա-
հանային իւր տեղապահ թողնելով հեռացաւ:

Երբ ընթրիքը վերջացաւ ու ամենը պատ-
րաստում էին Սմբատաւան դառնալ, իշխանու-
հին կրկին երեաց և ամենին բարի ճանապարհ
մաղթելով, դարձաւ Յովնանին ասեց. — Քեզ ու
սաստնցիներին դեռ չեմ կարող ողջերթ մաղթել,
ես փափագում եմ, որ դուք մի քանի օր աւելի
մնաք իբրև հիւր, կարելի է, անզգամ արաբացիք
իրանց պարտութեան համար վրէժ առնելու են
գալիս. դուք մեզ կը պաշտպանէք: Ես էլ Տարոն
գաւառից եմ ու ձեզ մերձաւոր հայրենակից, յոյս
ունիմ, որ ինդիրս չէք մերժիլ:

Յովնանը տկարութիւնից այժմ՝ կազդիհերթւել էր, առաջուայ պէս շփոթուած չէր. խննարն պատասխանեց. «Քու փափագն ու խնդիրը սասունցիների համար սուրբ հրաման է. մեղ երջանիկ կը համարենք, եթէ կարողանանք քեզ ու կուսաստանին կեանքի գնով ծառայել: Այդ միայն իմ փափագը չէ, այլ ընդհանրապէս բոլոր սասունցիների»: Այս խօսքերը այնպէս միամիտ արտասահնուցին, որ ոչ ոքի կասկածելու տեղիք չըտուին: Խոսրովն էլ չէր կասկածիլ, եթէ Հոփիսիմէ տիկնոջից այդ պատմութիւնը լսած չինէր: Առաւոտը հայ հեծելագունդը բաժանուեց հետևակ սասունցիներից: Գուրգէնի կալուածքը Թորթոմումն էր, յոյները տիրապետել էին տիրոջ բացակայութեան պատճառով, այժմ՝ այնտեղ էր շտապում: Յովնանին խնդրեց որ գայ իրան այցելու:

ԺԸ

Պնաց մենակ Յովնանը իւր սասունցիների հետ. ամբողջ քսանեօթ տարի էր անցել ու Յովնանը Վասկանուշին կարօտ էր: Այժմ ոչ միայն նրան տեսաւ, այլ և հետը խօսեց: Ինչքան բան ունէր խօսելու այդ կնոջ հետ, ինչքան բան ունէր նրանից հարցնելու, իմանալու: Յիշում էր երկար տարիների, անթիւ գիշերների անհատնում պատմութիւնները, երբ որ ինքը սիրել, տանջուել էր, տարագրուելով լոիկ միայնութեան մէջ

իրան միսիթարել էր «Աստուած և Վասկանուշ» անուններով: Այս մտածմունքները նրա սիրան ու ուղեղը ալէկոծում էին, վայրկեանները ժամերից աւելի երկարացնում, երբ գիւղապետը, որ ծեր մարդ էր, ներս մտաւ ու հանդարդ ձայնով ասեց. «Յովնան զօրավար, մայր իշխանուհին ուզում է քեզ տեմնել»: Նրան այնպէս թուաց թէ այդ ծերն արքայութեան աւետաբեր հրեշտակն էր: Յովնանը թուաւ հասաւ վանքը. նրան առաջնորդեցին այն սենեակը, ուր Աշոտ Սիւնին և Վասկանուշը տեսութիւն էին ունեցել և որտեղ ինքն ուրիշների հետ տեսել էր Վասկանուշին— այժմ ոչ ոք չկար սենեակի մէջ: Դուռը վրէն փակուեց: Սիրան ուժգին տրոփում էր, կասես պայթելու մօտ էր. ձեռը զրեց կրծքին, որ տանջուած սրտի բարախումը հանդարտեցնի, յանեկարծ գաղտնի դուռ բացուելով երևաց Վասկանուշը գոյնը թուած. երկու ծանր ու հանդարտ քայլ անելով դէպի առաջ՝ «Յովնան» կանչեց ու բազուկը մեկնեց: Լեռնականն իսկոյն ծնկաչոք եղաւ, փոքրիկ գեղեցիկ ձեռը իւր ափերի մէջ առնելով զրեց մէկ իւր շրթունքների, մէկ իւր աչքերի վրայ, յորդ արտասուքով ողողեց ու հեկեկաց: Այդ դիրքի մէջ այնքան ժամանակ մնաց, մինչև որ իշխանուհին ասեց, «Բաւական է Յովնան»:— Ոհ իմ տիրուհի, ուր էր թէ այժմ մահը վրայ հասնէր, խօսեց Յովնանը գլուխը բարձրացնելով: Մի քանի վայրկեան այսպէս մնացին տա-

ըիներով բաժանուած սիրահարները, յանկարծ Յովնանն զգաց որ Վասկանուշի ծնկները ցընցւում են, Տեսաւ որ ընկնելու վրայ է, վրայ թըռչելով գրկեց նրան ու մանուկի պէս բերեց, բազմոցի վրայ դրեց: Սարսափը պատեց նրան երբ մահուան գոյն նկատեց նրա դէմքի վրայ: Շըրթունքները ճերմակել էին, աչքերի բիբերը իրանց փայլը կորցրած դէպի յոնքերն էին դիմել: Պատերազմի և արիւնի մարդը նուաղելու մասին դադափար չունէր. կեանք ու մահ էր ճանաչում, այդ երկուսի մէջտեղի վիճակը չէր տեսել: Սարսափով պաշարուած ճեռը դրեց նրա սիրելի սըրտի վրայ, բաքախում զգալով յոյս առաւ, թէպէտ դա իւր ճեռքի երակների տրոփիւնն էր, շուտով պատուհան բացեց, որ օդ մտնի, դողդոջուն ճեռներով թուլացրեց նրա կուսական և պաշտելի մարմնի կապերը. մի բաժակ ջուր գտնելով մօտեցրեց տիրուհու բերանին. շրթունք և ծնոտ կողպուած լինելով ցուրտ ջուրը թափուեց ձիւնափայլ մարմնի վրայ. մի փոքրիկ ցնցում յայտնի արեց Յովնանին, թէ դեռ կեանք կայ իւր սիրած հրեշտակի մէջ. սառած ոտներն ու ճեռները շըփեց իւր հրացայտ գողգող ճեռներով, չը համարձակուելով ճեռ մեկնել նրա երեսին ու նուիրական կուրծքին՝ սկսեց փչել տաքացած շնչով: Ահա վերջապէս ծնոտները թուլացան, շնչառութիւնն սկսեց, աչքի բիբերը իրանց բնական դիրքն առան: — Տէր Սատուած, տէր Աստուած, այս

ինչ շնորհ է, որ ինձ անում ես, ասում էր ինքն իրան Յովնանը: Լսելի եղան հառաջանքի դօրեղ ձայներ Վասկանուշի բերանից, շարժուեց, իրան ուղղեց և ասեց. «Ո՞ւր եմ ես»: — Ահ, տիրուհիս, այստեղ ես, պատասխանեց Յովնանը: «Յովնան, այդ դժու ես, մի գնալ, էլ մի հեռանալ: Ո՞հ, շատ երկար էր այս մենակութիւնը»: Յովնանը շարունակեց շփելն ու հով փչելը, մինչև տիրուհին ելաւ, նստեց: Երեսի գոյնը սկսեց գտլ, զգեստների դիրքն ուղղեց, վերարկուով ծածկուեց և ձեռով նշան արեց, որ պատուհանը փակի և իրան ջուր տայ: Փոթորիկն անցաւ. իշխանուհին նրատած էր բազմոցի վրայ, Յովնանը յանցաւորի պէս ծունկ չոքած նայում էր հեռուից: — Մօտ եկ, Յովնան, խօսեց Վասկանուշը դողդոջուն ձայնով: Լեռնցին որ հագիւ էր համարձակուում նրան նայել, եկաւ ոտների առաջ չոքեց. «Խօսիր Յովնան, այսքան երկար տարիք, որ մենք իրարից բաժանուած էինք, ինչ արիր, պատմի՛ր տեսնեմ»: — Ի՞նչ պատմիմ, տիրուհի, քսանեօթ տարի է, փոքր ժամանակ չէ: Ախ, որքան կարձ էին այն անգին օրերը և որքան երկար այս տարիները: Մեղքը խոստովանում եմ, մեծ յանցանք գործեցի, որ ողորմելի տեղովս քեզ պէս աննման հրեշտակի վրայ աչք բարձրացրի և յանդգնեցի աչքերս ոտներիդ քսել: Բայց միթէ կարելի էր քեզ տեսնել, ճամփաչել ու ըստիրել: Գոհ էի վիքեղ տեսնել, երբ անխօս քեզ պաշտում էի, երբ Բաղակիցս,

բատունեաց պալատից հեռանալով ձայնդ լսում,
երեսդ տեսնում, զղանցիդ ասուերը նշմարում էի.
իմ լեռների զլիին այդ յիշատակներով լիացած
կարծում էի թէ մարդկանց ամենաերջանիկը ես
եմ: Բայց չափից վեր բարձրանալս դուք չեկաւ
Աստծուն, ինձ խստապէս պատժեց: Երբ մտա-
ծում էի, որ դու իմ պատճառով բանարկուած
ես, չէի կարողանում ինձ ներեւ կամ աչքիդ ե-
րկալ: — Յովնան, միթէ դու գիտէիր իմ այստեղ
լինելը: — Առաջին տասը տարին չէի իսանում: Ամ-
բողջ երկու տարի գողի նման ողջ Հայաստանը
պատեցի, որ քո մասին լուր իմանամ, չեղաւ:
Յոյս կտրած գնացի Յունաստան, զինուոր դար-
ձայ, տեսայ որ օտար հողը ինձ համ չի տալիս,
վերադարձայ Տարօն: Մեր լեռնցիք խնդրեցին որ
գնամ Բագրատ իշխանի մօտ Սասունի գործերը
կարդի զնելու: Այնտեղ պատահմամբ իմացայ, որ
իշխանուհի Արտանուշի վանքումն է: — Հապա մի
անգամ մտքովդ չանցկացաւ, որ ինձ տեսնելու
գայիր: — Ճշմարիտ ասեմ, ամենայն տարի գալիս
էի Ճորոխի դիմացի ափը, թփերի մէջ օրերով
սպասում էի մինչև դու աչքովս էիր ընկնում.
ծունկ էի չոքում ու Աստծուց խնդրում, որ տի-
րուհուս երջանիկ պահի: Փափագում էի ձայնդ
լւել, երբ մենակ ճեմում էիր, բայց անիրաւ
Ճորոխը իւր շառաչներով խանգարում էր: Հե-
ռուից քեզ տեսնելով միխթարուած դառնում էի
Սասուն: Այս ամառ միայն չկարողացայ գալ: —

«Վերկաց Յովնան և մօտս նստիր, նայիր թէ բնչ
եմ ասելու»: — Այս դիրքի մէջ աւելի երջանիկ
եմ: յաւիտենականութիւնը արքայութիւն կըդառ-
նար ինձ համար, եթէ կարողանայի միշտ այսպէս
ուներիդ առաջ մնար: — Յովնան, ես հրամայում
եմ, դու չես լսում, ասեց Վասկանուշը քաղցրու-
թիւնով ու նրա ձեռից բռնելով նստացրեց մօտը.
Ես չեմ ուզում որ աշխարհի յիմար կարգերը Աս-
տծու, բնութեան օրէնքներից վեր դասես: Ես
քեզ սիրել եմ, դարձեալ սիրում եմ և յաւիտեան
պէտք է սիրեմ: Քեզանից գոհ եմ, քու գործո-
դութիւնները, մանաւանդ վերջինները ինձ միառ-
մի յայտնի են, միայն չգիտէի թէ թփերի միջից
ինձ գիտել ես: Քեզանով կարող էի երջանիկ լի-
նել աշխարհի վրայ, բայց ծնողների գոռոզու-
թիւնն ինձ գոհեց: Ազնուատոհմութիւնը արհամար-
հական աչքով էր նայում ուամկի վրայ, կարծում
էր թէ այդ անսարդարաբն իւր հաճոյքի համար
է ստեղծուած: Ահա դրա պատիմն է որ քաշում
է, գերութեան շղթաների համը ճաշակում է: Իմ
վանքի գոները յետոյ բացուեցին առաջս, կարող
էի գնալ ծիրանի ու բենեզ հագնել, բայց չուզե-
ցի. գիտէի որ Յովնանը ինձ սիրում է, ես և Ն
նրան էի սիրում: Այստեղից հանելով ինձ այն-
պէս մարդի ձեռ պէտք է զցէին, որ ոչ սիրու-
ներ, ոչ զգացմունք: Ո՞վ կայ նախարարների մէջ,
որ մոլութեանց մէջ թաթախուած չլինի: Բուզան
նրանց գոները ծեծում էր, իսկ նրանք խլացած

Եին արբեցողութեամբ ու անտառկ կեանքով։
Սյժմ արևելեան ու հիւսիսային Հայաստանին է
վտանգ սպառնում, ամենն էլ ապուշի պէս քնած
են։ Աւելի լաւ համարեցի, Յովնան, կեանքիս
մնացրդը վանքի մէջ Աստծու հետ անցկացնել,
քան թէ գնալ անիրաւութիւններին մասնակցել։
Լուհամարեցի սիրել քեզ նման առանց որ և է յոյսի,
քան թէ ս'ըլ բարձրութիւնից նիւթականութեան
իջեցնել»։ Վասկանուշի քնքոյշ ձեռը Յովնանի
ափի մէջ էր, տեղից շարժուեց, վեր կացաւ։ Յով-
նան այս շարժմունքը հրաժարականի նշան ըն-
դունեց։ Իշխանուհին ծիծաղելով հանգստացրեց
նրան։ «Յովնան, դեռ գնալու ժամանակ չէ, այ-
սօր քեզ հետ մէկտեղ պէտք է ճաշեմ, աշխար-
հից ու նրա հաճոյքներից իսպան հրաժարուած
եմ եղել. ուզում եմ մի անգամ այդ զուարձու-
թիւնն ունենալ»։ Այս ասելով ձեռից բռնեց ու
մնյայտ դոնով մի փոքր սենեակ տարաւ, ուր
դրուած էին մի անպաճոյն սեղան և երկու ա-
թոռ։ Իշխանուհին նստեց, Յովնանն էլ նստեց
հանգանդելով նրա ակնարկին։ Վասկանուշը զինու-
բաժակը լցրեց և Յովնանին դառնալով տաեց։
«Աստուած մեզ յաւիտենական կեանքի հարսա-
նչքին արժանի անի», մի քանի կաթիլ խմելով
տուեց նրան։ Նա առաւ բաժակն ու քամեց մինչև
վերջին շիթը։ Վասկանուշը նայեց ու հարցրեց։
«Յովնան, ի՞նչքան ժամանակ է, որ բերանդ զինի
չես դրել»։ — Քսանեօթ տարի, տիրուհի։ — Խեղճ

Յովնան, ամեն բանից ինքով քեզ զրկել էիր։ — Իմ
զրկանքը ոչինչ էր, երբ մտաքերում էի, թէ Բագ-
րատունեաց օրիորդը իմ պատճառով դատապար-
տուած է. ինձու լեռնցու համար ջուրն ու զի-
նին միւնոյն էին։ Բայց դու ինչից իմացար,
տիրուհի, որ ես զինի չեմ խմում։ — «Առաջուց
գիտէի, անցեալ երեկոյ էլ երբ իշխանների հետ
ընթրում էիր, դոնից դիտում էի քեզ ու բոլոր
շարժումներգ»։ Յովնանը թէկ մի բաժակ խմեց.
Բայց որովհետև Վասկանուշի շրթունքներին զի-
պած էր, գրանով զուարթութիւն ու համարձա-
կութիւն ստացաւ, նրա աչքերն իրանց բնական
փայն առան։ հզօր պղընձ! մարդը կնոջ զիւթիչ
զօրութիւնից մոմի պէս կակղեց, առիւծը գառան
պէս խեղճացաւ։ Սյժմ ծիծաղը նրա դէմքի վրայ
այլ ևս հեգնութիւն չէր, այլ սրտի կերպարանքը։
Երկար տեսեց ճաշը. երկումն էլ այնքան տարի-
ների մէջ զզացածները, արածներն իրար պատ-
մեցին։ Նրանց երեսների վրայ երբեմն ծիծաղ էր
փայլում, երբեմն արտասուզ, մինչեւ որ Վասկա-
նուշը լուրջ կերպարանք առնելով սեղանից վեր
կացաւ. բաժանուելու ժամը հասել էր։ Երբ ըն-
դարձակ սենեակը մտան, Վասկանուշը հարցրեց.
«Յովնան, գո՞ն իմ հիւրընկալութիւնից»։ —
Մինչեւ երկինք, տիրուհի։ — «Յանկանում եմ որ
այսօրուան ուըախութիւնը պահես, մինչեւ իրար
տեսնենք այստեղ կամ այստեղ, այս ասելով իշ-
խանուհին մատով երկիր ու երկինք ցոյց տուեց։

— Տիրուհի, քու խօսքը կամ ակնարկը սուրբ է ինձ համար, կը պահեմ: — «Դէ Աստուած լինի հետդ, իմ սիրելի Յովնան»: Չեռը մնենեց դէպի նա: Յովնանը ծունկ չոքեց իսկոյն, համբոյրներով ծածկեց ձեռը: Իշխանուհին թեքուեց, իւր ձեռների մէջ առաւ նրա առիւծ զլուխը և ճակատի վրայ մի համբոյր գրոշմեց: Յովնանին այդտեղ թողներով գնաց դէպի փոքր սենեակի դուռը և այս վերջին խօսքերն արտասանեց. «Վաղ առաւօտ վերջին անդամ կըտեսնես ինձ պարսպի վրայ»: Այս ասելով գուռը փակեց ու անհետացաւ: Յովնանը վեր կացաւ, ուրախութեան արտասուքները սրբելով առաւ դէնքերը ու թեթեացած ոտներով գնաց իւր զինուողների մօտ: Ամենը նկատում էին, որ նրա ճակատը ազատուած է կնճիռներից: Հետեեալ առաւօտ Վասկանուշը բարձրացաւ վանքի պարսպի զլուխը, ձորոխի հանդէպի կողմը նշմարեց մի մարդ ծնկաչոք սպասելիս. իրան տեսնելուն պէս կոները տարածեց: Երկու պատյա արեց իշխանուհին պարսպի վրայ, զլիսվ ողջոյն տուեց դէպի ներքե և քաշուեց վանքը:

ԺԹ

Արսի շրջակայքում արաբացու հետք չ' բնացել, Յովնանն իւր սասունցիների հետ Թորթում գնալ էր ուզում: Արտանուշ փոքրիկ դաւառի երախտագէտ ժողովուրդը երկար տեղ ուղեկցում էր ու օրհնում նրա ճանապարհը:

Գուրգէնն իւր քաջ ընկերներով յոյն իշխանին ջարդել էր ու կրկին իւր բերդին աիրացել: Նստած խօսում էին Աշոտը, Խոսրովը և միւսները: — Աստուած էլ գիտէ, որ չեմ սիրում մարդուց մի կաթիլ արիւն թափել, ասեց Գուրգէնը, բայց զինուորութիւնը շատ անիծեալ արհեստ է: Բացի այդ այնպիսի ժամանակում ենք ապրում, որ կատարեալ գթութիւն ունենալ անկարելի է: Եթէ մտածում եմ շուրջս տեսածների մասին, մարմինա քստմընում է: Այսպէս ժամանակ կը լինի, ներսից ու զրայից հայ երկիրը աւագակութիւնով, ապերախտութիւնով, գաւաճանութիւնով, մատնութիւնով պատած է: Աստուած ինքը մի ողորմութիւն անի մեր ժողովրդին: — Մեր երկրի գժբախտութիւնն այնտեղ է, որ ոչ մի տեղից յոյսի նշոյլ չունի, ասեց Խոսրովը: — Խեղճ Յովնան, վրայ բերեց Գուրգէնը, բոլոր յոյոը զրել էր կաթողիկոսի վրայ: — Ճիշտ է, ասեց Աշոտը, ես այնտեղ էի, որ եկաւ տաեանին այդ առաջարկըն արեց և խեղճին բանտ ուղարկեցին, որպէս զի Գարզմանայ իշխանի սիրալ գոհացնեն: — Ա՝ ի, յուզուեց Գուրգէնը, ամենն էլ անպիտան են, կաթողիկոնն էլ, իշխաններն էլ, նախարարներն էլ: Աստուած ահազին Հայաստանի մէջ մի Յովնան է ստեղծել և այն էլ Սասունի լեռան զրլիին զրել: — Շատ ճշմարիտ է, ասեց Խոսրովը: — Դու ինչո՞վ ես պակաս նրանից, Գուրգէն, հարցրեց իշխանիկը, նա քու չափ ուժով չէ: —

Մեր զանագանութիւնն այնէ, որ ես սրտիս ձայնին եմ լսում, իսկ նա իւր մտքին է հնագանդում: Այդ քչախօս մարդը մեզ բոլորիս հիմնալի ճանաշում է, մենք պատիկ մարդիկ ենք: Հեռու չը գնամ, հէնց ինձ վրայ խօսեմ: Երբ իմացայ որ Վասպուրականը, Արծրունիք վտանգի մէջ են, ես ժամանակ ունէի, կարող էի օգնել: արիւնս եռ էր գալիս, պատերազմի ծարաւ էի: Սիրտս եփ էր գալիս լսելով անօրէն արարների տուած նեղութիւնները հայ ժողովրդին: Զնայած այս ամենին ես Բագրեանդից չը շարժուեցի և չը գնացի: ինչու, որովհետեւ չնչին հաշիւներն էին ինձ կառավարողը: Իսկ Յովեանը լուր համոզուած լինելով, որ հայ նախարարները մոլի, անոտեաք, փառասէր մարդիկ են, թողեց ապահով կեանքը ու լեռներից իջնելով իւր փոքրիկ զնդի հետ օգնութիւն գնաց Արծրունիներին: և ես հաւատացած եմ, եթէ նա ժամանակին համնէր, Վասպուրականը այդ վիճակի մէջ չէր ընկնիլ և Աշոտը չէր մատնուիլ: Յովեանը դաւաճանութիւնն անպատճու կիմանար և իսկոյն կայծակնահար կանէր մատնիչներին: Ահա թէ, ինչ աւարերութիւն կայ իմ և Յովեանի մէջ: Ես, դու, Խոսրովը, Աշոտը զուարճութեան, վրիմառութեան, իշխանական անուան վրայ ենք մտածում, իսկ Յովեանը բոլոր ազգի վիճակի վրայ է խորհում, նրա թըշուառութեան համար ճար ու հնար է փնտրում: Այդ նպատակի համար է, որ ես տեսայ նրան ազ-

դի հոգեսոր զլիսի մօտ ոտով գնալիս: — Տեսնենք, այժմ ում կաթողիկոս կը գնեն, խօսեց Աշոտը: — ի՞նչ, մի՞թէ կաթողիկոսը վախճանուել է: — Այս: — Շատ լաւ բան է արել որ Հայել է, ասեց Գուրգէնը, ովք զիտէ, գուցէ պատահմանը նրանից լաւը տեղը գնեն: — Դու խօսքով շարունակիր, Գուրգէն, ասեց Խոսրովը: — Հա, ուզում էի ասել, թէ այդ լեռնցին վեր է ու բարձր բոլոր քաղաքացիներից, աղնուականներից, իշխաններից, կաթողիկոսներից: — Շատ ճշմարիտ է, ես էլ այդ պէս եմ ճանաչում դրան, յարեց Խոսրովը: — Ես նրան հրաւիրեցի, որ գայ թորթում, բայց այդ խստակեաց մարդու համար ի՞նչ է աշխարհային պատիւը, զրա վրայ ոչ համադամ կերակուրներն ազգեցութիւն ունեն, ոչ նուազարանները. ամեն զուարճութեան մէջ անփոփոխ ու միենոյն մարդն է: — Գուրգէն, սխալուում ես, ասեց Խոսրովը, երեք դաւաճաններին կախազան բարձրացնելիս միթէ զուարճութիւն չզգաց Յովեանը, Երբ տեսաւ իւր աշխատանքը պսակուած:

ի

Փարուն էր, ամեն բան ծիծաղում էր շուրջ բոլոր բայց Հայաստանը գարձեալ լալիս էր: Թըշնամին Գուին մայրաքաղաքը շինել էր որչ, պատրաստում էր յարձակուելու հիւսիս-արևելքի վրայ, մի թիզ հող չէր թողելու արիւնից արցունքից ցամաք: Ոչ երկրագործը սիրտ ունէր իւր աշխա-

տանքն սկսելու, ոչ վաճառականն իւր կարաւա-
նը հեռու տեղ ուղարկելու: Ամեն սիրտ ահ ու
դողի մէջ էր, ամեն մինը փոթորկի փրթելուն էր
սպասում: Թէպէտ այս արհաւիրքն ամբողջ եր-
կիրն էր քաշում, բայց ամենից շատ մի մարդ էր
զգում, ամեն բան տեսնում, ամեն բան խմանում,
երկրի որ կողմն էլ պատահած լինէր. նա զգում
էր նոյնպէս, որ մի սոսկալի պատասխանառու-
թիւն է ծանրացած իւր վրայ: Այս մարդը Ամբատ
սպարապետն էր, քաջ ու խելօք պատերազմի մէջ,
սրտացաւ եղբայրների ու ազգի համար, վախե-
ցող անիրաւութիւնից: Բայց սարսափով նկատում
էր, որ իւր բռնած ճանապարհն իրան անդունդն
է տանում: Ինքն ստեղծուած էր օտար լծի դէմ
կռուելու, յանկարծ տեսնում էր իրան Բուղայի
ձեռի մէջ, անիրաւութեան, մատանութեան զոր-
ծիք լինելու դատապարտուած: Լուսմ էր, որ հայ
իշխանների մեծ մասը բերգից ու մահից ազա-
տուելու համար հաւատն ուրանում էին իւր եղ-
բայր Բագրատի պէս: Լուր էր առնում, որ պա-
կասած զօրքի տեղ Բուղայի համար Ասորեստա-
նից նոր օգնութիւն է գալիս: Աշոտի զերութիւ-
նից ետք հազիւ էր սկսել Վասպուրականի հայ
ժողովրդի լուծը քաղցրացնել ու արաք բռնա-
ւորների յափշտակութիւնները սանձահարել, յան-
կարծ նամակ է ստանում որդուց. որ կաթողի-
կոսը մեռել է և Բուղան իրան կանչում է: Մա-
հուան երկիւղը հազար անգամ նրան սիրելի էր,

քան այդ բռնաւորի երեսը տեսնելը: Բայց յոյս
ունենալով, որ հայրենիքի ցաւերն աւելի հնագան-
դութեամբ կարող է մեղմացնել քան տպատամբու-
թեամբ, յորդորեց ժողովրդին որ համբերի, ինքն
ելաւ գնաց Երազգաւորս, ուր առաջուց պատուէր
էր ուղարկել Աշոտ որդուն, որ կաթողիկոս ընտ-
րելու համար հայ եպիսկոպոսներին ու իշխան-
ներին ժողովի: Դանդաղ շարժուելու ժամանակ
չէր. ամենը շտապել էին եկել: Երկիրը ձանձրա-
ցած լինելով անտարբեր հայրապետներից, որոնք
միայն իրանց հանգստութեան վրայ էին մտա-
ծում, ժողովրդականները միաբան ընարեցին Զա-
քարեայ անունով մի աշխարհական մարդու, որի
առաքինութիւնն ու անձնութացութիւնը բոլորին
յայտնի էր: Մի օրուայ մէջ Զաքարիային ձեռ-
նադրեցին սարկաւադ, քահանայ, եպիսկոպոս և
կաթողիկոս: Բայց ինչքան էլ մի կաթողիկոս
բարի կամք ունենար, ինչ կարող էր գալ նրա
ձեռքից, երբ թշնամին բնակւում էր հայ երկրի
կենդրուում հարիւր հազար զօրքով և զեռ օգնու-
թիւն էր սպասում ամիրապետի կողմից: Հայրա-
պետ ու սպարապետ իրար հետ երկար խորհր-
դակցեցին ու վերջն եկան այն որոշման, որ յայտ-
նի ընդդիմութիւն ցոյց տալը ապարդիւն է. մի-
ակ ճանապարհն է թշնամու հետ խոհեմութեամբ
վարուել և նրա չորութիւնը մեղմացնել: Ելաւ
վարուել կ նրա չորութիւնը մեղմացնել: Ելաւ

որ այնտեղ էին գտնւում ոստիկանների պալատ-ները, կաթողիկոսարանը և մայր եկեղեցին։ Սըմ-քատ սպարապետն իջաւ ոստիկանի պալատում։ Բուղան խոչոր գլխանի, մանր աչքերաւոր, ցանցառ և կարմիր միքուքով թուրք էր. Սմբատին տեսնելիս իւր դաժան երեսի վրայ ծիծաղ բերեց, կանգնելու շարժմունք արեց, բայց չը բարձրացաւ։ Երբ Արծրունի իշխանը նրա ձեռը չէր մատուած, մուսուլմաննին ներելի էր քաղաքավարութեան համար մի անհաւատի առաջ կանգնել, իսկ այժմ Հայաստանի կէսն իրանն էր, միւս կէսն էլ նուաճելու բաւական զօրք ունէր։ Ակաց նրա հաւատարմութիւնը զովել. «Ես միշտ քու մասին գովասանքով եմ զրել ամիրապետին. տես, դու պէտք է ինձ օգնես մինչև Հայաստանն ամբողջովին նուաճուի։ Նրանից ետք յարձակուելու եմ Տփիսի վրայ. հոգս չէ որ այնտեղի իշխանը մուսուլման է։ Ի՞նչ ես կարծում, սպարապետ, նա զօրեղ է։ կարող է՝ ինձ ընդիմանալ»։ Սատանայի խորամանկութիւնով կովկասեան ազգերի մասին հարցմունքները վերջացնելուց ետ խօսքը բերեց Արցախի, Սիւնեաց, Գարդմանաց և Աղուանից իշխանների վրայ։ Սմբատը յուղում էր ներքուսա, բայց խղճի տագնապը զսպելով բոլոր հարցմունքներին ակամայ պատասխանեց, իմանալով հանդերձ, որ իւր արածը մատնութիւն էր։ Նրան թուում էր թէ դահլիճի դռան մօտ Վասակը, Մեհրութանը և նրանց նմանները կանգնած իւր վը-

րայ ծիծաղում են։ Սմբատն իւր անարժան պաշտօնը կատարելով բոնաւորին հրաժարական ողջոյն տուեց ու գնաց գէպի իւր բնակարանը։ Յուրա քրտինք էր գալիս վրէն, երբ մտածում էր որ վինքն իւր ազգի բարին ցանկանալով դառել է դաւաճանութեան առաջին գործիքը։ Թիկնապահներով շրջապատուած այդ մտատանջութեան մէջ հասել էր իւր օթևանի դուռը. զեռձիուց չէր իշել, իւր զինուորների մէջ յանկարծ մի կերպարանք նշմարուեց, որ իրան մի ակնթարթում քարցըց, արձան շինեց։ — Սա Յովսանի գէմքն է, բայց որտեղից բաւ, մի վարկեան առաջ մտքիս մէջ աեսնում էի, թէ ինչպէս էր նա դատապարտութեան վճիռ տալիս, որ ես Յուղայի մօտ չը գամ։ Բայց, ամենական Աստուած, ինչպէս կարող է սա Յովսանը լինի, ինչպէս կը համարձակւէր նա Դուին մտնել։ Հրաշք հօ չէ։ Ո՛չ, իսկ նաէ, ահա նրա սլաքային տչքերը, որ անփոռի նայում ճն ինձ։ Զինք թէ լսած լինի Յուղայի հետոնեցած խօսակցութիւնս։

Սպարապետը խղճի զօրաւոր ձայնից այսպէս վախեցած ձեռը կը քին դրեց, անձայն ողջոյն տուեց նրան ու ակնարկ արեց, որ իրան հետիի։ Երբ երկուսն էլ առանձին սենեակին մէջ էին, Սմբատը նրան ասեց. — Յովսան, պատմիր ինձ տեսնեմ, ինչո՞ւ համար ես եկել այս կաղմերը, մանաւանդ ինչ զործ ունես այս քաղաքումքը։ Չըլինի թէ դարձեալ մատնիներ ունես պատժե-

լու և ինձամից ես սկսում: — Քաւ լիցի, հայոց սպարապեա, քու մասին մտքումս այդպէս քան չեմ անցկացնիլ, քեզ լաւ եմ ճանաչում: Դու կարող ես մոլորուել, Հայաստանը քեզ հետ մոլորեցնել, բայց գաւաճանել չես կարող, որովհետեւ Քրիստոսին ուրանալ, ազգդ ոտի տակ տալ չես կարող: — Ի՞նչից գիտես, որ այդպէս ես խօսում: — Ամեն մի մարդու գատում են իւր անցեալով: Քու ժողովը վից շատերին թէ Մոկաց երկրում և թէ Շիրակայ գաւառում հարցրել եմ, նրանք իրանց երջանի էին զգում: Աշոտի գերութիւնից զկնի թէ ի՞նչ արիր Վասպուրականի անտանելի վիճակը մեղմացնելու համար, այդ նայնպէս տեսայ: — Ուրեմն լաւ էիր ճանաչել Վահունի Մուշեղին և իւր ընկերներին: — Միթէ կասկածում ես, միթէ ես Յովնանս լոկ չարագործ դահիճ էի, որ առանց ապացոյց ունենալու նրանց կախաղան հանէի: — Ի՞նչն էր այդ մարդկանց յանցանքը: — Իրանց տիրոջ մատնելով դաւաճանեցին իրանց ազգին և պատճառ եղան անշափ անմեղ արիւն թափուելու: — Իրաւունք ունես, Յովնան, ասեց ծեր սպարապեաը և զլուխը խոնարհեցնելով աչքերը փակ երկար լսեց: Յետոյ զլուխը բարձրացնելով վրդովուած խօսեց: — Այս, Յովնան, դու միայն իրաւունք ունես, ես և Բագարանի ժողովի բոլոր մասնակցողները անսպիտան և անարդ գաւաճաններ դարձանք. ազգը մեզ ամենիս իր սւունքը ունի կախելու, որովհետեւ

մենք օրբստ օրէ կործանեցինք նրան: Եթէ մենք քու խորհրդին հետեւէինք, զուցէ շատ խաղաղ վիճակի մէջ չլինէինք, բայց երբէք էլ այսպէս նուաստ չէինք լինիլ, այսպիսի գաղանի ձեռին խաղալիք չէինք դառնալ: Այս, դու էիր այն միակ մարդը, որ աչք ունեցալ վաճանգը տեսնելու: Ինչո՞ւ Աստուած քեզ լեռների գլխին դրեց և ինձ նախարարական զահի վրայ. զրան ես չէի արժան, այլ գու: — Եթէ ընդունում ես, որ սիալ ձամբի վրայ ես, ի՞նչն է քեզ արգելում սթափուելու ետ դառնալ: Ես խեղճ սասունցիս խոստանում եմ քսան հազար երկաթէ մարդ իջեցնել մեր լեռներից, ինչքան էլ Վասպուրականը ունակուս լինի, քսան հազար յուսահատ մարդ էլ նա կարող է տալ. մի՞թէ քու Մոկաց ու Շիրակայ գաւառները չեն կարող քսան հազար մարդ պատրաստել: Եթէ քառասուն հազար էլ միւս նախարարական տները բերեն, մենք հարիւր հազար զօրքով բուղայի երկու հարիւր հազար հրոսակներին ընաջինջ կանենք: Մանաւանդ որ այժմ մի առաքինի կաթողիկոս ունենք, որ յանձն կառնի առաքինի ազգի համար զոհել, նրան անձամբ ճակեանքն ապահովութեան և ծառաչում եմ: — Ո՞րտեղից ես ճանաչում: — Երբ հօրեղբօրդ բանդից փախած անօդնական թափառում էի, այդ Զաքարեան ինձ իւր տանը մի ամսի չափ պահեց: Նատ ուրախացայ, երբ լսեցի որ մի չափ պահեց կողունակը ու իշխանները փնտուելով հայ եպիսկոպոսները ու իշխանները գիտուելով այդպէս արժանաւորին ընտրեցին Գրիգոր Լուսա-

ւորչի աթոռի համար։ Որպէս զի մենք մեր խօսքից շատ չը հետանանք, հայոց սպարապետ, ասում եմ, որ դու կարող ես երկրորդ վարդան լինել Հայաստանի համար։ Վարդան աւելի խելօք, աւելի հանդարտ։ Ես սրտով կուզէի մոլի և անպատիւ նախարարների գլուխն ու զահը կործանել, նախարարութիւն կոչուած բազմազիսեան վիշապը ջնջել, որ հայ երկիրը ունենայ մի գլուխ, մի ժողովուրդ, մի հօտ և մի հովիւ։ Միթէ մեր քոլոր թշուառութիւնների պատճառը անիշխանութիւնը չէ, որին միամիտ կերպով անմիաբանութիւնը են ասում։ Այժմ ասա ինձ, ուզմամ ես ազգի փրկիչն ու զլուխը լինել։ Եթէ համաձայն ես, երկու գեղեցիկ ճանապարհ կայ առաջդ, եթէ մեռնես՝ երկնքի թագաւորութիւնը կստանաս, իսկ եթէ ապրես, երկրիս թագաւորութիւն։ — Անցեալ տարի պէտք է հետեւած լինէի խորհրդիդ, այս տարի ուշ է, Յովինան, ասեց սպարապետը։ — Եկող տարի, երբ այս աշխարհը թողած կը լինեմ, վախենում եմ ետնից ասես, «ափսրս, հարկաւոր էր այն մարդու խօսքին լսել»։ — Այդ խօսքով ինչ ես ուզում ասել։ — Միթէ պարզ չէ. մահմեղականները մի ամառուայ մէջ Հայաստանի կէսը ուժնատակ տուին. չե՞ս նկատում որ միւս կէսն էլ նոյն վիճակին պիտի ենթարկուի, եթէ դիմադրութիւն ըլլինի։ Նրանից ետք ստրուկ հայը պէտք է իւր բարբարոս պետից ողորմութիւն խնդրէ թշուառ կեանքը զերութեան մէջ շարունակելու։ —

Յովինան, դու չես իմանում մեր զրութիւնը, նախարարներին չես ճանաչում։ Եթէ ես վաղը ուսքի կանգնեմ թշնամու դէմ, նրանք կը միանան Բուզայի հետ. որ ինձ ջարդեն։ — Երեխ այնպէս, ինչպէս դու միաբանուում ես Բուզայի հետ նըրանց ջարդելու համար, ասեց Յովինը վրդովուած և շարժուեց դէպի դուռը։ — Սպասիր, ուր ես գընում, ասեց սպարապետը։ — Ի՞նչ սպասեմ, երբ իմ առաջարկութիւնը ընդունելու չափ քաջութիւն չունես։ — Ասա խնդրեմ, ի՞նչքան ժամանակ է, որ այս միաբը ըստ մէջ յշացել է։ — Համարեաթէ մի ամիս։ — Հապա ի՞նչպէս ես պահանջում, որ մի վայրկեանի մէջ առանց մտածելու այդպիսի ծանր սրոշում ընդունեմ։ — Հէնց այդ պատճառով իմ այստեղ մնալս անօգուտ եմ համարում։ Խնդր քեզ ու քեզ վազուց պէտք է մտածած լինիր այս բանի վրայ։ Մի ուշացնիր, ով զիտէ, մի ժամից ետ ամեն ինչ անօգուտ կը լինի, զուցէ այժմ էլ շատ ուշացել ենք, հայոց սպարապետ։

իԱ.

Այս խօսքերն ասելիս մեծ զգուշութիւնով ականջ զրեց ձիերի ուսնածայնին. կամաց պատուհանին մօտեցաւ, սուր աչքերը լարեց ու ասեց. — այստեղ տրաբ ձիաւորներ են կանգնած, ինձ համար պէտք է եկած լինին։ — Ի՞նչ ես ասում, ինչից ես իմանում։ — «Ես միքանի կասկածելի մարդիկ տեսայ, որ ինձ դիտում էին, երբ

քեզ սպասում էի: Անշուշտ Բուղային խմաց են
տուելու: Սմբատը կարծես վրդովուելով գոչեց—
բայց ով կը համարձակուի իմ տունը մտ... .

— Սմբատ սպարապետ, Մոկաց երկրում քո
տանը չես, այլ Բուղայի ձեռի մէջ: — Այժմ ու-
րեմն ի՞նչ ես անելու, հարցրեց Սմբատը այլայ-
լուած: — Փախչելու համար ես ճանապարհ ունեմ,
միայն ափսոս, որ դու իմ ուզած մարդը չես: Ու-
զում էի քեզ Սմբատների առաջինը դարձնել, աւել-
լի մեծացնել քան Բիւրատեանն էր, աւելի վեհաց-
նել քան Վարդան Մամիկոնեանն էր, բայց դու
չը կամեցար, վայ Հայտանին:

Այս խօսքերն ասելով շտապ վերցրեց իւր
կաշէ վահանն ու նիզակը և դուրս թռաւ. տանի-
քը տանող մի դուռ բաց արեց և ամենայն արա-
գութիւնով կտուրից կտուր թռչկոտելով անհե-
տացաւ: Սմբատն ազնիւ սրաի տէր էր, խիստ
յուզուեց երբ արաբական խմբի գլխաւորը նրան
ներկայացաւ ու յայտնելով որ նրա տան մէջ կառ-
կածելի թշնամի կայ պահուած, խնդրեց թոյլ
տալ խուզարկելու: Փնտրեցին ամեն կողմը, մարդ
չը գտնելով ելան գնացին: Սմբատն սկսեց խո-
րապէս զգալ իւր վիճակի թշուառութիւնը. «Ես
խաղալիք եմ դարձել արիւնաբրու գազանի ձե-
ռին, միակ վրկութեան ճանապարհը այդ լեռնա-
կանի ցոյց տուածն է»: Ա՛յս, ինչ երանելի, բա-
րեբախտ մարդ է Յովնանը, խիդը մաքուր է, ոչ
մարդկանցից երկիւղ ունի, ոչ Աստծու դատաս+

տանից: Աստուած նըան ուղարկել էր, որ գայ ինձ
այս անարդ գրութիւնից ազատի, ես տիսմար
կտրուելով յանձն չառայ: Ի՞նչ փառաւոր առա-
ջարկութիւն էր—ազատուել և ազատել Հայաւ-
տանը կամ մեռնել Վարդանի նման, իսկ ես Մեհ-
րուժանին նմանուեցի: Այսօր Բուղային մատնե-
ցի այն մարդկանց, որոնք անցեալ տարի հետո
խորհրդածում էին, թէ ի՞նչպէս պէտք էկուուել ազգի
ու հաւատի թշնամիների դէմ: Ա՛յս, ուր էր թէ ետ
դառնար Յովնանը, այժմ ինչ որ հրամայէր, ես
նրան կուրօրէն կը հնազանդուէի: Նա երկու
հարիւր հազար հոգու սոսկալի զօրավարին բանի
տեղ չը դնելով մենակ Դուին է մանում, ես ո-
զորմելի սպարապետ չեմ ուզում նրան հետեւել:

Սմբատն այսպէս ինքն իրան խօսում և հա-
ռաջում էր, երբ յանկարծ դուրսը խազն ի խուռ
աղաղակ լսուեց, շտապով պատուհանին մօտեցաւ,
տեսաւ արաբ զինուորների մեծ խումբ մի գլխաբաց
մարդու ոտ ու ձեռից բռնած տանում են. ով ա-
սես բռնում քաշըշում էր այդ մարդին և շարու-
նակ ուրախ ձիչեր արձակում նրան կալանաւորե-
լու առիթով: Մարդը զինաթափ էր և արիւն-
լուայ. դա Յովնանն էր, որ դեռ աներկիւղի պէս
աչքերը շրջում էր ամբոխի վրայ: Ահա Բուղայի
թիկնապահները հասան, խասնազան զինուորնե-
րին հեռացրին, կալանաւորին խլելով կատաղի տմ-
բոխի ձեռից, տարան սստիկանի պալատը: Աըմ-
բոխի պատուհանից ետ քաշուելով ձեռը յուսա-

հատաբար ճակատին խփեց ու ասեց, «Ամօթ ինձ, նրա կորստեան պատճառը ես եմ. անոնս հայոց սպարապետ է ու չեմ կարողանում նրան ազատել: Այդ այդ մարդը, ինձնից բախտաւոր է:» Բայց Յովնանն ի՞նչպէս բռնուեց: Նա տանիքից տանիք ցատկելով, ցածր ու բարձր անելով բաւական տեղ գնացել էր. վերջը համնելով անկիւնի տունը իւր նիզակի վրայ յենուած պայտա արաւ ու իջաւ փողոց: Այդ միջոցին տեսաւ իւր դիմաց մի խումբ հեծելազօր է գալիս: Ի՞նչ անէր, մնում էր ետ դառնալ ու խոյս տալ: Բայց դեռ մի քանի ըայլ չարած, նկատեց գիմացից մի խումբ արաբացիներ: Յովնանը դիտէր, որ մնացել է երկու սրի մէջ, բայց ետ չդարձաւ, իւր ճանապարհը շարունակեց: Արաբացի խումբը առաջ ուշադրութիւն չգարձեց նրա վրայ, բայց վերջը մէկը, որ Յովնանին տեսել էր Շիրակի դաշտում ու կռան ուժը փորձել, ճանաշեց ու սարսափած ետ քաշուելով աղաղակեց. «Ոհա մեր թշնամիների գլուխը: Այս աղաղակի վրայ հարիւրաւոր թրեր մերկացած թափուեցին Յովնանի վրայ: Յովնանը կաշէ վահանով իրան պաշտպանելով սուրը ձեռին յարձակուեց դիմացը կանգնողների վրայ, որ ճանապարհ բաց անի: Աջ ու ձախ կոտորելով անվեհեր առաջ էր գնում. ահա սուրը խորտակուեց: Արաբացի գլխաւորը, որ մինչև այդ ժամանակ գոյցը կիտում էր, առաջ վագեց ու ձեռի մուրճը Յովնանի գլխին իջեցնելով

սաղաւարդը ջախջախեց և իրան գետնին տարածեց: Յովնանի սրի առջեկից վախածները նորից գարձան որ ընկած թշնամուն սպանեն, բայց խմբի գլխաւորը սպանում էր մուրճով որ մօտ չըգան, որովհետեւ արդէն տեղեկացել էր, թէ ով սրան ողջ առողջ Բուղայի առաջ հասցնի, մեծ ընծայ կըստանայ: Հէնց դա մաքառում էր ամբոխի հետ, երբ Բուղայի թիկնապահները վրայ հասան: Յովնանը մուրճի հարուածից թմրածի պէս էր. թշնամիներն ուսերի վրայ ձգելով ուտիկանի պալատը տարան: Բուղայի առաջ հանելու ժամանակ նա արդէն սթափուած էր:

Ի՞Բ

Բուղան իւր խոր ու մանր աչքերն ուղղեց Յովնանի վրայ ու հարցրեց.—Ո՞վ ես դու, անունդ ինչ է:—Իմ անունը Յովնան է:—Դու ես խութեցի Յովնանը, հարցրեց Բուղան ապշելով: —Այս, հէնց ես, եմ:—Աիս, զու գարշելի և անհաւատ շուն, ի՞նչպէս ես համարձակում այս քաղաքը մտնել. չես իմանում որ ես, մարգարէի յաջորդի փոխանորդը, այստեղ եմ նստում:

Յովնանն այս նախատինքներին պատասխանելու փոխարէն արհամարհանքով նայեց:—Հը, անպիտան շուն, պատասխան էլ չես տալիս ինձ. չես ճանաշում համ իմ կարողութեան սահմանը: Այս խօսքերն առելիս ատամները կրծեց և թուաւոր աչքերը վրէն սկսուեց: Յովնանը դարձեալ

անխոռվ մնաց ու սկսեց հանդարտ ձայնով խօսել. «առաջին՝ եթէ դու քու մարգարէի խօսքը յարդելիս լինէիր, ինձ երբէք անհաւատ չպէտք է անուանէիր, որովհետև ես էլ մի հատիկ Աստուած եմ հաւատում ու պաշտում, որ սաեղծել է երկինքն ու երկիրը: Երկրորդ՝ ինչու ես զարմանում համարձակութեանս վրայ. Խութեցի Յովնանը չէր, որ Եռևութին իւր զօրքերով Մուշի մէջ բնաշինջ արեց: Ես չէի, որ յիսուն հազարանոց բանակդ մաս-մաս ջարդեցի և փախցրի: Ես այն Յովնանն եմ, որ փոքր գնդով քու ժիրակ զօրավարին ջարդութշուր արի ու ծաղրի առարկայ դարձրի: Ես նա եմ, լաւ տես, որ այս Դուին քաղաքի դռան մօտ քու աչքերի առաջ իմ ազգի դաւաճաններին կախաղան հանեցի. Երկու հազար հոգով քու հազարաւոր հրոսակներին Շիրակում, Արտահանում, Արտանուշում խորտակեցի ու հաշլածական արի: Այժմ Աստուած Յովնանին մատնել է քու ձեռը. կարող ես նրան տանջել ու սպանել, այդ քու նման գաղանների գործն է, բայց նրան նախատել չպէտք է համարձակուի քեզ պէս մտքով տկարը, քեզ պէս սրտով գարշելին:

— Այդ վիճակի մէջ դեռ համարձակւում ես ինձ նախատել, անսլիտան ճիճու, չգիտե՞ս թէ ինչ կարող եմ անել քեզ: Քեզ պէս անօրէնը միայն այն պայմանով ողջ կը մնայ, երբ կուրանայ իւր հաւատն ու կընդունի մեր ճշմարիտ կրօնը, հետն էլ փառք ու պատիւ: Այն ժամանակ կը հասկա-

նաս Աստծու կարողութիւնը, որից մեր մարգարէն առել է իւր իշխանութիւնը: Այժմեան վիճակում դու մի եղեռնագործ ես, արաբների արիւնով շաղախուած: Քու ապստամբ սուրբ գեռ նորիմ զինուորներից տամներկու հոգի վիրաւորել, սպանել է: Թէպէտ ապստամբի պատիժը մահն է, բայց ես բացի կեանքդ շնորհելը, այլ և մեծութիւն կըտամ, եթէ արածներդ զղջաս ու մեր հաւատն ընդունես:

Յովնանն այս ամենին պատասխանեց հեգնական ծիծաղով: Բուղան շփոթուեց այդ ծիծաղի վրայ: Այդ ժամանակ Յովնանը դարձաւ այն մարդին, որ Բուղայի մօտ նստած եղէզը ձեռին հարցուփորձի համառօտութիւնը գրում էր: «Միրգա Հասան, ճշմարիտ ասա, միթէ ես քու կեանքը քեզ չը բաշխեցի»: Գրազիրը շուարած աշշքերը գէպի նա դարձրեց ու յանկարծ նրա պատկերը մտարելով ձեռի զրիչը թողեց, սարսափած տեղից վեր թուաւ աղաղակելով: Այն, այն, աւագակ, յիշում եմ երբ Խլաթ քաղաքում զիշերը մտար բնակարանս, ծառաներիս կապուեցիր, սպանեցիր ու իմ թիւը սեղմելով ջարդեցիր: Ի՞նչպէս կարող եմ մոռանալ, դու հազարապատիկ մահանուածնի ես: — Հասան, ես քեզ գաւայ հանուած երկրի մէջ, երբ ծառայում էիր մի խաբերայ յոց երկրի մէջ, երբ ծառայում էիր մի խաբերայ տիրոջ: Քու այդ տէրը մեր տիմար իշխաններին գրգռում էր գէպի մատնութիւն և բաջալերում, գրգռում էր հարիւր հազար աւագակներով մտնում էր երկու հարիւր հազար աւագակներով մտնում էր

իմ հայրենի երկիրը, սպանում, քանդում, նա աւագակ չէր, Յօ էի աւազակը։ Մի վայրկեան ընդունենք որ աւազակ էի, ի՞նչու չըպահանջեցի, որ կրօնդ ուրանաս, ինչու փողդ ետ դարձրի, միայն մի թուղթ առայ քեզնից. չէ որ կարող էի ծառաներդ, յիմար թղթերդ, բնակուած տունդ, ամենը կրակի մատնել ու մոխիր դարձնել: Եւ դու Բուղայ, համարձակուում ես ինձ աւազակ անուանել, որովհետեւ պաշտպանել եմ իմ հայրենի երկիրը, իմ կրօնի սրբութիւնը, որոնց համար մեռնելը հազար անգամ աչքիս տակն եմ առել: Ես իմ հաւատն ուրացող չեմ. հրամայիր, թող գան դահճճներդ, մարմինս քոնն է, տանջիր ինչպէս ուզում ես, ես ոչնչից վախեցողը չեմ: Իշխանութիւնդ այդտեղ էլ կը վերջանայ:

Նրա աչքերն այնպէս բոցավառուած ին, որ Բուղայի պէս վագրն անգամ սարսուռ զգաց. հրամայեց որ աչքից հեռացնելով բանդ տանեն ու շղթաներով ամրացնեն: Վայ բանդապետին, եթէ Յովնանը փախչէր: Յովնանին բոնող գրւ խաւորին կանչել տուեց ու պարզե չնորհեց:

Յովնանի համար խաւար բանտն ու շղթաների ծանրութիւնը ոչինչ էր. ընդհակառակն ըստացած նախատիքներն իրան պատիւ էր համարում: Քանի օր մնաց բանտի մէջ շղթայտծ: Արաբական զօրքի գլխաւորներն սկսած ժիրակից, ամենը գալիս էին «Սասունի լեռների դայլ»-ին տեսնելու, այդպէս էին անուանում Յովնանին:

Բայց նրա մեծ զլուխը, երկար մաղերը. կըակոտ աչքերը տեսնելով ակամայ ակնածութիւն էին զգում հեռանալիս, պատահողին ասում էին «Սասունի լեռների առիւծին» տեսանք:

Բուղան արշաւանք էր անելու, երկիրը ամեն կողմից խոռվութեան, երկունքի մէջ էր. Դուխնում երկար նստել չէր կարող. մի զիտուն մահմեղականի միջոցով վերջին փորձ արեց, որ Յովնանի հաւատը փոխել տայ, չեղաւ, Յովնանը համարուեց մահմեղական կրօնի համար. մի մեծ չարիք. ուրիշներին օրինակ չըստալու համար հարշկաւոր էր մէջտեղից վերացնել: Ուստի հետևեալ օրը մեծ զօրքով ու դահճճներով Յովնանին հանեցին բանդից ու շղթապատած տարան սպանման տեղը: Շղթաներից ծանրացած կռները բարձրացրեց վեր ու աղօթեց. «Տէր, գու հայ ժողովրդի ընձիւղը դալար պահես, որ կոփւը բռնաւորների դէմ անյուսահատ շարունակի, մինչև իւր մարդկային իրաւունքներին տիրանայ»: Ապա վիզը մեկնեց առաջ: Արաբ դահճի սուրը շողջողաց օգում ու իսկոյն կտրուած զլուխը զլորուեց գետնի վրայ: Ժողովուած ամբոխը ցրուեց դէսուդէն ցնծագին:

Քիչ ժամանակ անցած Սմբատ սպարապետը մտաւ բռնաւորի մօտ ու խորքեց որ սպանուածի մարմինն իրան տան:

Հետևեալ շաբաթ մի խումբ ձիաւորներ մի կառք Մշապատած գուրս էին զալիս Դուկինից.

խմբի առջեկց սևազգեստ մի բարձրահասակ կինք
ու քողով ծածկուած ձիավարում էր ուրիշ երկու
սևազգեստ կանանց հետ։ Լուսթիւն և սուգ պա-
հելով այդ կարաւանը հասաւ Բագարան։ Յովնա-
նի մարմինն էր կտորի մէջ։ Բազմութիւնն եկե-
զեցական դասի հետ տարաւ եկեղեցու դուռը,
խունկ ու մոմ ծխեց, մարտիրոսների շարական
երգուեց։ Ապա կարաւանն օրերով շարունակեց իւր
ճանապարհը մինչև հասաւ Արտանուշի գաւառը։
Մարմինն ամփոփուեց Մարատաւանի մայր եկե-
զեցու մէջ։ Ժողովուրդը մեծ յարգանքով ու սի-
րով յիշում էր սասունցի զօրավարին։ Մի տարի
չը քաշած Վասկանուշն իւր վանքի հանդէպ ձո-
րոխի ափի վրայ փոքր վկայարան շինել տուեց և
այնտեղ փոխադրեց իւր սիրելու մարմինը։ Սե-
ղանի առաջ մարմարէ կափարիչ դրուեց, վոէն
այս խօսքերը զրած. «Այստեղ հանգստանում է
խութեցի Յովնանը, նահատակուած քրիստոնէա-
կան հաւատի և բազմաչարչար հայ ազգի համար»։

Մի քանի տարուց ետ ձորոխի ափերի վրայ
շրջող անցաւորը նոյն վկայարանի մէջ ուրիշ գե-
րեզման էր տեսնում բոլորովին առաջինի նման,
որի արձանագրութիւնը հետեւեալն էր.

«Այստեղ երանելի նահատակի ոտքի մօտ
հանգստանում է Քրիստոսի աղախին, Բագրատու-
նի Վասականուշը»։ Արտանուշի ժողովուրդն ա-
մենայն տարի երախտագիտութիւնից շարժուած
գարնանային մի գեղեցիկ օր գալիս էր այս վկա-

յարանի շուրջը ծաղիկներ թափում գերեզման-
ների վրայ։ Ծերերը պատմում էին թէ ինչ մարդ
էր Յովնանը, թէ ինչպէս քաջ խմբի գլուխ ան-
ցած եկել է անթիւ արաբացի աւագակների ջըն-
ջել, և թշնամու աւարը ժողովրդին բաժանել։
Կանայք պատմում էին, թէ ինչ աննման կին էր
Վասականուշը և թէ ինչպէս ողորմած էր դէպի
ժողովուրդը։

Բայց ոչ ոք տեղեակ չէր, թէ որքան ար-
տասուել ու հառաչել են այս երկու անձինքը, ո-
րոնք շատ տարիներով իրարից բաժանուած՝ վեր-
ջապէս այժմ գերեզմանում իրար մօտ հանգստա-
նում էին։

ԽԳ.

Յովնանի մահից ետ զարհուրելի էր հայե-
րի վիճակը, գաւառներն իրանց ժողովրդով ա-
րաբացու ձեռին էին. Բուզայի անողորմ թաթը
մահու չափ ճնշում էր։

Բայց հայերի մէջ Յովնանի ըմբոսա հոգուց
դեռ մնացել էր. վրէժինդիր զնդի զօրավարնե-
րից Դուրգէնը կուռում էր յոյների դէմ. քառա-
սուն հոգով գուրս էր գալիս հազարի դէմ, սպա-
նում, զէնքերը կողոսպտում ու մնացողներին հա-
լածական անում։ Յոյներն անզօր լինելով՝ արաբ-
ներին էին օգնութեան կանչում ու նրանց հետ
միասին Գուրգէնի վրայ յարձակուամ։ Բայց սա
յաղթական առիւծի պէս Խոսրովի ընկերութեամբ

հնար էր գտնում չար դաշնակիցներին ջարդել
ու ամենի վրայ սարսափ տարածել: Միքայէլ կայս-
րը ճարտհատած խոստացաւ մեծամեծ պարզե-
ներ տալ Գուրգէնին, եթէ իւր մօտ գնայ: Նա լաւ
ճանաչելով յոյնի բարեկամութիւնը մերժեց ա-
ռաջարկը. նրա նպատակն էր գնալ Սմբատ սպա-
րապետի մօտ ու ապա նրա խորհրդով ոտնակոն
եղած հայրենիքի համար զործել: Խոսրով իշխա-
նը տիսուր էր, հայ գերիների թւում նրա 16 տա-
րեկան գուստըն էլ էր: Գուրգէնը գտաւ Խոսրո-
վի աղջկան մի թուրք ազգեցիկ տիկնոջ մօտ, որ
ստրկունի դարձրած ծառայեցնում էր:

Բուղան Դուինում չէր, նա խրոխտացած ար-
շաւել էր հիւսիս, Թիֆլիզի վրայ. քաղաքի շէն-
քերը մեծ մասով փայտից էին, տեղական իշխա-
նը թէկ մահմեդական էր, բայց չէր ուզեցել Բու-
ղային գլուխ վէր քերել, այդ պատճառով քաղա-
քը կրակի մատնուեց, ինքն իշխանն էլ սպանուեց:
Դրա փոխարէն մեծ ջարդ կերան արաբները կով-
կասեան ազգերից, մանաւանդ Աղուանից աշխար-
հի Եսայի իշխանից: Բուղայի այս պարտութիւն-
ների լուրն առնելով Վասպուրականի ժողովուր-
դը սկսեց աղստամբել, զէնքի դիմելով բոնաւոր-
ներին հալածել իւր միջից: Այս ապստամբութիւն-
ները Գուրգէնի սիրաը ցնծութիւնով լցնում էին.
բայց Սմբատ սպարապետը չէր թողնում Գուր-
գէնին իւր ձեռի տակից հեռանալ: Բուղան գա-
նազան խմբեր էր ուղարկում ապստամբների դէմ,

որոնք երբեմն յաղթում էին, երբեմն յաղթում:
էլ չը համբերեց Գուրգէնը. Սմբատ սպարապետին
բերեց այն համոզման, որ ժամանակ է միահա-
մուռ ուժով գործել. ինքը խոստանում էր քան
երեսուն հազարանոց զօրք կազմել Վասպուրա-
կանից, տաս հազար սասունցի և կիշեցնի լեռ-
ներից, թաղ սպարապետն էլ անմաս չը մնայ, իւր
Մոկս ու Շիրակ երկիրներից տաս հազար հոգի
դուրս բերի, այնուհետև կարելի է կաթողիկոսին
եկեղեցական գասի հետ ոտքի հանել ու սրբազն
պատերազմ սկսելով արաբներին Հայաստանից
դուրս վրնդել:

Ասեց Գուրգէնը և շտապեց իւր որոշումը
կատարելու: Մի քանի օրուան մէջ նրա շուրջը
գունդ գունդ պատերազմողներ ժողովուեցին:
Ջրջեց ողջ երկիրը, ուր տաճիկներ կային, ամե-
նին էլ հալածեց, սպանեց սրով, աղեղով, այնպէս
որ կարճ ժամանակում Վասպուրականի բոլոր տա-
ճիկներին ոչնչացրեց: Ժողովրդի ցնծութիւնը նրա
վրայ էր գալիս, որ Գուրգէնը իբրև յաղթող ա-
ռախճ ոչ ամբարտաւան էր և ոչ պահանջներ անող.
Նստում էր հասարակ շինականի հետ, յորդորում,
որ քաջ լինի, զինավարժութեամբ պարապի և ըն-
կերին օգնի:

Գուրգէնի անունը տարածուել էր բոլոր շըր-
ջակայքում, թշնամիթէ բարեկամ ակնածում էին
նրանից: Բուղան տեսնելով որ Գուրգէնին զօր-
քով յաղթելը դժուար է, ակամայ քաղցրացաւ,

ընծայ ուղարկեց իշխանական գօտի և պատուական նժոյգ, մի հրովարտակով էլ նրան վասպուրականի գլխապետ նշանակեց: Աշոտին տուեց Հայաստանի կառավարութեան հոգար, իսկ միւս հայ նախարարներին ժողովելով իւր հետ տարաւ հաղդատ: Ամիրապետը բոլորին ստիպեց, որ մահմեդական կրօն ընդունեն: Ամբատ սպարապետին ու տիկին Հոփիսիմէին անզամ բացառութիւն չարին, գցեցին բանդը սպառնալով. «Ճինչև ձեր հաւատը չուրանաք, լոյս աշխարհ չէք տեսնիլ»: Խեղճները տանջանքների մէջ շունչները փչեցին:

Աշոտ Բագրատունին խոհեմութիւնով երկիրը կառավարում էր: Իսկ Գուրգէնին հանդիսաւ չը տուին Աղծըրունի իշխանները: Գուրգէնն անթիւ անզամ թշնամի իշխանների որողայթն ընկնելով ու մի կերպ ազատուելով, իւր գաւառի հետ ոկրսեց Տարոնն էլ մաքրել թշնամիներից և ժողովը-դին հանգստացնել: Նա բռնաւորների սարսափն էր և հայ ժողովրդի մխիթարը: Օր ու գիշեր հանդիսաւ չունէր, անդադար շըջում էր: Այդ օրերին էր որ Խոսրովն անակնկալ երեաց ու նրան կնքած թուղթ տուեց: Հասցէն կարդալիս Գուրգէնը ճանաչեց թէ ում գիրն է. ձեռները դողացին, բաց արեց նամակը ու կարդաց հետևեալը: «Սիրելի Գուրգէն, Մուշեղը վախճանուեց, եթէ կըցանկանաս մի որբ տղայի հայր գառնալ ու Անձնացեաց վրայ իշխել, առանց ուշացնելու իմացարա: Վատասիրտ, չարալեզու մարդիկ մեր շուր-

ջը պատած են. Նայիր, տես սիրտդ ի՞նչ խորհուրդ է տալիս քեզ, նրա համեմատ էլ շարժուիր: Քո Հեղինէ»: — Ի՞նչո՞ւ չեմ ցանկանալ, գոչեց Գուրգէնը, բաւական չէր ինչքան չարչարուեցի: Խոսրով, վարդական կարգի ինչքան չարչարուեցի: Խոսրով, վարդական կարգի ինչքան չարչարուեցի:

Ամեն կարգադրութիւն արեց իւր գաւառի վերաբերեալ, բերգականներ նշանակեց և հազարի չափ ընափիր քաջեր վերցնելով գնաց Կանգուար, պասկուեց Հեղինէի հետ: Տարուայ գիտին մի կայտառ երեխայ ունեցաւ, որի կնքանայրը Խոսրովը դարձաւ: Գուրգէնը կնոջն ու զաւակին նայելով մինչև օրս կրած նեղութիւններն ու բաղդի հարուածները մոռացել էր: Երջանիկ որտով Աստծուն գոհութիւն էր մատուցանում, որ յանկարծ թիկնապահ Վահրիճը ներս մտաւ ու խօսեց. «Տէր իշխան, շատ ժամանակ առաջ ինձ պատուիրեցիր, որ իմանամ ով է Մարտիրոս վարդապետը, որ երեք մատնիչների համար թուղթ է գրել Շուղային: Ես այդ մարդին գտել եմ ու արդէն մի տարի է մեր բանդում նստած. Երբ պէտք է նրան գտատէք: — Ի՞նչպէս, Վահրիճ, Երբ, ո՞րտեղ ես գտել այդ չարագործին, բացականչեց Գուրգէնը զարմացած: — Հապա, տէր իշխան, անցեալ տարի Համադակերառում որս անելիս գնացի կիսաւեր վանք, վանահօր հետ ծանօթացայ. Ես միս հանեցի, նա պտուղ ու գինի. Աեղանը լցրինք ու սկսանք երկուսով պարտէ զում ժամանակ անցկացնել: Քաղցըր զրոյցի մէջ այդ վեղարաւորը սկսեց թուել թէ այս ու այն իշխանին ինչ ծառայութիւն է մատուցել Վերջը երբ գինովցած էր, սկսեց գաղափներ թոցնել բերանից, որից իմացայ թէ ինչ սոսկալի յանցանքներ է կատարել եպիսկո-

պոսական աստիճան ձեռ բերելու համար:

Գուրգէնը մեծահոգի էր, ուզում էր նրան ներել. իսկ Հեղինէն կարդաղրեց այսպէս. «Եթէ անմեղ է, պէտք է արձակել ու ներողութիւն էլ խնդրել, իսկ եթէ դաւաճան է, պէտք է խիստ պատուհասել: Գնա, Վահրիմ, այդ մարդին բեր ներս»:

Քիչ ժամանակից ետ Հեղինէն, Խոսրովը և Գուրգէնը գնացին հարցաքննութեան սենեակը, ուր Մարտիրոս վարդապետն սպասում էր. սա առանց ծածկելու ամեն ինչ պարզ խոստովանեց. թէ ինչպէս Հեղինէին գրած Դուրգէնի նամակը կեղծել էր, ինչպէս երեք դաւաճաններին խորհրդակից էր եղել Աշոտին մատնելու համար և վերջապէս ինչպէս մատնել էր Գուրգէնին եպիսկոպոսանալու յուսով և բոլորը դուր էր անցել: Հեղինէն իւր կողմից մահուան պատիժ որոշեց այդ ստոր հոգևորականի համար. բայց Խոսրովը այդ վճիռը անկատար թողնելով շղթայակապ ուղարկեց կաթողիկոսի մօտ: Հոգևոր աւրը հրամայեց անարժան վարդապետին Սևանում փակել մինչև իւր կեանքի վերջը:

Նրանից ետ շատ ուրախ տարինէր անցկացրին Գուրգէնն ու Հեղինէն իրանց զաւակներով և կառավարեցին իրանց երկիրն արդարութիւնով:

Շատ շլ քաշեց, մայր Հայաստանն էլ վերջապէս կարողացաւ սրբել իւր արտասուքը, երկար երկունք կրելուց ետ ունեցաւ իւր սիրելի գաւակը—Աշոտ թագաւորը 887 թուին, որի շը նորհով արիւնաշաղախ ցնցոտիները դէն զցելով հագաւ արքայական ծիրանին. այսինքն սկիզբ դրուեց հազրատունեաց թագաւորութեան:



Առանձին գրքոյինեցով լոյս տեսած աշխատութիւններս.

1. Ասուած շրմանաչող	.	.	.	10	կ.
2. Անմեռ աշխարհ	.	.	.	8	—
3. Ասուած աղքատի կերպում	.	.	.	20	—
4. Գալօ տփօ, Խաչան, բ. տպագ.	.	.	.	12	—
5. Երկու աղբերացեղ, բ. տպագրութիւն.	.	.	.	30	—
6. Ժամանակը ոսկի. պատկերազարդ	.	.	.	40	—
7. Ծովիճար բ. տպագ. սակաւաթիւ	.	.	.	20	—
8. Հեքիաքներ	.	.	.	30	—
9. Նեն բազաւոր, բ. տպագ.	.	.	.	20	—
10. Խովլ Խաչիկ, բ. տպագ.	.	.	.	25	—
11. Սիրելի հերոս կամ բաջ Աղասի.	.	.	.	25	—
12. Փոքր գրուածներ, ա. կապուկ.	.	.	.	40	—
13. Սասունցի Յովինան,	.	.	.	30	—

Հարցնել Թիֆլիզի գրավաճառների մօս

Շուտով լոյս կը տեսնի «Ազգային առակենքներ» գրքոյկը:

Գրքոյիներից մեծ քանակութեամբ գնողներին
նշանաւոր զիջում:

Հեղինակի հասցէն՝ Ներս, դպր, ուս, Քամաւանց Ս.-ին.

ՀՀ Ազգային գրադարան



NL0369941

60363